


ՀՀ գիտութեան համակարգի
համագիտութեան եւ մշակութեան համագործակցութեան
հաստատութիւն

ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ

XI

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ
ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐ

ԵՐԵՎԱՆ - 1998



✓
ՀՀ գիտութեամբ աշխատող և պատմական
հետազոտողներու եւ պատմագրողներու հետազոտութեան

008(479.25)

A II
85039

ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ

XI

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆԱԽԱՇԻՐՁԱՆ
ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐ

պրոֆ. Կարո Ղաֆադարյանի
հիշատակին

ԵՐԵՎԱՆ - 1998

Տպագրված է ՀՀ ԳԱԱ
ինագիտության և ազգագրության ինստիտուտի
Գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիրներ՝

Ա.Ա.Քալանթարյան

Ս.Բ.Հարությունյան

Ответственные редакторы:

А.А.Калантарян

С.Б.Арутюнян

Культура Древней Армении

XI

Тезисы докладов
(на армянском языке)
ЕРЕВАН - 1998

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Արամ Զալանթարյան, Գրիգոր Կարախանյան (ՀԱԻ). - ԿԱՐՈ ՂԱՖԱՂԱՐՅԱՆ.....	7
Ալթունյան Սիրիան (ՀԱԻ). - ՀԱՍՏԵՆԻ ԳԱՆԳԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԴԵՄՔԻ ՎԵՐԱԿԱՆԳՆԱՆ ԱՌԱՆՁՆԱԴԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՄԵԿԻ ՄԱՍԻՆ.....	10
Բաբայան Ֆրիմա (ՀԱԻ). - ԽԵՑԵՂԵՆԻ ՀԱՐԱՐԱՐՄԱՆ ԱՍՏՈԱԶԵՎ ՋԱՐԴԻ ՇՈՐԻՋ	11
Բեգլարյան Պրայա (Սևան). - ԴԱՐՁՅԱԼ «ՄԱԴԿԱՆԱ» ԿՈՉՎԱԾ ՀԱՐԿԱՏԵՍԱԿԻ ՄԱՍԻՆ	12
Բորոխյան Արսեն (ՀԱԻ). - ԾՈՓՔԻ ԳՈՒՆԱԶԱՐԴ ԽԵՑԵՂԵՆԸ Մ.Թ.Ա. III-IV ՀԱԶ. ՄԱՀԱՄԱՆԻՆ.....	13
Գասպարյան Բորիս (ՀԱԻ). - ԾԻԾԵՆԱԿԱԲԵՐԴ-2 ՊԱՆԵՈՒԹՅԱՆ ՆՈՐԱՀԱՅՑ ՔԱՐԱՅՐ-ԿԱՑԱՐԱՆԸ	15
Գասպարյան Ռուբիկ (ՀԱԻ), Գրիգորյան Կարեն (ՀԱԻ). - ՎԻՍԱԳՐԱԿԱՆ ՆՈՐՈՒՅՈՒՆԵՐ.....	16
Геворкян Арам, Мандрикан Сергей (ИАЭ). - ДЛИННЫЕ МЕЧИ И РАПИРЫ ЗАКАВКАЗЬЯ	18
Դևեջյան Սեդա, Ավետիսյան Պավել (ՀԱԻ). - ԼՈՌԻ ԲԵՐԴԻ ԴԱՍԲԱՐԱՆԱԴՇԻ 1996-97 թթ. ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ	20
Եգանյան Լարիսա (ՇԵԹ, ՇՀԴ). - ԿՐԱԿԸ ԴՐԱՍԽԱՆԱԿԵՐՏԻ ԱՆՏԻԿ ԴԱՍԲԱ- ՐԱՆԱԴՇԻ ԹԱՐՄԱՆ ԾԻՍԱԿԱՐԳՈՒՄ	22
Երիցյան Բենիկ (ՀԱԻ). - ՀԱՍԳԻՏԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՐԱՍԲԱՐԱՆԱԿԱՆ ՄՈՂԵԼԸ	23
Թադևոսյան Սամվել (ՀԱԻ). - ՎԵՐԻՆ ՊԱՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՂԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՐԻ ԴԱՐԻ ՊԱՐԲԵՐԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ	24
Թումանյան Գարեգին (ՀԱԻ), Բաշիկյան Իզաբելա (ՀԱԻ). - ՄԵՎԱՆԻ ԱՎԱԶԱՆԻ ՀԱՍԳԻՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ԲՈՐՈՋ-ԵՐԿԱԹԵՂԱՐՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐԱՆԻ ՎԵՐԳԵՏՆԱՅԱ ԽԵՑԵՂԵՆԸ	26
Ժամկոչյան Աղավնի (ՀԱԻ). - ՎԱՐՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԵՎՏՐԱ- ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ	28
Իսահակյան Տիգրան (ՀԱԻ). - ԿԱԿԱՆՈՒՆԵՐԻ ՋԱՐԱՐԱՐՄԱՆ ՄԻ ԵՂԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ	29
Խանգաղյան Էմմա (ՀԱԻ). - ՄԵԾԱՍՈՐՆ ՈՒ ՎԱՐ ԲՈՐՈՋԻ ԴԱՐԱՇՐՁԱՆԸ	30
Խաչատրյան Համազասպ (ՇԵԹ, ՇՀԴ). - ԲԵՆԻԱՄԱՆԻ ՀԵԼԵՆԻՍԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐԱՆԻ ԽԵՑԵՂԵՆԸ	31
Худавердян Анаит (ИАЭ). - СТАТИСТИЧЕСКИЕ МЕТОДЫ ИССЛЕДОВАНИЯ БЕНИАМИНСКОГО МОГИЛЬНИКА	33
Կարապետյան Ինեսա (ՀԱԻ), Խաչատրյան Շոթես (ՀԱԻ), Կանեցյան Ամինա (ՀԱԻ), Ղաֆարյան Գրիգոր (ՀԱԻ), Թրայան Ջուստո (Իտալիա). - ԱՐՄԱՎԻՐՈՒՄ 1996- 1997թթ. ԿԱՍԱՐՎԱԾ ՀԱՍԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ	35
Հակոբյան Հայկ (ՀԱԻ). - ՊԱՏԿԵՐԱԳՐՎԱԾ ԿԱԿԵ ՄԱՆԵՐ ՀՅՈՒՄԱՆԻՏԻ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ	36
Հակոբյան Նյուրա (ՀԱԻ). - ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՋԵՆՔԵՐՆ ՈՒ ՋՈՐԱՏԵՍԱԿՆԵՐԸ	38
Հմայակյան Սիմոն (ՀԱԻ), Հակոբյան Հայկ (ՀԱԻ), Բիշոնե Ուֆայելե (ՄԵԱԻ, Հոռոմ), Պարմեջիանի Նեդա (ՄԵԱԻ, Հոռոմ). - ՄԵՎԱՆԻ ԱՎԱԶԱՆՈՒՄ ՀԱՅ-ԻՏԱՆԱԿԱՆ ԱՐՇԱԿԱՆԱԲԻ 1996-1997թթ. ԿԱՍԱՐԱԾ ՌԻՍԿԱՆԱԲԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ	39
Հմայակյան Սիմոն (ՀԱԻ), Սանսանյան Հովհաննես (ՀՀԴԿԻ). - ՄԵՎԱՆԱ ԼՃԻ ՀԱՐԱԿԱՅԻՆ ԱՎԱԶԱՆԻ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ	41
Մաթևոսյան Ուֆիկ (ՊԻ). - ԿԱՅԱՆ ԲԵՐԴԻ ԱՌԵՂՉՎԱԾԸ	43

Մանուշարյան Աշոտ (ՀԱԻ). - ՌԻՄ ԿԱՌՈՂ Է ՊԱՏԿԱՆԵԼ ՍԱՆԱԴՆԻ ՆՈՐԱԴԱՅՏ ՏԱՊԱՆԱԲԱՐԸ	44
Մելքոնյան Հուսիկ (ՀԱԻ). - ՎԱՅՈՑ ՉՈՐԻ ԵՐԿՈՒ ՀՈՒՇԱՐՉԱՆՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՐԻՋ	45
Мирзоян Лилит (ПИ), Габриелян Иван (ИБ), Бадалян Рубен (ИАЭ), Тедеско Лаура (Нью-Йоркский университет (США). - ПАЛЕОЭТНОБОТА- НИЧЕСКИЕ МАТЕРИАЛЫ ОРОМА (эпоха поздней бронзы- железа)	47
Мхитарян Марине (ИАЭ). - ДРЕВНЯЯ ТОРГОВАЯ МЕТАЛЛОМ В ЭГЕЙСКОМ МИРЕ	50
Սարյան Հրաչ (ՇԵԹ, ԵՊՀ). - ՇԻՐԱԿԻ ԵՐԿՐԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՈՒՇ ԲՐՈՆԶԵՂԱՐՅԱՆ ԱՇԽԱՏԱՆԱԲԱՐՅԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ	51
Պետրոսյան Լևոն (ՀԱԻ). - ԼԵԱՇԵՆԻ ԹԻՎ 55 ՂԱՐԱՐԱՆԸ	52
Պետրոսյան Համլետ (ՀԱԻ), Եպիսկոպոսյան Լևոն (ԱՊՀ), Սարյան Յուրի (ԱՊՀ), Սաֆարյան Վարդգես (ԱՊՀ), Բալայան Վահրամ (ԱՊՀ), Հովսեփյան Վլադիմիր (ԱՊՀ). - ՀԵՏԱԽՈՒՉԱԿԱՆ ՊԵՂՈՒՄՆԵՐ ԱՐՑԱԽԻ ՔԱՐԱՔԼՈՒՐ ՀՆԱՎԱՅՐՈՒՄ	53
Սարգսյան Գագիկ (ՀԱԻ). - ՎԱԿԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՎԻՍԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ	54
Սիմոնյան Հակոբ (ՀՀԳԽ). - ԱՆԹԱՄԻՐԸ ՆԵՈԼԻԹ-ԽԱԼԿՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ	56
Սիմոնյան Հակոբ (ՀՀԳԽ). - ՊԵՂՈՒՄՆԵՐ ԾԻԾԵՆՆԱԿԱՆՔՈՒՄ	60
Тер-Мартirosов Феликс (ИАЭ). - АНАЛИЗ КЕРАМИЧЕСКОГО МАТЕРИАЛА АРМЕНИИ VI-III BB. ДО Н.Э	62
Փալանջյան Ռուզան (ՀԱԻ). - ԱՄՈՍԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆՔԻ ՀՈՉԱԿԱԾ ՎԱՅՐԻ ՏԵՂԱՅՆԱՑՄԱՆ ՓՈՐՉ	63
Փիլիպոսյան Աշոտ (ՀԱԻ). - ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՈՆԱՇԽԱՐՀԻ Մ.Թ.Ա. III-IV ՀԱԶ. ՀՈՒՇԱՐ- ՉԱՆՆԵՐԻՑ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԾՈՎԱԽԵՑԻՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԿԶՔՆԱԴՔՅՈՒՐ	64
Փիլիպոսյան Աշոտ (ՀԱԻ), Սկրտչյան Ռուզան (ՀԱԻ). - ՆԱԴԱՊԵՏԻ ՖԵՆՈՍԵՆՆ ԸՍՏ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՄԱՐԴԱՔԱՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ	66
Քալանճարյան Արամ (ՀԱԻ). - ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱՔԱՆՈՒԹՅԱՆ ՇՈՐԻՋ	68
Քոչարյան Գայանե (ՀԱԻ). - ԱՐՏԱՇԱՏԻ ՄԵՐՉՔԱՐԱԲԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆԵՐՈՒԺԸ	69
Քոչարյան Գայանե (ՀԱԻ). - ՆՈՐ ԱՆԴՐԱԴԱՐՉ ԴՎԻՆ ՏԵՂԱՆՎԱՆԸ	71

СОДЕРЖАНИЕ

Калантарян Арам (ИАЭ), Караханян Григор (ИАЭ). - КАРО КАФАДАРЯН.....	7
Акопян Айк (ИАЭ). - ГЛИНЯНЫЕ ПЛИТЫ СО ШТАМПОВАННЫМ ИЗОБРАЖЕНИЕМ ИЗ СЕВЕРНОЙ АРМЕНИИ.....	36
Акопян Нюра (ИАЭ). - ОРУЖИЕ И ВИДЫ ВОЙСК СРЕДНЕВЕКОВОЙ АРМЕНИИ.....	38
Алтунян Мигран (ИАЭ). - ОБ ОДНОЙ ИЗ ОСОБЕННОСТЕЙ РЕКОНСТРУКЦИИ ЛИЦА ПО ДРЕВНЕМ ЧЕРЕПАМ	10
Амаякян Симон (ИАЭ), Акопян Айк (ИАЭ), Бишопе Рафаеле (ИМЭАИ, Рим), Пармеджияни Неда (ИМЭАИ, Рим). - РЕЗУЛЬТАТЫ ИССЛЕДОВАНИЙ, ПРОИЗВЕДЕННЫХ АРМЯНО-ИТАЛЬЯНСКОЙ ЭКСПЕДИЦИИ В СЕВАНСКОМ БАССЕЙНЕ В 1996-1997гг.....	39
Амаякян Симон (ИАЭ), Санамян Ованнес (ГРСАП). - ОБ ОБОРОНИТЕЛЬНОЙ СИСТЕМЕ ЮЖНОГО БАССЕЙНА ОЗЕРА СЕВАН.....	41
Бабаян Фрипа (ИАЭ). - ВОКРУГ ЗВЕЗДООБРАЗНОГО УЗОРА ДЛЯ УКРАШЕНИЯ КЕРАМИКИ.....	11
Бегларян Рачья (СЕВАН). - СНОВА О ДАНИ "МАХКАНА".....	12
Бобохян Арсен (ИАЭ). - РАСПИСНАЯ КЕРАМИКА ЦОПКА НА РУБЕЖЕ III-II ТЫС. ДО Н. Э.	13
✓ Гаспарян Борис (ИАЭ). - НОВОВЫЯВЛЕННАЯ ПАЛЕОЛИТИЧЕСКАЯ ПЕЩЕРА-СТОЯНКА ЦИЦЕРНАКАБЕРД-2	15
Гаспарян Рубик (ИАЭ), Григорян Карен (ИАЭ). ЭПИГРАФИЧЕСКИЕ НОВИНКИ.....	16
Геворкян Арам (ИАЭ), Мандрикан Сергей (ИАЭ). - ДЛИННЫЕ МЕЧИ И РАПИРЫ ЗАКАВКАЗЬЯ.....	18
Деведжян Седа (ИАЭ), Аветисян Павел (ИАЭ). - РЕЗУЛЬТАТЫ РАСКОПОК НЕКОПОЛЯ ЛОРИ БЕРД В 1996-1997гг	20
Еганян Лариса (ШКМ, ШЦАИ). - ОГОНЬ В ПОГРЕБАЛЬНОМ РИТУАЛЕ АНТИЧНОГО НЕКРОПОЛЯ ДРАСХАНАКЕРТА	22
Ерицян Беник (ИАЭ). - ЛОГИЧЕСКАЯ МОДЕЛЬ АРХЕОЛОГИЧЕСКОЙ КУЛЬТУРЫ	23
Жамкоян Агавни (ИАЭ). - ИЗ ИСТОРИИ ТОРГОВО-КУЛЬТУРНЫХ ВЗАИМООТНОШЕНИЙ РАННЕ-СРЕДНЕВЕКОВОЙ АРМЕНИИ.....	28
Исаакян Тигран (ИАЭ). ОБ ОДНОМ СПОСОБЕ УКРАШЕНИЯ ГЛИНЯНЫХ СОСУДОВ	29
Калантарян Арам (ИАЭ). - ВОКРУГ АРХЕОЛОГИЧЕСКОЙ ТЕРМИНАЛОГИИ.....	68
Карапетян Инеса (ИАЭ), Хачатрян Жорес (ИАЭ), Канемян Аминия (ИАЭ), Кафадарян Григор (ИАЭ), Трайна Джусто (Италия). - РЕЗУЛЬТАТЫ ПРОИЗВЕ- ДЕННЫХ В 1996-1997гг. В АРМАВИРЕ АРХЕОЛОГИЧЕСКИХ РАБОТ....	35
Кочарян Гаяне (ИАЭ). - ЭКОНОМИЧЕСКИЙ ПОТЕНЦИАЛ АРТАШАТСКОЙ ХОРИ	69
Кочарян Гаяне (ИАЭ). - НОВОЕ ОБРАЩЕНИЕ К ТОПОНИМУ ДВИН.....	71
Манучарян Ашот (ИАЭ). - КОМУ МОГЛА ПРИНАДЛЕЖАТЬ НОВОВЫ- ЯВЛЕННАЯ НАДГРОБНАЯ ПЛИТА ИЗ САНАИНА	44

Матевосян Рафик (ИИ). - ЗАГАДКА КРЕПОСТИ КАЯН	43
Мелконян Усик (ИАЭ). - ВОКРУГ ВОПРОСА ЛОКАЛИЗАЦИИ ДВУХ ПАМЯТНИКОВ ВАЙОЦ ДЗОРА	45
✓ Мирзоян Лилит (ПИ), Габриелян Иван (ИБ), Бадалян Рубен (ИАЭ), Тедеско Лаура (Нью-Йоркский университет, США). - ПАЛЕОЭТНОБОТАНИ- ЧЕСКИЕ МАТЕРИАЛЫ ОРОМА (эпохи поздней бронзы, железа)	47
Мсрян Рач (ШКМ, ЕГУ). - КОЛЛЕКЦИЯ ОРУДИЙ ТРУДА ПОЗДНЕБРОНЗОВОЙ ЭПОХИ ИЗ ШИРАКСКОГО КРАЕВЕДЧЕСКОГО МУЗЕЯ	51
Мхитарян Марине (ИАЭ). - ДРЕВНЯЯ ТОРГОВЛЯ МЕТАЛЛОМ В ЭГЕЙСКОМ МИРЕ	50
Паламджян Рузан (ИАЭ). - ОПЫТ ЛОКАЛИЗАЦИИ ЗНАМИНИТОЙ МЕСТНОСТИ ПО ПРОИЗВОДСТВУ АМОМ	63
Петросян Гамлет (ИАЭ), Епископосян Левон (АГУ), Асрян Юрий (АГУ), Балаян Ваграм (АГУ), Овсепян Владимир (АГУ). - РАЗВЕДЫВАТЕЛЬНЫЕ РАСКОПКИ В ПАМЯТНИКЕ КАРАБУР АРЦАХА	53
Петросян Левон (ИАЭ). - ЛЧАШЕНСКОЕ ПОГРЕБЕНИЕ 55	52
Пилюссян Ашот (ИАЭ). - МОРСКИЕ РАКУШКИ, ОБНАРУЖЕННЫЕ ИЗ ПАМЯТНИКОВ АРМЯНСКОГО НАГОРЬЯ III-II ТЫС. ДО Н. Э. КАК ПЕРВОИСТОЧНИК ДЛЯ АРХЕОЛОГИЧЕСКИХ И ЭТНОГРАФИЧЕСКИХ ИССЛЕДОВАНИЙ	64
Пилюссян Ашот (ИАЭ), Мкртчян Рузан (ИАЭ). - ФЕНОМЕН ПАТРИАРХА ПО АРХЕОЛОГИЧЕСКИМ И АНТРОПОЛОГИЧЕСКИМ ДАННЫМ	66
Саргисян Гагик (ИАЭ). - ВОПРОС ДОКУМЕНТАЛЬНОСТИ В ЭПИГРАФИКЕ	54
✓ Симонян Акоп (ГРСАП). - АХТАМИР В ЭПОХУ НЕОЛИТ-ХАЛКОЛИТА	56
✓ Симонян Акоп (ГРСАП). - РАСКОПКИ В ЦИЦЕРНАВАНКЕ	60
✓ Тадевосян Самвел (ИАЭ). - МЕСТО ВЕРХНЕГО ПАЛЕОЛИТА В СИСТЕМЕ ПЕРИОДИЗАЦИИ КАМЕННОГО ВЕКА АРМЕНИИ	24
Тер-Мартirosов Феликс (ИАЭ). - АНАЛИЗ КЕРАМИЧЕСКОГО МАТЕРИАЛА АРМЕНИИ VI-III ВВ. ДО Н. Э.	62
Туманян Гарегин (ИАЭ), Башикян Изабелла (ИАЭ). - ПОДЪЕМНАЯ КЕРАМИКА ЭПОХИ БРОНЗЫ-ЖЕЛЕЗА ИЗ АРХЕОЛОГИЧЕСКИХ ПАМЯТНИКОВ БАССЕЙНА СЕВАН	26
✓ Ханзадян Эмма (ИАЭ). - МЕЦАМОР И ЭПОХА РАННЕЙ БРОНЗЫ	30
Хачатрян Амазасп (ШКМ, ШЦАИ). - БЕНИАМИНСКАЯ КЕРАМИКА ЭЛЛИНИСТИЧЕСКОГО ВРЕМЕНИ	31
Худавердян Анаит (ИАЭ). - СТАТИСТИЧЕСКИЕ МЕТОДЫ ИССЛЕДОВАНИЯ БЕНИАМИНСКОГО МОГИЛЬНИКА	33

ԿԱՐՈ ՂԱՖԱԴԱՐՅԱՆ

Բազմավաստակ գիտնական, հայագետ, Հայաստանի հնագիտության ճանաչված հեղինակություն, գիտության վաստակավոր գործիչ պրոֆ. Կարո Գրիգորի Ղաֆադարյանի՝ մեր ժողովրդի պատմությանն ու մշակույթին նվիրված գիտական բազմաբնույթ վաստակը նշանավորվել է հայագիտության անդաստանում արժեքավոր ներդրումով՝ ութ սովորածավալ մենագրություններով և նրա գիտական երաշխիքի ոչ պակաս կարևոր մաս կազմող բազմաթիվ հոդվածներով:

Կարո Ղաֆադարյանը ծնվել է 1907թ., Ախալցխի քաղաքում: 1931-ին ավարտելով Երևանի համալսարանի պատմագրական ֆակուլտետի պատմության բաժինը, որպես գիտաշխատող աշխատում է նախ Էջմիածնի Ձեռագրատուն-Մատենադարանում, ապա 1932-1940 թթ. Գրականության և պատմության ինստիտուտում: Այդ տարիներին նա տպագրում է «Հայկական գրի սկզբնական տեսակները», «Ալքիմիան պատմական Հայաստանում» ուսումնասիրությունները, որոնք պատկանում են Մելքոնյան մրցանակով: 1940թ. ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի Հայկական մասնաճյուղի նախագահությունը Կ.Գ. Ղաֆադարյանին նշանակում է Հայաստանի պատմության պետական թանգարանի տնօրեն, և այդ պաշտոնում նա աշխատում է շուրջ 25 տարի: 1959թ. ՀՍՄՀ ԳԱ Հնագիտության և ազգագրության նորակազմ ինստիտուտում նա ստանձնում է բաժնի վարիչի պաշտոն և մինչև իր մահկանացուն կնքելը զլխավորում ինստիտուտի միջին դարերի հնագիտության բաժնի աշխատանքները: 1953 թվականին «Դվին քաղաքը և նրա պեղումները» գրքի /առաջին հատոր/ համար նրան շնորհվում է պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: 1961թ. գիտությանը մատուցած ծառայությունների համար պրոֆեսոր Կ.Գ. Ղաֆադարյանին շնորհվում է գիտության վաստակավոր գործիչ կոչում: Տասնամյակներ անընդմեջ նա զլխավորել է ՀՍՄՀ ԳԱ նախագահությանն առընթեր Մշակույթի հուշարձանների պահպանության գիտամեթոդական խորհրդի աշխատանքները: Նա կյանքից հեռացավ 1976-ին:

Ընդարձակ է Կարո Ղաֆադարյանի հետաքրքրությունների շառավիղը՝ հայոց պատմություն, հնագիտություն, վիճագրություն, թանգարանագիտություն: Մեծ է Կ.Գ. Ղաֆադարյանի դերը հայ հնագիտության զարգացման ոլորտում: 30-40-ական թթ. նա մասնակցել է Վաղարշապատի, Ամբերդի, Երևանի Կաթողեկեի, Ավանի, Կարմիր Բլուրի արշա-

վախմբերի աշխատանքներին: 1946թ. սկսած, երեսուն տարի անընդմեջ, ղեկավարել է Հայաստանի միջնադարյան մայրաքաղաք Դվինի հնագիտական արշավախումբը, որի արդյունքներն ու հայտնաբերված նյութերը հանդիսացան հռչակ վայելած քաղաքի՝ արհեստագործության և առևտրական գործարքների կարևոր կենտրոն լինելու մասին հայ և օտար աղբյուրների հաղորդած վկայությունների նյութականացումն ու առարկայական վավերացումը: 1952թ. Կ.Գ.Ղաֆադարյանը մասնագետների ուշադրությանն է հանձնում «Դվին քաղաքը և նրա պեղումները» խորագրով աշխատության առաջին հատորը՝ նվիրված Դվինի հնագիտական արշավախմբի 1937-1950թթ. աշխատանքների արդյունքներին: Այս աշխատության մեջ հանգամանորեն քննության են առնվել քաղաքի ներքին կյանքի, կենցաղի, ամենաավանդական, ընդհանրական պահանջ ունեցող արհեստների տնտեսական կապերի հետ առնչվող խնդիրներ, ներկայացված են քաղաքի ճարտարապետական կենսագրության շղթայի գլխավոր օղակները՝ Դվինի կաթողիկե եկեղեցին, կաթողիկոսական պալատը, միջնաբերդի շինությունները և այլ կառույցներ: Աշխատության երկրորդ հատորում /1982թ./ ներկայացված են Դվինի հնագիտական արշավախմբի 1951-1972թթ. աշխատանքների արդյունքները, նորահայտ ճարտարապետական հուշարձանները, քաղաքի կենտրոնական թաղամասում, միջնաբերդում հայտնաբերված վիթխարաքանակ առաջնակարգ հնագիտական նյութերը:

Կ.Գ.Ղաֆադարյանի գիտական ժառանգության մեջ առանձնակի տեղ է զբաղեցնում նրա գիտական արգասավոր կյանքի ճանապարհին մշտապես ուղեկցած վիմագրությունը: Նա մշակել էր պատմական գիտության այդ առաջնակարգ սկզբնաղբյուրները հրատարակելու իր ուրույն սկզբունքները: Նա ներկայացնում էր ճարտապետական հուշարձանի մատենագրական պատմությունը, կատարում վերլուծություն, զետեղում չափագրություններ, արձանագրությունների գծանկարներ, լուսանկարներ, կատարում վերծանություններ ու դրանք օժտում հմտալից ծանոթագրություններով: Այդ սկզբունքով են կյանքի կոչվել պրոֆ. Կ.Գ. Ղաֆադարյանի Հովհաննավանք, Սանահին, Հաղբատ հուշարձանախմբերին և Երևանի վիմագիր հիշատակարաններին նվիրված մեծարժեք աշխատությունները:

Պաշտամունքի էր հասնում նրա ակնածանքը հայ ժողովրդի մշակույթի մեծերի նկատմամբ: Կ.Գ.Ղաֆադարյանը Հայրենական Մեծ պատերազմի դժվարին տարիներին իր խորին հարգանքն է մատուցում Թորոս Թորամանյանի հիշատակին: Ազգային թանգարանի տնօրենի ծանր աշխատանքի պայմաններում, անսահման սիրով և վիթխարի ջանքերի գնով գլուխ է բերում հայկական ճարտարապետության ուսումնասիրության հիմնադիր Թ.Թորամանյանի գիտական ժառանգության սովորաժամալ երկհատոր հրատարակությունը:

Պրոֆ. Կ.Գ. Ղաֆադարյանի գործունեության մեջ առանձնահատուկ տեղ է զբաղեցնում գիտակազմակերպական աշխատանքը: Թանգարանի տնօրենի հոգսաշատ պարտականությունն ստանձնելով՝ նա իրեն ամբողջովին նվիրում է մեր ազգային թանգարանը վերածնելուն: Թանգարանային խոր իմացություններով օժտված Կ.Գ. Ղաֆադարյանը ստեղծել է հայ ժողովրդի հազարամյակներից եկող մշակույթի բազմախոս, բյուրավոր նյութերի, այսօր էլ այցելուին ներկայացվող պատմական բոլոր ժամանակաշրջաններն ընդգրկող գիտական հիմնական ցուցադրություն: Մեծ է հատկապես նրա ծառայությունը Հայաստանի պատմության մեծահամբավ թանգարանը՝ իր լուսավորա-մշակութային գործառնությին զուգահեռ հայագիտության լուրջ օջախի վերածնան գործում:

Կ.Գ. Ղաֆադարյանը իր գիտահետազոտական և գիտա-կազմակերպական աշխատանքները հմտորեն զուգակցում էր գիտա-մանկավարժական արդյունավետ գործունեությանը: Նա երկար տարիներ Հայաստանի հնագիտությանը, հայ մշակույթին նվիրված դասախոսություններ է կարդացել Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում, ուսանողությանը փոխանցել իր իմացություններն ու հմուտ փորձը, երիտասարդությանը ներկայացրել մեր մշակույթի խորությունն ու վեհությունը: Նա ղեկավարել է բազմաթիվ ասպիրանտների, նրանց համար եղել է ուսուցիչ, հենարան, խորհրդատու: Բարձր են գնահատվել պրոֆ. Կ.Գ. Ղաֆադարյանի գիտությանը մատուցած ծառայությունները: Նա պարգևատրվել է շքանշաններով և մեդալներով: Իսկական գիտության շահագրգռություններով ապրող, խստապահանջ գիտնակներ կյանքում երբեք չակնկալեց շռայլ գովեստներ: Ապրեց միշտ համեստ ու միշտ խանդավառ կյանքով: Կյանքից հեռանալու սեմին հաճախ էր ցավով նշում, թե կյանքն ընդամենը մի փոքր փախուստ է մահից: Նա ապրեց հպարտ և կյանքից հպարտ հեռացավ՝ յոթանասունն անգամ չբոլորած:

ՀՆԱՄԵՆԻ ԳԱՆԳԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԴԵՄՔԻ ՎԵՐԱԿԱՆԳՆԱՍԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՄԵԿԻ ՄԱՍԻՆ

Հնագիտության և ազգագրության ինստիտուտի մարդաբանական լաբորատորիայում կատարվող գանգերի մարդաբանական վերականգնումների ժամանակ, հիմնականում ելակետ ունենալով դասական վերականգնման սկզբունքները, առանձին դեպքերում անհրաժեշտաբար կիրառվել են նաև առանձնահատուկ մոտեցումներ:

Հայաստանի տարածքում պեղումներից հայտնաբերված հնամենի գանգերի միջոցով դեմքի վերականգնման ժամանակ նկատեցինք, որ այլաստիկ ռեկոնստրուկցիան առանձին դեպքերում շեղվում է ընդհանուր օրենքներից: Ձեռնամուխ լինելով դրսևորվող շեղումների մանրամասների պարզաբանմանը՝ նկատեցինք, որ շեղումը վերաբերում է հատկապես քթի ռեկոնստրուկցիային: Նշված շեղումն իր ժամանակին նկատել էր նաև պրոֆ. Ա. ճաղարյանը: Գանգի միջոցով դեմքի գրաֆիկ վերականգնման ժամանակ, երբ գծային արտահայտմամբ վերականգնվում է դեմքը երիզող ուրվագիծը, կարևոր հատված է կազմում քթի պրոֆիլը: Ըստ դասական ռեկոնստրուկցիայի օրենքների՝ (Մ. Գերասիմով, Գ. Լեբեդինսկայա) քթի պրոֆիլը վերականգնելու համար, անհրաժեշտ է քթոսկրը բաժանել երեք հատվածի և ստորին հատվածի ուղղությամբ շարունակելով ուրվագիծը, ստանալ քթի ծայրն այն կետում, որտեղ նա կհատվի քթի առաջնային փշից եկող գծի հետ: Մեր ռենտգենաբանական հետազոտությունները (պրոֆիլ նկարահանումներ, 87 դեպք) բազմիցս ցույց են տալիս, որ քթի վերականգնման վերոհիշյալ մեթոդը, հատկապես քթի ընդգծված կորության (արծվաքիթ) դեպքում, զգալիորեն շեղվում է փաստացի վիճակից: Այդ իսկ պատճառով մենք առաջարկեցինք, ի տարբերություն Գերասիմով-Լեբեդինսկայա մեթոդի, քթոսկրը բաժանել ոչ թե երեք, այլ չորս մասի: Այս դեպքում դեմքի պրոֆիլ դիրքի վերականգնման ժամանակ քթի ծայրակետը որոշվում է հետևյալ ձևով. գանգի պրոֆիլային պատկերի վրա քթոսկրի սիլուետային եզրագծի հատվածը բաժանում ենք չորս հավասար մասերի, ապա ստորին հատվածի ուղղությամբ համապատասխանող գիծը շարունակելով, հատում ենք այն գծի հետ, որը գալիս է քթի առաջային փշից: Նկարագրված հատման կետը կհամապատասխանի քթի ծայրակետին:

Գանգի միջոցով դեմքի գրաֆիկ վերականգնման գործընթացում քթի ուրվագծի ստացման ներկա մեթոդը նպաստում է դեմքի մարդաբանական պլաստիկ վերականգնման առավել ճշգրտված արդյունքների ստացմանը, ինչպես նաև քանդակային վերականգնման աշխատանքներին:

ԽԵՑԵՂԵՆԻ ՀԱՐԴԱՐՄԱՆ ԱՍՏՂԱԶԵՎ ԶԱՐԴԻ ՇՈՒՐՋ

Սիջնադարյան Հայաստանի հնագիտական հավաքածուներում առանձին խումբ են կազմում վեցաթև աստղի նշանով ջնարակած անոթները (Ղվին, Անի): Սիմյանց մեջ ներգծված եռանկյունիներով կազմավորված վեեեց թևանի աստղի զարդածնը առնվել է շրջանակի մեջ և տեղադրվել հիմնականում անոթի կենտրոնում, այնուհետև լրացվել բուսական, երկրաչափական թռչնապատկերներով: Նման զարդերով թասեր մեզ հայտնի են միջնադարյան Ղրիմի, Վրաստանի, Բուլղարիայի, Կենտրոնական Ռուսաստանի (Բելգորոդ), Ադրբեջանի հնավայրերից:

Հնգաթև և վեցաթև աստղերը տեղ են գտել միջնադարյան հոգևոր և աշխարհիկ շինությունների ճարտարապետական մանրամասներում (Սանահին, Կիրանց, Նոր Գետիկ, Թեղենյաց վանք, Անիի Պարոնի պալատ, Սարգսի տուն, հյուրանոց և այլն), նաև խաչքարերում (Դսեղ-Ձաղիձոր և այլն):

Եռանկյունիներով կազմավորվող այս զարդածնը արտացոլումն է գտել և հայկական միջնադարյան ձեռագրերի մանրանկարներում (թիվ 356, 313, 372 ձեռագրեր): Այլուր, ինչպես հայտնի է, հնգաթև և վեցաթև աստղազարդերը ներկայացվել են իբրև «Դավիթի նշան» կամ «Սողոմոնի կնիք» անունով:

Եբրայական հմայական ձեռագրերում այն կիրառվել է իբրև թալիսման: Ղուրանը դիտել է այն, իբրև Դավիթի պաշտպանական զենք կամ հրեական մոզական նշան: Մեկ այլ մեկնությամբ՝ այն դիտվել է իբրև ալքիմիական խորհրդանիշ՝ հավաստելով հակամարտ տարրերի՝ ջրի-և կրակի ներդաշնակությունը (17-րդ դ.): Խնդրո առարկա խորհրդանշանի մեկ այլ տարբերակը քրիստոնեության իմիտացիան է: Քրիստոսին և Խաչին փոխարինել է վեցաթև աստղի զարդամոտիվը: 19-րդ դ. սույն պատկերը ճանաչվել է իբրև պաշտոնական հրեական խորհրդանշան:

Այս զարդամոտիվի տարբեր մեկնաբանությունների հիմքը նախնադարյան արվեստն է - նախնադարյան հասարակության սիմվոլիկան: Վեցաթև աստղի թափառող զարդածների հնագույն դրսևորումները հայտնի են բրոնզի դարից (Միջագետք, Առաջավոր Ասիա, Հնդկաստան, Անդրկովկաս): Վերը բերվածը թելադրում է հանգելու այն հետևության, որ զանազան ձևերով և կերպարով հանդես եկող եռանկյունին իր ներգծված տեսքով հանգեցրել է վեցանկյուն զարդամոտիվի. այն իր նոր մեկնաբանությամբ լրացրել է բնության և տիեզերքի մասին եղած գիտական պատկերացումները:

Վեցաթև և հնգաթև աստղի զարդամոտիվը Հայաստանում հայտնի է վաղ ժամանակաշրջաններից:

ԴԱՐՉՅԱԼ «ՄԱՀԿԱՆԱ» ԿՈՉՎԱԾ
ՀԱՐԿԱՏԵՍԱԿԻ ՄԱՍԻՆ

Միջնադարյան Հայաստանում լայն տարածում ունեին ջրաղացները, որոնք հասութաբեր հաստատություններ էին և նրանցից գանձվում էին մի շարք հարկեր: Դրանցից առանձնապես հիշարժան են տամդան, խարաջը, դահեկը և մահկանան: Բ.Առաքելյանի կարծիքով՝ «մահկանա» կոչված հարկը գանձվել է՝ սկսած X-XI դարերից և մոնղոլական ժամանակաշրջանում հայտնի է եղել «մահկանե» անվամբ: Գ.Գրիգորյանը գտնում է, որ «մահկանան» ջրաղացից գանձվող ամսական տուրքն էր, որ վճարում էին ջրաղացների տերերը ֆեոդալին: Այս հարկատեսակի մի հիշատակության ենք հանդիպում Արագածոտնի մարզի Ավան գյուղի միջնադարյան ջրաղացներից մեկում պահպանված արձանագրության մեջ: Ջրաղացը գտնվում է Ավան և Կոշ գյուղերի միջև ձգվող ձորակում, որտեղ պահպանվել են մոտ 25 ջրաղացների մնացորդներ: Դրանցից ամենահինը կարելի է թվագրել X դարի վերջով: Արտադրական այս կառույցների մասին հիշատակվում է Կոշի եկեղեցու 981 թվակիր արձանագրության մեջ: «Մահկանա» հարկի հիշատակությամբ արձանագրված քարը գտնվում է ջրաղացաշարի վերևից հաշված երկրորդ ջրաղացի մոտ: Շինությունը բաղկացած է երկու մասից: Առաջինը բուն ջրաղացն է, որ շարված է մանր ու միջին մեծության բազալտե ճեղքված քարերով, առանց շաղախի: Միակ մուտքը գտնվում է հարավային կողմից՝ շինության հարավային պատի արևելյան մասում: Այն ունի 1,8 մետր լայնություն:

Ջրաղացի այս բաժանմունքում պահպանվել են նաև աղացքարերի տեղը և ջրատար ու ջրաբեր առուների բարավորները: Կառույցի երկրորդ մասը շարված է հսկա, մինչև մեկ տոննա քաշ ունեցող քարերով և ունի 2,5-3 մետր բարձրություն: Մայր առվից ջրաղաց տանող առուն ունի մոտ 50 մետր երկարություն և արհեստականորեն գետնից բարձրացված է 2 մետր: Ջրատար առվի և նավի ծայրափողերի տարբերությունը հասնում է 3 մետրի:

Ջրաղացից դուրս, պատից 4 մետր հեռավորության վրա ընկած է 0,8 x 0,7 մետր չափերի զանգվածեղ մի քար, որի հարթեցված մակերեսին փորագրված է 6 տողից բաղկացած հետևյալ արձանագրությունը.

1. ԵՍ ԱԾԱՅՏՈՒՐ ԳՆԵՑԻ ԶԶԱ
2. ՂԱՅՍ ԵՒ ՆՈՐ ՇԻՆԵՑԻ ԵՒ ԿԱՆԳՆ
3. ԵՑԻ ԶԽԵԶՍ ՈՎ ՈՐ ԶԶԱՂԱՅՍ

4. ԱԻԵՐԷ ՅԾԻՑՆ ՆՁՈՎԱԾ Է. ԵՏ ՄԱՅ

5. ԱՆԿԱՆ ՀՈՒՐԱ ՏԱՆՆ ԿԱՆ ԻՄ ՏՂ

6. ԱՅՈՑՆ

Կարծում ենք անեծքի բանաձևում ՅԾ-թիվը գրչի կողմից վրիպակ է և պետք է կարդալ ՅԺԸ (318): Արձանագրության մեջ հիշատակված «ՄԱՅԱՆԿԱՆ»-ը, ակնբերաբար «մահկանա» հարկատեսակն է: Առջ ու վաճառքի այս քարեղեն փաստաթղթում «նշվում է», որ Ջրաղաց գնող Աձայտուր-Աստվածատուրը պարտավորվում է «մահկանա» վճարել, այդ պարտականությունից ազատելով ջրաղացի տիրոջը: Նույն բանը պարտավորվում են անել նաև իր տղաները:

Սակայն այս արձանագրությունը կարելի է մեկնաբանել նաև այլ կերպ: Ջրաղացի նոր տերը պարտավորվում է «մահկանա» վճարել հին տիրոջը («ԵՏ ՄԱՅԱՆԿԱՆ ՀՈՒՐԱ ՏԱՆՆ»): Այսինքն «մահկանա» տալ իր (հուրա-բարբառային ձևն է) տանը և նրա տղաներին: Կարելի է ենթադրել, որ վերևում արդեն մի վրիպակ թույլ տված գրիչը վրիպել և «իր տղայոցն»-ի փոխարեն փորագրել է «իմ տղայոցն»:

Եթե այս ենթադրությունը ճիշտ է, ապա կարելի է կարծել, որ «մահկանա» հարկատեսակը ոչ միայն եղել է ֆեոդալին վճարվող հարկ, այլ նաև առջ ու վաճառքի դեպքում նոր տիրոջ կողմից հին տիրոջը վճարվող որոշակի հարկատեսակ:

Արսեն Բորոխյան

ՀԱԻ

ԾՈՓԵՒ ԳՈՒՆԱԶԱՐԴ ԽԵՑԵՂԵՆԸ

Մ.Թ.Ա. III-IV ՀԱՁ. ՄԱՅՄԱՆԻՆ

Մ.թ.ա.III հազ.վերջում Առաջավոր Արևելքում պատմահնագիտական նոր իրողությունների ի հայտ գալը, բնակավայրերի կտրուկ անկումը, ավերածությունների փաստագրումները՝ խոշորամասշտաբ փոփոխությունների սկիզբն էին ազդարարում, փոփոխություններ, որոնք Հայկական լեռնաշխարհում նշանավորվեցին Կուր-Արաքսյան մշակույթի անկմամբ և «լուկալ» մշակույթների ձևավորմամբ: Նշված գործընթացների պարզաբանման համար կարևոր ենք համարում տեղական առանձնահատկությունների լուսաբանումը՝ շեշտը դնելով Ծոփքի ենթատարածքի վրա, որն առնվազն մ.թ.ա. IV հազ. վերջից ընդգրկված էր Կուր-Արաքսյան մշակույթի ոլորտում:

Ծոփքում ևս մ.թ.ա. III հազ. վերջում ավերվեց և լքվեց բնակավայրերի մեծ մասը: Կուր-Արաքսյան մշակույթին եկավ փոխարինելու

Միջին բրոնզի՝ անատոլիական երանգներով տեղական մշակույթը: Այս փոփոխությունները տեղի էին ունենում գունազարդ խեցեղենի յուրահատուկ զարգացման մթնոլորտում, որը հանդիսանում է ծովափյան միջավայրի գլխավոր առանձնահատկություններից մեկը:

Ծովքի բնակավայրերում գունազարդ խեցեղեն փաստագրվում է մ.թ.ա. V հազ. սկսած: Ներմուծված տարբերակներից բացի, մ.թ.ա. III հազ. այստեղ հանդես է գալիս նաև տեղական գունազարդը, որը հայտնի է «Էլազդ-Մալաթիայի գունազարդ խեցեղեն» անվամբ: Մեզ հայտնի է վերոհիշյալի տարբերակները պարունակող 35 բնակավայր /10-ը՝ շերտագրական տվյալներով/, որոնք գտնվում են Ծովքի և Փոքր Հայքի տարածքում: Ըստ իր առանձնահատկությունների՝ այն բաժանվում է 2 խմբի:

ա/ Պարզ տեսակ /վաղ փուլ, մասնակի տարածում/ - ներկայացված է ծեռածեփ, գնդաձև, կոնաձև անոթներով, որոնք բաց վարդագույն մակերեսի վրա ունեն 2 տեսակի զարդաձևեր՝ բնորոշվող փռված կամ երկար ու նեղ եռանկյունիներով: Այս տեսակը հանդես է գալիս ՎԲ I վերջի և ՎԲ II /մ.թ.ա. III հազ. 1-ին կես/ հուշարձաններում /Սաքյոլ VIII, Հան Իբրահիմ Շահ X-IX, Դեղիրմեն IV-III, Նորշուն XIII-XIV, Թեփեջիք 6-8, Քորուջու C-D, Թոշկուն Մակիի-4, Գելիեջիկ ՎԲ II և այլուր/:

բ/ Նրբագեղ տեսակ /ուշ փուլ, լայն տարածում/ - մասամբ պատրաստված են դուրգով: Ձևերն ավելի բազմազան են /գնդաձև, կոնաձև, գլանաձև, կարճավիզ, լայնաբերան անոթներ են/: Այն հանդես է գալիս ՎԲ III, ՄԲ I բնակավայրերում (Հան Իբրահիմ Շահ VII-V, Դեղիրմեն II-I, Նորշուն XIII-V, Թեփեջիք 8-10, Քորուջու E-G, Իմիկուշադը 14, Արսլանթեփե VI D և այլուր) և իր հերթին բաժանվում է 2 ենթատեսակի:

1/ Կարմիր գունազարդ՝ սպիտակ հիմնագույնի վրա, որ հատկապես տարածված է Քորուջուում և թվագրվում է մ.թ.ա. 2300-2150թթ /ՎԲ III A/:

2/ Սև գունազարդ՝ անփայլ մանուշակագույն հիմնագույնով, որը բնորոշ է ՎԲ III B և ՄԲ I հուշարձաններին /մ.թ.ա. 2150-1800թթ./:

Խմորո առարկա խեցեղենը հանդես է գալիս Կուր-Արաքսյան մշակույթի, իսկ նրբագեղ տեսակի II տարբերակը, նաև ՄԲ I՝ անգույն կենտրոնաանատոլիական տիպի բազմատեսակ խեցեղենի համատեքստում: Նկատվում են որոշ ձևաբանական և զարդամոտիվային /վեր ուղղված եռանկյունի, արևի սկավառակ, սվաստիկա ևն/ ընդհանրություններ Կուր-Արաքսյան և նշված խեցեղենի միջև: Սակայն դրանք լիովին տարբեր են: Պարզ և նրբագեղ տեսակների միջև կա որոշակի կապ, սակայն ուշ տեսակն ունի մի շարք գծեր, որոնցով կապվում է կապադովկիական, հյուսիս-սիրիական և Հայկական լեռնաշխարհի այլ շրջանների /Վան, Ուրմիա, Անդրկովկաս/ համաժամանակյա գունա-

զարդի հետ: Այսուհանդերձ, այն ունի չլրկնվող առանձնահատկություններ, որոնք հիմք են հանդիսանում Հայկական լեռնաշխարհում առանձնացնել գունազարդ խեցեղենի լոկալ տեսակ, որ կոչում ենք «Ծոփք-Փոքր Հայքյան»:

Հատկանշական է այն հանգամանքը, որ եթե Ծոփքում գունազարդ գոյություն ունի Կուր-Արաքսյան մշակույթի համակարգում և փաստորեն դուրս է մղվում վերջինիս հետ մեկտեղ, ապա Անդրկովկասում գունազարդ հանդես է գալիս Կուր-Արաքսյան մշակույթի անկումից հետո: Մ.թ.ա. III հազ. վերջի փոփոխությունները երկու տարածքներում էլ, սակայն, հանգեցրին Կուր-Արաքսյան մշակույթի անկմանը: Այս համապատասխանության և վերոհիշյալ անհամապատասխանության ներքո թե Ծոփքի, թե Անդրկովկասի համար ընդհանուր է անատոլիական ազդեցությունների շղթան, որ պիտի նկատվեր մ.թ.ա. II հազ. գրեթե ողջ ընթացքում:

Բորիս Գասպարյան
ՀԱԻ

ԾԻԾԵՆԱԿԱՔԵՐՂ-2 ՊԱԼԵՈԼԻԹՅԱՆ ՆՈՐԱՀԱՅՏ ԲԱՐԱՅՐ-ԿԱՑԱՐԱՆԸ

Ծիծեռնակաքերդ-2 քարայրը գտնվում է Հրազդան գետի աջ ափին, ձորի թեք լանջին, գետի հունից 30 մ բարձրության վրա, Մարգահամերգային համալիրի տակ, Կիկյան կամրջից մոտ 500 մ ներքև, գետի հոսանքի ուղղությամբ: Հայտնաբերել է 1996թ. Ս.Նահապետյանը, ապա ուսումնասիրվել է մեր կողմից 1997թ.:

Ծիծեռնակաքերդ-2-ը միջանցքային տիպի 3x4,4x2,4 չափերի, երկդահլիճանի բնական քարայր է, առաջացած բեկորային բազալտների մեջ՝ արտեզյան ջրերի քայքայման և մեխանիկական հողմնահարման հետևանքով: Մուտքի 1,5մ բացվածքը ուղղված է դեպի հյուսիս: Երկմակարդակ հատակը, մոտ 45° թեքությամբ, միանում է առջևի հրապարակին: Առաջին դահլիճը 1,5մ-անոց միջանցքով միանում է երկրորդին և կազմում մոտ 11քառ.մ հատակագիծ:

Մուտքի կենտրոնում արված հետախուզական շուրֆը (1x1x1,5մ) տվել է նստվածքների շերտագրական հետևյալ հաջորդականությունը (վերից վար)։

1. հողմաքեր (լյուսային) շեկավուն կավավազային շերտ (0,5մ),
 2. մոխրագույն ավազաշերտ՝ սակավ բազալտային խճով (0,3մ),
 3. գորշավուն կավավազային շերտ (պեղված մասում՝ 0,6մ):
- Նստվածքները շարունակվում են, հատակը բացված չէ:

Քարայրի նստվածքների մակերեսից և պեղված հատվածից հայտնաբերվել են կենդանաբանական, մարդաբանական և հնագիտական նյութեր, որոնց ուսումնասիրությունից պարզվել է հետևյալը.

1. մարդաբանական մնացորդները ներկայացված են ստորին ծնոտի երկու խոշոր բեկորով, մեկ սեղանատամով, զանգի երկու բեկորով, որից մեկը՝ աչքի խոռոչ.

2. կենդանաբանական նյութը ամենաառատն է, սակայն մեծ մասամբ ներկայացված է գրեթե անորոշելի՝ մանրատված բեկորներով և խոշոր կաթնասունների, թռչունների, սողունների բազմաթիվ մնացորդներով ու ատամներով.

3. հնագիտական նյութը ներկայացված է միջնադարյան խեցեղենի բեկորներով և պալեոլիթյան քարե գործիքներով (7 նմուշ): Հատկանշական է, որ քարե գործիքների խումբն իր հումքով, մշակման եղանակով ու տիպերով նման է Երևան-1 քարայր-կացարանից հայտնաբերված գործիքներին և ներկայացնում է դրանց զարգացման հաջորդական փուլը: Այդպիսով, անկախ առավել ուշ շրջանի նյութերի առկայության փաստից, այստեղ հայտնաբերված գործիքների պատկանելությունը բուն պալեոլիթի ինդուստրիալ մշակույթին՝ անհերքելի է, որով հավաստվում է թվով 6-րդ քարայրային տիպի պալեոլիթյան հուշարձանի առկայությունը հանրապետության տարածքում:

Հուշարձանի անհապաղ ուսումնասիրումը օրակարգի խնդիր է, քանի որ նրա պահպանվածությունը օրավուր վտանգվում է բնական ու մարդկային տարբեր գործոնների հետևանքով:

*Ռուբիկ Գասպարյան,
Կարեն Գրիգորյան
ՀԱԻ*

ՎԻՍԱԳՐԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹՆԵՐ

«Դիվան հայ վիճագրության» մատենաշարի հյուսիսային Հայաստանի պրակը հրատարակության նախապատրաստելու նպատակով 1996թ. վիճագրական արշավախումբը ուսումնասիրություն կատարեց Սանահին ու Հաղբատ հուշարձանախմբերում: Աշխատանքների միջոցին հայտնաբերվեցին նախորդ հրապարակումներից դուրս մնացած մի շարք վիճագրեր, որոնք վերաբերում են XI-XV դդ.:

Սանահինի վանքի Ամենափրկիչ եկեղեցու արևելյան պատի մոտ հարթ տապանաքար, մեկ տող արձանագրությամբ: ՁԱՐԻ ՅՈՎՍԵԾ

1
[Փ]ԻԼԻՍՈՓԱՅԻ [ԹՎ.] ՊՁ (1431): Ձ նախդիրով արի որոշիչը հավա-
նաբար պետք է հասկանալ հմուտ քաջատեղյակ իմաստով, ինչպես
տիեզերական ռաբունապետ: Ձ նախդիրի գործածությունը տվյալ
դեպքում անհարկի է, որ հատուկ է X-XV դդ. վիճագիր և մատենագիր
լեզվին: Փ տառը Յովսեփ և փիլիսոփա բառերի համար ընդհանուր է:

Տապանաքար նախորդի կողքին, վրան. [ԱՅՍ Է], ՀԱՆԳԻՍՏ ՍԱԻՐ
ՂԱԶԱՐ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԹՎ. ՊՁ (1431): Այս արձանագրությունը աչքի է
ընկնում վայելչագիր տառածներով և կցագրերով: Ղազար վարդապետի
անունը հանդիպում է Սանահնի առաջնորդների ցուցակում: Նա հիշա-
տակված է Սանահնում ընդօրինակված երկու ձեռագրերի հիշատա-
կարաններում, որոնցից իմանում ենք նաև, որ Ղազարը Յովսեփ փիլի-
սոփայի եղբայրն է:

Սանահնի վանքի գրատան նախագավթում տապանաքար, վրան 2
տող. ԱՅՍԷ ՀԱՆԳԻՍՏ ՍՏԵՓԱՆՈՍ ԱՐՅԻ (արքեպիսկոպոսի) Թ.ՎԻՆ] ՊՅ Դ(1425):

Հաջորդ արձանագրությունը՝ Հաղբատի Ս. Գրիգոր եկեղեցու
արևմտյան մուտքի աջ կողմի պատին քանդակված խաչքարին, 2 տող.

ՍԲ ԽԱԶՍ ՏԱՆՈՒՏԵՐ ԽԱԶԿԱՆ, թվական չունի:

Վանքի զանգակատան հվ. պատին, արտաքուստ, աննշան տեղում 1
տող նոտրգիր. ՍԲ ԽԱԶՍ ԽԵԶԻ ՎՐԴ (վարդապետ): Մեզ թվում է վրդ
տառակապակցությունը հապավման նշանով կարելի է նաև վերծանել
վարդապետ՝ շինող, քարգործ, ճարտարապետ իմաստով: Ուստի խեչը
կարող է լինել զանգակատան ճարտարապետը, քանի որ կառուցող-
ճարտարապետները իրենց անունը թողնում էին աչքի չգարնող տեղե-
րում: Գիտական գրականության մեջ խեչ ձևը ունի երկու մեկնաբա-
նություն. ա) Ն.Մառը գտնում է խեչը >խաչերես անվան հապավումն է:
Տողատակում հնարավոր է համարում խեչ >խաչ իմաստով հասկանալ
ա >Ե Լոռվա խոսվածք: բ) Վիճագրագետ Ս.Ավագյանը բառը անձնանուն
չհամարելով, հիմնավորում է՝ միջին հայերենում և արդի բարբառներում
այն ունի մոտ, կից, քով նշանակությունը, օրինակ, Բագնայրի 1233թ.
արձանագրությունում «տներն ի Գաղտ դռանն խեչերետ»:

Հաղբատի Փոքր գավթի մեջ Ամենափրկիչ խաչքարի պատվանդանի
վրա Ղաֆադարյանը վերծանել է «ԿԱՄԱՍՆ ԱՅ...ՎԱՐԴԱՊԵՏՍ ՍԱՐԳԻՍ,
ԱՊԱ ԵՍ ԱԽՍՏԷԼՍ ՈՒ ՌՈՒԶՈՒՔԱՆ»: Հեղինակը անսովոր և կասկածելի է
համարել Ախատել անձնանունը: Մենք նկատել ենք Ա-ի վրա Ն-ի վերին
ստեղը՝ Նախատելս: Մյուս շտկումը մեր կողմից ԱՊԱ շաղկապն է, որ
մենք վերծանել ենք Պապայ որպես անձնանուն, ինչպես բնագրում է:
Այս անունը կարողում ենք մեծ գավթի արմ.պատի արձանագրության
Վանականի և նրա ամուսին Խորիշահի զավակների թվարկման մեջ:
«Մեք տեր Տովպս, Դեղս և Վանականս և ամուսին իւր Խորիշահ և

զաւակը իւրեանց՝ Սարկաւազ Դաւիթ, Սարգիս, Աբրահամ, Պապան, Աւագն»: Այսպիսով, կլինի «ԿԱՄԱԽՆ ԱՅ ԵՍ ՎԱՐԴԱՊԵՏՍ ՍԱՐԳԻՍ, ՊԱՊԱՅ ԵՒ ԵԱԽԱՏԵԼՍ ՈՒ ՈՒԴՈՒՔԱՆ»:

Ս.Նշան եկեղեցու հվ պատին ներքուստ փորագրված 1067թ. արձանագրության վերջին երեք տողերը՝ անեծքի բանաձևը, բաց է թողնված. ՄԵՐ ԶԱՌԵՔ ԶԱՆՑ ՂԱՏՈՂՆ ՈՐՈՇԵԱԼ ԵՂԻՑԻ Լ ՆՈՑԱ ԵՒ ԱՄԵՆՔՆ ՊԱՐՏԱԿԱՆ ԵՆ ԱՌԱՋԻ ԱՅ:

*Արամ Եգորյան,
Сергей Мандриян
И А Э*

ДЛИННЫЕ МЕЧИ И РАПИРЫ ЗАКАВКАЗЬЯ

1. Длинные мечи и рапиры являются одной из наиболее своеобразных категорий закавказского металлопроизводства средне-бронзового века как в культурологическом, так и в морфо-типологическом плане. Представляя собой количественно немногочисленную, но чрезвычайно характерную и целостную группу артефактов, они позволяют по имеющимся на сегодняшний день данным по-новому осветить вопросы их происхождения, применения и датировки.

Введенные в научный оборот в 40-ые годы, мечи-рапиры Закавказья были однозначно интерпретированы как крито-микенский импорт и соответственно было установлено время их бытования: XVI-XV вв. до н.э. (Куфтин 1941, Мартисосян 1964). После высказываний столь авторитетных ученых подобная точка зрения, став по сути дела аксиоматичной, лишь воспроизводилась в последующих работах.

2. Пытаясь решить вопросы культурно-хронологической принадлежности изделий данной категории, необходимо прежде всего уточнить терминологию. Тем более, что за кажущейся формальностью подобной проблематики может быть скрыто значительное историческое содержание. Если судить по общей морфологии длинных мечей и рапир Закавказья, то нетрудно заметить, что все эти изделия, объединенные достаточно высоким коэффициентом сходства, действительно войдут в одну категорию - мечи с черенковой рукоятью. Однако, при этом также

достаточно очевидно, что экземпляры из Маисяна, Дзорагеса, Качагана, беспаспортной рапиры ГИМА, Воротнаберда, Самтавро, Лило объединены еще более высокой степенью общности, представляя собой высокоунифицированную и специализированную группу артефактов, которые можно обозначить термином "рапиры". Унифицированная длина (около 1м) и пропорции клинка (соотношение длины и ширины), сочетающиеся с рядом устойчивых морфо-конструктивных признаков (прямой или опущенный контуры плечиков, четкая, высокая нервюра), убедительно свидетельствуют, что эти изделия могли использоваться лишь в качестве колющего оружия, в отличие от бифункциональных мечей из Ангехакота, Одзуна, Садути, Хуштада, (Дагестан) и Талыша.

3. Учитывая случаи нахождения рапир в закрытом археологическом комплексе, можно заметить четкую корреляционную зависимость между данными артефактами и присутствием останков быка в погребениях (Маисян, Самтавро, Лило). Данное обстоятельство в сочетании с функцией рапиры как колющего оружия, наталкивает на мысль, что это специфическое оружие имеет лишь ритуальный характер, связанный с обрядовым закалыванием быка.

Находки рапир в хорошо документированных комплексах в последние десятилетия, устойчиво документируемых по соответствующему материалу, позволили исследователям (Г.Е.Аресян, Э.М.Гогодзе, Ш.Ш. Дедабришвили, Р.Н.Русишвили, В.Садрадзе) значительно уточнить и расширить датировку в сторону их удревнения (XX-XVIII вв. до н.э.).

Детально исследовав эгейские длинные мечи, Н.К.Сэндерс пришла к выводу, что крито-микенские находки являются результатом синтеза эгейских форм с длинными кинжалами Северной Сирии и Палестины, а наиболее ранним аналогом она считает меч из "царских гробниц" Аладжа-Хююка.

В соответствии с этими данными, очевидно, следует выделить наличие в Закавказье к III- началу II тыс. до н.э. самостоятельного очага производства этого вида оружия. Возможно следует также пересмотреть и общее направление культурных связей и заимствований эпохи средней бронзы не с запада на восток, а напротив - из регионов Передней Азии, в том числе и западного Армянского нагорья в области эгейской цивилизации.

ԼՈՌԻ ԲԵՐԴԻ ԴԱՍԲԱՐԱՆԱԴԱՇՏԻ 1996-97 ԹԹ. ՊԵՂՈՒՄՆԵՐԻ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՀՀ Կենտրոնական բանկի հովանավորությամբ՝ 1996-97թթ. շարունակվեցին դաշտային հետազոտական աշխատանքները Լորի Բերդի դամբարանադաշտում: Այս ընթացքում պեղվեցին մ.թ.ա. II-I հազ. տարիներ փուլերին վերագրվող 8 դամբարանային համալիրներ:

Դամբարան 94: Արտաքինից 0,5մ բարձրության հարթ հողաթումբ է, օղակված շրջանագիծ շարված բազալտե խոշոր քարաբեկորներով /տրամ. 15մ/: Շրջանագծի կենտրոնական հատվածը զբաղեցնող դամբանախուցը՝ արևելք-արևմուտք երկայնական առանցքով, ուղղանկյուն հատակագծով քարաշատ մեծ սրահ է /6x2,8x3,9մ/, որն արևելքից ունի քարաշար մուտք-դրոմոս /2,8x4,5մ/: Հիմնական թաղումից բացի, տարբեր ժամանակներում դամբանախուցն օգտագործվել է ևս երկու թաղումներ կատարելու նպատակով: Նախնական /ստորին/ թաղման շերտում մարդու կմախքի հետքեր չփաստագրվեցին: Թաղման սրահը դրոմոսից անջատող գլխապատի մոտ, երկու անկյուններում առկա էին ցլերի /եզների/ ոսկորների մնացորդներ, հաճախ փաթաթված խսրով: Խսրապատ էր նաև դամբանասրահի ողջ հատակը: Թաղման նախնական իրավիճակն ամբողջովին խաթարված էր, գույքի մնացորդները հանդիպում էին խցի բոլոր հատվածներում: Հայտնաբերված նյութերը՝ գունազարդ և գծազարդ մոտիվներով հարդարված անոթներ, ոսկուց և արծաթից ուլունքներ ու շքասեղներ, բրոնզե դաշույններ և այլն, միանշանակ վերագրելի են «Թռեղք-Վանածոյան մշակույթի» տիպաբանական կազմին /մասնավորապես գույքի տեսականին նույնանուն է Թռեղքի «ծաղկման շրջանի» 2-րդ խմբին բնորոշ օրինակների հետ/, ինչը թույլ է տալիս ստորին թաղումը ժամանակագրել մ.թ.ա XX-XIX դդ. սահմաններում: Դամբարանը 1-ին անգամ թալանվել է թերևս մ.թ.ա XIII-XII դդ., երբ այստեղ կատարվել է 2-րդ թաղումը, ապա մ.թ. I-III դդ. ևս մեկ անգամ դամբարանն օգտագործվել է 15 մահացածների /գուցե և սպանվածների/ թաղման համար:

Հուշարձանախմբի այս հատվածում պեղված շրջանագիծ քարաարքով հիմնահողային թաղման կառույցները /նո.նո.95-97/ նույնպես թալանված էին, սակայն գտնված խեցանոթներն իրենց ուշագրավ ձևերով լրացնում են մեր պատկերացումները մ.թ.ա XV-XIII դդ. բնորոշ գույքի տիպաբանական կազմի մասին:

Նշանակալից արդյունքներ գրանցվեցին մ.թ.ա VII-VI դդ. դամբանային համալիրների ուսումնասիրության առումով:

Դամբարան 93: Արտաքինից, 0,3մ բարձրությամբ հողաթմբի տակ, պատված է քարագրահի շրջանաձև լիցքով /տրամ.12մ/, որի կենտրոնական հատվածում գտնվող դամբանախուցը՝ արլ.-արմ. երկայնական առանցքով, ուղղանկյուն հատակագծով քարաշար մեծ սրահ է /6,6x3,2x2,8մ/: Դամբանասրահի պատերը կառուցված են «կեղծ թաղի» սկզբունքներով: Սրահի արևմտյան մասում 1մ տրամագծով փոս էր արված: Դամբարանը կողոպտված էր: Մարդու կմախքի ոսկորներ չփաստագրվեցին: Առկա էին ձիու և խոշոր եղջերավոր կենդանիների ոսկորներ, գտնվեցին նաև բրոնզե սանձեր, դաշույններ, երկաթյա նիզակ, խոյաքանդակ բռնակով թասի բեկոր և այլն:

Դամբարան 100: Արտաքինից պատված է քարագրահի շրջանաձև լիցքով /տրամ. 10մ/, որը ծածկում էր երկու մեծ սրահից բաղկացած թաղման կառույցը: Արլ.-արմ. առանցքով միմյանց կից դամբանասրահները ունեն ուղղանկյուն հատակագիծ, կառուցված միջին մեծության քարաբեկորներով: Հյուսիսային սրահը նախատեսված էր կենդանիների թաղման համար /6,8x2,5x2,8մ/: Այստեղ արձանագրվեցին առնվազն 16 ձիու և 9 խոշոր եղջերավոր անասունի կմախքի մնացորդներ, այլ կենդանիների ոսկորներ: Չնայած թալանված լինելուն, մեծ քանակությամբ սանձերի, գանգակների, զոտեկապերի, ճակատակալների, զարդավահանակների ու զարդակոճակների առկայությունը վկայում է, որ կենդանիները թաղվել են շքեղ հանդերձներով:

Հորինվածքային և կոնստրուկտիվ լուծումներով բացառիկ կառույց է հարավային սրահը: Վերջինիս արևմտյան կեսը երկհարկանի է: Նախ կառուցվել է /միակտոր չորս մեծ սալաքարերով/ գաղտնարան խուցը /2,5x2x1,5մ/, որի ծածկասալերի վրայից շարված էին վերին դամբանասրահի պատերը: Թաղոււմը կատարվել է գաղտնարան-սրահում, որն ամբողջովին թալանված էր. գտնվեցին երկու գանգի մնացորդներ, ձիու և ցուլի կմախքի ոսկորներ, ագաթից ու մածուկից պատրաստված ուլունքներ: Գաղտնարանը ծածկող վերին սրահը /6,9x2x2,8մ/ ըստ երևույթին նախատեսված է եղել գույքի ու «զոհաբերված» ձիերի համար: Փաստագրվեցին երեք ձիու մնացորդներ, մեծ քանակությամբ կավանոթների բեկորներ, բրոնզե տաշուրագ, մականի գլխադիր-գուրգ, ասեղնավոր բազալան, զարդարուն մահիկաձև կախիկի բեկորներ, մանրաթել օղակների «թեփուկավոր» գործքով ոսկե շղթա, թռչնազարդ բրոնզի շղթա, սպիտակ մածուկից արված մանրուլունքների գործվածքով հարդարված փռոցի մնացորդներ և այլն:

Խիստ ընդգրկուն տեսակներով այս նյութերն իրենց զուգահեռներն ունեն ուրարտական հուշարձաններում, ինչը և թույլ է տալիս վերջիններս ժամանակագրել մ.թ.ա VII-VI դդ. շրջանակներում:

ԿՐԱԿԸ ԴՐԱՍԽԱՆԱԿԵՐՏԻ ԱՆՏԻԿ ԴԱՐՔԱՐԱՆԱԴԱՇՏԻ ԹԱՂԱՍԱՆ
ՃԻՍԱԿԱՐԳՈՒՄ

Դրասխանակերտի դամբարանադաշտում կատարվել են սալարկ-դային, կարասային և հիմնահողային թաղումներ՝ իրենց ենթաձևերով: Դոգեհացի արարողության հետ կապված և մինչ հանգուցյալին հողին հանձնելը, կատարվել է որոշակի թաղման ծիսակարգ, որի բաղադրիչ-ներից մեկը կրակն է: Ծիսակարգի որոշ դրվագներ հնարավոր է վերա-կանգնել՝ ելնելով պահպանված մնացորդներից:

Դամբարանադաշտում թաղման ծիսակարգի հետ կապված կրակի հետքերը պահպանվել են տարբեր ձևերով՝ պայմանավորված արարո-ղակարգի տարբերություններով:

ա) մոխիր, վառված փայտի կտորներ, որոնք գտնվել են կա'մ դամբարանի, կա'մ հանգուցյալի կողքին: Փայտի կտորները դրված են կմախքի այս կամ այն հատվածում

բ) վառված հացահատիկի մնացորդներ, որոնք շաղ են տրված դամբարանում: Կարասային և հիմնահողային թաղումներով դամբա-րաններում կրակից մնացել է մոխրաշերտը (թիվ 39, 105, 125): Մյուս դամբարաններում կրակի հետքերը պահպանվել են փայտածուխի ձևով (թիվ 83, 84, 90, 104, 122...):

Փայտածուխի կտորներ են գտնվել թիվ 16 դամբարանում (ձեռքերի մեջ), թիվ 104 (որովայնի վրա), թիվ 122 (կրծքին), թիվ 158, 159, 181 (զլխի տակ), թիվ 125, 132 (թիկունքին): Իսկ թիվ 132 դամբարանում փայտածուխի կտորները դրված են հանգուցյալի ոտքերի տակ և թիկունքին:

Մաքրագործող կրակի ծիսակարգը անհիշելի ժամանակներից առկա է եղել տարբեր ժողովուրդների կենցաղում: Կրակի մաքրագործող ծիսահմայական արարողությունների հիմքում ընկած է շփածին հմայության հավատալիքը, ըստ որի՝ մամը ծնուն է մամին, և իրերը, որոնք երբևէ շփման մեջ են եղել իրար հետ, անմիջական կապի խզումից հետո էլ շարունակում են տարածության մեջ փոխներգործել:

Ածուխի կրակը չար ոգիներին վանելու, գերեզմանը նրանց ներգոր-ծությունից զերծ պահելու միջոց է: Այն կապվում է մախնիների պաշտա-մունքին, որպես կապ մահացածի և ընտանեկան օջախի հետ:

Կրակի մաքրագործող հատկության հետմազույն դրսևորումներից են թաղման ժամանակակից ծիսակարգում խունկ ծխելը, մոմ վառելը գերեզմանի վրա, մինչև թաղման օրը հանգուցյալի տանը լույսերը վառ թողնելու սովորույթը:

ՀԱՍԳԻՏԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՄՈԴԵԼԸ

1. Հնագիտական հուշարձաններից պեղված նյութական ու հոգևոր մշակույթի բազմաբնույթ գտածոների ամբողջությունը ուսումնասիրության ենթարկելի մակարդակում որակվում է որպես «հնագիտական մշակույթ»: Մինչև վերջերս հնագիտական մշակույթի (առանձին հուշարձանի կամ խմբի) բաղադրամասերի տարանջատման գործում ծագում էին մեծ դժվարություններ: Վերջիններս, մեր կարծիքով, պայմանավորված էին երեք հիմնական գործոններով.

ա) արտեֆակտների վերլուծության բացակայությամբ,

բ) գիտական հասկացությունների միջև կապի ու փոխհարաբերության վերհանման և ընդհանրացման անկարողությամբ,

գ) զուտ հնագիտական տեսության և մեթոդիկայի անկարողությամբ:

2. Մեր կողմից մշակված քարի դարի մշակույթների բազմաչափ տրամաբանական մոդելներից, որոնք ներառում են պալեոլիթի հնագիտական ուսումնասիրության ամբողջ համակարգը, այստեղ ներկայացնում ենք միայն ավելի ուշ շրջանի հնագիտական մշակույթների մոդելը: Այն իրենից ներկայացնում է ենթարկել եղանակով ստացված և տրամաբանական հասկացություններից կազմված սխեմա, որն արտացոլում է հնագիտական մշակույթի՝ ըստ բարդության աստիճանի, հինգ հաջորդական ու հիերարխիկ մակարդակները (արտեֆակտ-խումբ-հավաքածու-համալիր-մշակույթ):

3. Ըստ սահմանման, ամենավերին մակարդակում, ինչպես ամբողջական նյութական մշակույթը, այնպես էլ «հնագիտական մշակույթ» հասկացությունը, դիտվում է որպես նրա էությունն արտահայտող համընդհանուր համակարգ:

Յուրաքանչյուր մշակույթ, սկսած նեոլիթից, ներառում է հինգ գործառական համալիրներ (արտադրական-կենցաղային-գեղարվեստական-շինարարական-թաղման): Վերջիններս պահպանում են իրենց որակական տարբերությունները, տեսականորեն արտահայտելով մշակույթի նորմալ զարգացման աստիճանն ու ընթացքը:

Յուրաքանչյուր համալիր իր հերթին բաղկացած է հավաքածուներից, որոնք առանձնացվում են ըստ ձևական հատկանիշների: Վերջիններիս բացակայությունը հիմք է հանդիսանում ավելի ցածր տրամաբանական միավորի՝ խմբի առանձնացման համար, ըստ ընդհանուր և բովանդակալից ատրիբուտի առկայության:

Հնագիտական մշակույթը բնութագրող ամենաստորին միավորը ամբողջական, մասնատված կամ հետք թողած արտեֆակտն է (գտածո):

Ներկայացված սխեման լուծում է նաև համեմատության պրոբլեմը համապատասխանաբար ըստ նմանության աստիճանի (համագործ-համարժեքը-նմանը-նույնը-ինքնին իրը):

4. Ինչ վերաբերում է պալեոլիթյան մշակույթին, որը կազմված է միայն հնագիտական մշակույթի առաջին՝ ինդուստրիալ համալիրից, ապա այն բնորոշվում է յուրահատուկ տրամաբանական մոդելով, որը և հիմք է հանդիսանում մնացած համալիրների դասակարգման ու տիպաբանության համար (ինդուստրիա-դաս-կարգ-տարբերակ-տիպ):

5. Նշված մոդելը տեսականորեն հիմնավորում է մշակույթի զարգացման աստիճանը, ուղղվածությունը, ժամանակագրությունը ու պարբերացումը: Այն ոչ միայն կարգավորում, այլև տարբերակում է անունը-կոչումը-հասկացությունը-տերմինը-կատեգորիան՝ գիտական ըմբռնումների համակարգում:

Սամվել Թադևոսյան
ՀԱԻ

**ՎԵՐԻՆ ՊԱԼԵՈԼԻԹԻ ՏԵՂԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔՈՐԻ ԴԱՐԻ
ՊԱՐԲԵՐԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

Վերին պալեոլիթի մշակույթի ուսումնասիրությունը խիստ արդիական է և մեծ հետաքրքրություն է ներկայացնում ոչ միայն հնագիտական, այլև ազգաբանական, լեզվաբանական և պատմագիտական առումներով:

19-րդ դարի վերջին Հ. Բրեյլի կողմից Ֆրանսիայում որպես յուրահատուկ ժամանակաշրջան առանձնացված և «վերին պալեոլիթ» անվանված մշակույթն ընդունվեց տարբեր ազգության հնագետների կողմից: Հետագայում նմանօրինակ մշակույթի վկայություններ հայտնաբերվեցին տարբեր երկրներում: Քարի դարի պարբերացման ավանդական դարձած սխեմայում հիշյալ մշակույթը դրվեց պալեոլիթյան /նուստերյան/ և մեզոլիթյան մշակույթների միջև:

Մինչև 80-ական թվականները մեզանում ևս ընդունված էր այդ սխեման: Մի քանի հնավայրերից հավաքված աղքատիկ, բացառապես քարե իրերի համալիրները /Նուռնուս, Գաթղառն, Սատանի Դար/ ըստ տիպաբանության՝ վերագրվում էին վերին պալեոլիթին /Պանիչկինա, Սարդարյան/, համաձայն Բրեյլի դասակարգման, որով իսկ լուծված էին համարվում դրանց մշակութային պատկանելության և գոյության ժամանակաշրջանի հարցերը:

Վերջին տարիներին պալեոլիթի համակողմանի ուսումնասիրությունները լիովին փոխեցին մեր պատկերացումները Հայաստանի

վերին պալեոլիթի բնույթի և նրա գոյության ժամանակաշրջանի վերաբերյալ: Ակնհայտորեն պարզ դարձավ, որ քարայր կացարանների մուստերյան մշակույթից տիպաբանորեն առանձնացված վերին պալեոլիթյան տարբերակները հանդիսանում են մուստերյան մշակույթի անքակտելի մասը և ներկայացնում են տվյալ ավանդական մշակույթի զարգացման որոշակի փուլ /Երևան 1/ կամ աստիճան /Լուսակերտ2/: Վերջիններս ունեն իրենց տեղական առանձնահատկությունները /պրիզմատիկ կոնաձև թեք հատակով միջուկների սղություն, եռանկյունաձև ցլեփների ու շեղբերի առատություն, ասիմետրիկ սայրերի ու կարճ պոչուկավոր նետասլաքների առկայություն, երկրաչափական միկրոլիթների իսպառ բացակայություն և այլն/, որոնք անկասկած, պայմանավորված են մշակույթի վաղեմությամբ և նրա մորֆոլոգիական նորացմամբ:

Ինչ վերաբերում է բացօթյա հնավայրերից հավաքած քարե գործիքների առանձին հավաքածուներին ու համալիրներին, ապա դրանք, թեև տիպաբանորեն կրկնօրինակում են վերին պալեոլիթյան առանձին ձևերը /օրինակ՝ սոլյուտրե, մադլեն/, սակայն իրականում մշակույթի առումով խիստ տարբեր են և ժամանակագրորեն վերաբերում են արխեոլիթներին կամ պսևդոլիթներին /Արգել, Նուռնուս, Սատանի Դար, Ջրաբեր/: Մեր կարծիքով դրանք հանդես են գալիս որպես պալեոլիթյան ավանդույթի մնացուկ կամ էլ դասական դրսևորումներ մետաղի մշակույթներում ու պատմական ժամանակաշրջանում:

Հետևաբար, հաշվի առնելով քարի դարի պարբերացման տեղական սխեման /պալեոլիթ-մեոլիթ-արխեոլիթ-պսևդոլիթ/, հարկ ենք համարում ընդգծել, որ Հայաստանում գտնված ու ուսումնասիրված նյութերի մեջ չունենք այնպիսի պալեոլիթյան մշակույթ, որը համեմատելի լիներ ինչպես Ֆրանսիայի հինգ համալիրներից բաղկացած դասական վերին պալեոլիթի մշակույթի, այնպես էլ հարևան տարածքների՝ իմերեթյան /Վրաստան/ ու Բարադոստյան /Իրաք/ վերին պալեոլիթի մշակույթների հետ: Վերջիններիս կապը կոնկրետ մուստերյան մշակույթի հետ հաստատված չէ, իսկ զարգացումն ընդգրկում է մի ամբողջ պարբերաշրջան /վերին պալեոլիթ, էպիպալեոլիթ և մեզոլիթ/:

Նման մշակույթի առկայությունը մեզանում զուգահեռներ ունի ոչ թե քարայրների պալեոլիթում, այլ վաղ երկրագործական բլուր-բնակատեղիների ինդուստրիալ մշակույթում /Խաթունարիս, Ծաղկունք/:

**ՍԵՎԱՆԻ ԱՎԱՋԱՆԻ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՉԱՆՆԵՐԻ ԲՐՈՆՉ-
ԵՐԿԱԹԵՂԱՐՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՉԱՆԻ ՎԵՐԳԵՏՆՅԱ ԽԵՑԵՂԵՆԸ**

Սևանի ավազանի հուշարձաններն ուսումնասիրող հայ-իտալական հնագիտական արշավախմբի գործունեության հիմնական ուղղություններից է եղել վերգետնյա նյութերի հավաքումը: Հետազոտված հնավայրերի տարածքում հայտնաբերված մի քանի հազար խեցաբեկորները բնութագրվել են ըստ մի շարք պարամետրերի (ձև, զարդաբանվածք, գույն, հարդարում, խեցու կառուցվածք, զանազան չափումներ և այլն) և թվագրվել: Սույն հաղորդման հիմքում ընկած են շուրջ յոթ տասնյակ հնագիտական հուշարձաններից ընդամենը 45-ում ձեռք բերված խեցեղենի բնորոշման տվյալները: Քննարկվող հնավայրերը հիմնականում տեղաբաշխված են Սևանի լեռնաշղթայի և Ծակքար գետի միջև, իսկ նրանցից վեցը (Քռա, Դվոր, Նեղ բողազ, Խոնարիված սուրբ, Սանգար, Բերդի դոշ) գտնվում են հիշյալ գետից արևմուտք:

Կուր-արաքսյան մշակույթին բնորոշ արտեֆակտեր են հայտնաբերվել 6 հուշարձաններից (Սոթք 2, Նորաբակ 1, Ջաղացածոր, Կոլ պալ, Ծովակ, Ծովինար): Վաղբրոնզեդարյան այս հավաքածուն ներկայացված է կնուճների, սափորների, քրեղանների, նրբախեցի գավերի բեկորներով: Խեցանոթների մեծամասնությունն ունի ընդգծված շուրթ, գլանաձև վիզ, սև փայլեցված, ընտիր կոկված մակերևույթ, միաշերտ կամ երկշերտ միջուկ: Կան լայնացող պսակով անվիզ անոթներ: Սակավ հանդիպող փայլատ խեցատները համեմատաբար անփույթ են հարդարված: Արագ պտտվող դուրգով պատրաստված կավանոթներ չկան, առկա բեկորները զարդաբանված չեն:

Միջինբրոնզեդարյան մշակույթներին հատկանշական խեցատներ են հավաքվել 10 հնավայրերից (Սոթք 2, Նորաբակ 1, Ջաղացածոր, Կոլ պալ, Ծովակ, Քարի դուռ, Ալ-բերդ, Ջոջ կող 1, Քռա, Սանգար), որոնց շարքում կան ինչպես գունազարդ, այնպես էլ սև փայլեցված կամ փայլատ մակերևույթով նմուշներ: Գունազարդ անոթների կարմիր կամ դեղնադարչնագույն փայլեցված մակերևույթներին սև ներկով պատկերված են ուղղաձիգ կամ իրար զուգահեռ հորիզոնական նեղ ժապավեններ, հորիզոնական բեկյալ գծեր, ալիքազարդ ծոպերիզներ: Տարածված են շեփորաձև պսակով անոթները, որոնք ավարտվում են կլորացող շուրթով: Երբեմն հանդիպում են ուսերից դեպի վիզը ներձկված անցումով օրինակներ: Կավանոթների միջուկը միաշերտ է:

Սակավ են փայլատ մակերևույթ ունեցողները:

Ուշբրոնզեդարյան կավանոթների բեկորներ են ի հայտ եկել 9 հնավայրերի տեղագնությունը (Գեղամասար, Սոթք 2, Նորաբակ 1, Նորաբակ 2, Ջաղացաձոր, Կոլ պար, Ծովակ, Քարի դուռ, Ծովինար): Նրանց խեցին ըստ կառուցվածքի՝ միաշերտ կամ երկշերտ է, իսկ փայլեցված սև, մոխրագույն կամ դարչնագույն մակերևույթներին, երբեմն, փայլեցման եղանակով ցանցազարդ է պատկերված: Որոշ օրինակներ իրանին կրում են հորիզոնական ուռուցիկ զարդագծով: Խեցեղենի գզալի մասը պատրաստված է արագ պտտվող դուրզով: Այս խմբի առանձին խեցանոթների կիրառության ժամանակագրական վերին սահմանը, հավանաբար հասնում է վաղ երկաթի դարաշրջան: Ուշագրավ է, որ մինչ այժմ ուսումնասիրված կուր-արաքսյան մշակույթի հնավայրերն, առանց բացառության, բնակեցված են եղել նաև ուշ բրոնզի դարաշրջանում:

Վաղերկաթեդարյան խեցատներ են գտնվել 29 հուշարձաններում. մասնավորապես՝ բոլոր այն հնավայրերում, որոնք բնակեցված են եղել նախորդ որևէ դարաշրջանում: Կախակն, Բրուտի բերդ, Վարդենիկ, Վանքի դուռ, Մարտունի, Հերի բերդ, Քարե ձի, Նաղարախան, Տաթև, Խոնարիված սուրբ, Բերդի դոշ և այլ հուշարձաններում նախորդ դարաշրջանների նյութեր առայժմ չեն հայտնաբերվել: Քննարկվող դարաշրջանի խեցանոթները ներկայացված են ձծուկների, թաղարների և կճուճների, սափորների, քրեղանների, ոչ մեծ կարասների բեկորներով, որոնք, սովորաբար, ունեն դուրս ծալված կամ պարզապես ընդգծված կլորացող շուրթեր, սև, մոխրագույն, դեղնակարմրավուն, դարչնագույն փայլեցված կամ փայլատ մակերևույթ, միաշերտ միջուկ: Ջարդաբանվածքներում գերակշռում են հորիզոնական խորադիր ակոսները, եղևնազարդերը, եղևնազանախշերը և հատիկազարդերը, շարունակվում են գոյատևել հորիզոնական ուռուցիկ և ներձկված սաղր գոտիները, փայլեցմամբ արված ժապավենները: Գտնվել են անոթների ուսերը զարդարող «գոհասեղանների» և ժապավենաձև կանթերի նմուշներ: Մեծ թիվ են կազմում դուրզով պատրաստված օրինակները: Առանձին անոթների ակոսավորված շուրթերը հարմարեցված են կափարիչով ծածկելուն: Որոշ խեցանոթներ կարելի է թվագրել քիչ ավելի լայն ժամանակագրական սահմաններով:

Խեցեղենի քննության արդյունքում ստացված տվյալները, համադրվելով գրավոր սկզբնաղբյուրների, պեղումների արդյունքների, հուշարձանների ճարտարապետության, տեղադրության, խեցեղենի տեխնիկա-տեխնոլոգիական առանձնահատկությունների և այլ տեղեկությունների հետ, հնարավորություն կտան ճշգրտել ուսումնասիրված հնագիտական հուշարձաններից յուրաքանչյուրի բնույթն ու

գործառնության ժամանակաշրջանը և զգալիորեն ընդարձակել ու խորացնել հետազոտվող տարածաշրջանի հնավայրերի մասին մեր ունեցած պատկերացումների համակարգը:

*Աղավնի ժամկոչյան
ՀԱԻ*

**ՎԱՂՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԵՎՏՐԱ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ՀԱՐԱՐԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ**

1. Միջնադարյան Հայաստանի և հարևան երկրների արտաքին առևտրի փոխհարաբերությունների բարդ ու կարևոր խնդիրը մշտապես շոշափվել է միջնադարյան քաղաքի ուսումնասիրությանը նվիրված աշխատանքներում: Հատկապես Դվինի պեղումների վերջին տասնամյակների արդյունքները նոր նյութեր ընծեռեցին այդ կարևոր հարցի լուսաբանման շուրջ: Պատկերն ավելի քան ամբողջական կլիներ, եթե Հայաստանի միջնադարյան այլ հնավայրերը ևս ըստ ամենայնի պեղվեին: Այդ նպատակով փորձ ենք արել Դվինից հայտնի նյութերին զուգահեռ օգտագործել նաև վիմագրական ու մատենագրական վկայությունները, ճարտարապետական հուշարձանների ընծեռած հնարավորությունները:

2. Ուսումնասիրվող խնդրի սահմաններում կարևորել ենք Հայաստանի V-VII դդ. առևտրական ճանապարհները, որոնք երկիրը կապում էին Միջագետքի, Պարսկաստանի, Միջին Ասիայի, Վրաստանի, Աղվանքի և այլ տարածաշրջանների հետ: Այդ ուղիները հիմնականում երեքն էին՝ Դվին-Պարտավ, Դվին-Նախիջևան-Միջագետք-Պարսկաստան-Միջին Ասիա և Դվին-Տփլիս ճանապարհները:

3. Միջազգային առևտրական կապերը նպաստել են նաև մշակութային հարաբերությունների զարգացմանը, որոնք նկատելի են հատկապես նյութական մշակույթի այնպիսի բնագավառներում, ինչպիսիք են խեցեգործությունը, ապակեգործությունը, մետաղագործությունը և այլն: Այդ իմաստով Դվինից և Հայաստանի այլ բնակավայրերից հայտնաբերված նյութերի մեջ մշակութային ազդեցությունն ու փոխազդեցությունը ակնհայտ է, մի բան, որն անխուսափելի էր քաղաքական ու աշխարհագրական միևնույն միջավայրում ապրող ժողովուրդների համար:

4. Զննության ներկայացվող հիմնական նյութերը Դվինի պեղումներից են անական բնույթի տարբեր խնդիրներ, որոնք երբեմն սուր պայքարի բնույթ են կրել: Նկատի ունենք Հայաստանի, Միջագետքի

(Աղիաբեն) Պարսկաստանի և Միջին Ասիայի հետ միջազգային կապերի ընթացքում նեստորականության խաղաղած դերը, իր դրական ու բացասական ազդեցություններով: Այստեղ հատկապես շոշափելի է նաև ասորական ճարտարապետության թողած ազդեցությունը:

Տիգրան Իսահակյան
ԴԱԻ

ԿԱՎԱՆՈՒԹՆԵՐԻ ԶԱՐԴԱՐՄԱՆ ՄԻ ԵՂԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ

Միջին բրոնզին վերագրվող համալիրներից հայտնի են մեծ քանակությամբ կավանոթներ, որոնք հարդարված են կետաշար կամ գծիկաշար զարդանոտիվներով: Կատարման առանձնահատկությունները նկատի ունենալով, մասնագիտական գրականության մեջ հաճախ է հիշատակվում «ատամնավոր պտտադրոշմիչի», «սանրատամ դրոշմիչի» կամ «քայլող դրոշմիչի» կիրառմամբ նման զարդ ստանալու հնարավորության և հավանականության մասին:

Լճաշենի N 220 դամբարանից հայտնաբերված անոթների վրա կատարած մեր դիտարկումները հնարավորություն ընձեռեցին արձանագրել հետևյալը.

- ինչպես բոլորակված, այնպես էլ ուղղաձիգ դրվագներում, զարդաձևերից յուրաքանչյուրի կետաշարերը տարբեր խտություն ունեն.

- նման փոխանցումներով կետաշարերը տարանջատվում են ըստ հատվածների, որոնք էլ ատամնավոր դրոշմիչի պտույտի (քայլի) տպավորություն են ստեղծում.

Մեկ մոտիվի սահմաններում, «քայլերից» յուրաքանչյուրի համեմատությունը միմյանց չի համապատասխանում: Ավելին, մեր դիտարկած անոթների վրա մեկ զարդանոտիվի կետաշարերի անընդհատության մեջ երկու համամասնական «քայլ» հնարավոր չեղավ փաստագրել:

Նշվածները բացառում են քննարկվող զարդաձևերը «ատամնավոր պտտադրոշմիչով» կատարելու հնարավորությունը: Նման եղանակն օգտագործելու դեպքում պարտադիր է քայլերի հաջորդումը կրկնվող ռիթմերով:

Զարդաձևերում կետաշարերի հաճախականության փոփոխությունները, անկանոն ռիթմով «քայլերի» հաջորդումները և դրանց անհամամասնությունն ու անհամաչափությունը նկատի ունենալով, գտնում ենք, որ դրանք արվել են ձեռքի աջ ու ձախ արագ շարժումներով փորագրիչը «քայլեցնելու» միջոցով:

Մինչև այժմ էլ, ոսկերչության և գեղարվեստական փայտամշակման մեջ նման զարդերը հիշյալ եղանակով են ստանում:

«Քայլող փորագրիչով» արված կետագարդերի մոնոտոնության խտորման համար բավական են թե՛ գործիքի սայրի և անոթի հորիզոնական մակերեսի միջև եղած անկյան և թե՛ ձեռքի տատանումների (քայլի) հաճախականության աննշան փոփոխությունները (ինչը առկա է Լճաշենի N 220 համալիրի անոթների զարդաձևերում): Իսկ կետերի ձևերի նկատվող տարբերությունները պայմանավորված են փորագրիչի սայրի լայնությամբ և ձևով:

Էմմա Խանգադյան
ՀԱԻ

ՄԵԾԱՍՈՐՆ ՈՒ ՎԱՂ ԲՐՈՆԶԻ ԴԱՐԱՇՐՋԱՆԸ

Հայկական լեռնաշխարհի բնական պոտենցիալը, կարևորագույն տնտեսական և մշակույթի ինովացիան պատճառ հանդիսացան վաղ բրոնզի դարաշրջանում (մթա IV հազ. կես - III հազ. կես) յուրօրինակ մշակույթի օջախի առաջացման, որի ուսումնասիրությունը եղել է և մնում է որպես առաջնակարգ կարևորություն ունեցող խնդիր:

Նշված ժամանակաշրջանում Հայկական լեռնաշխարհում ձևավորում է մի մշակույթ, որը բարձր զարգացման է հասնում և բնութագրվում տեղաբնիկների սոցիալ-տնտեսական ու գաղափարախոսության ասպարեզում տեղի ունեցող խոշոր տեղաշարժերով, հարևան առաջավորասիական երկրների հետ ունեցած խոր ու կայուն կապերով:

Հնագիտական հետազոտությունները հաստատում են, որ այդ դարաշրջանի մշակույթն ընդգրկել է Հայկական լեռնաշխարհի գրեթե ողջ տարածքը՝ Տաջից մինչև Հայկական Տավրոս, Սպերից մինչև Մուղան:

Մեծամորը վաղ բրոնզեդարյան ուշագրավ հուշարձաններից մեկն է, որտեղ գործ ունենք մի կենտրոնի հետ, որն առաջացել է վաղ երկրագործական մշակույթի հիմքի վրա:

Ամրոցում պեղվել են վեց շինարարական հորիզոններ՝ կլոր կացարաններով, օվալաձև և ուղղանկյուն օժանդակ շինություններով, պալատական և պաշտամունքային կառույցներով, սալահատակի տակ մանկան թաղումով:

Ամրոցի կիկլոպյան պարսպից դուրս, հարթավայրում տարածվող բնակավայրում, որն զբաղեցրել է գրեթե 30 հա մակերես և շրջափակված է եղել ջրախանդակով, վեր է խոյանում փոքր բլրաշարքի պարզունակ աստղադիտարանը:

Հնագիտական ուսումնասիրությունները հաստատում են, որ Մեծամորում վաղ բրոնզի դարաշրջանը հարատևել է նախնական փուլից մինչև իր ավարտը:

Տնտեսության հիմնական ճյուղերի վերելքն ու կենսամիջոցների առատությունը նպաստում են մշակույթը կրողների հերձատմանը (սեզմենտացիա), բնակատեղիների հիերարխիկ շարքի, կենտրոնական խոշոր քաղաքատիպ ամրոցների, նրանց հարող արբանյակ ոչ մեծ շենքերի առաջացմանը:

Արարատյան դաշտավայրի դեմոգրաֆիական պատկերը համոզում է, որ արտագաղթի պատճառը պայմանավորված չէ էկոլոգիական փոփոխություններով, այն հետևանք է բնակչության գերաճի:

Վաղ բրոնզի դարաշրջանն իր ամբողջության մեջ ներկայանում է իբրև մի միասնական մշակույթ՝ ներքին կայուն ընդհանրություններով, լոկալ որոշ առանձնահատկություններով, ժամանակագրական բազում երանգներով:

*Համազասպ Խաչատրյան
ՇԵԹ, ՇՀՀԿ*

ԲԵՆԻԱՄԻՆԻ ՀԵԼԵՆԻՍՏԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇԻՋԱՆԻ ԽԵՑԵՂԵՆԸ

Բենիամինի անտիկ դաստակերտի առաջին տեղամասի պեղումներով պարզվեց, որ հուշարձանի այս հատվածն ունի երեք շերտ:

1. Ստորին շերտի խեցեղենի առավել խոսուն օրինակներ հայտնաբերվել են այդ շերտին վերաբերող ամբարներից, տնտեսական հորերից և մոնումենտալ կառույցին հարող սենյակներից: Գունագարդ խեցեղենը հանդես է գալիս միագույն և բազմերանգ տարբերակներով: Դրանք հելենիստական ժամանակաշրջանին բնորոշ կիսագնդաձև թասեր են, տափակ նստուկով, թաս-փիալաներ և ընպանակներ, տարակերպ թասեր և պնակներ, ափսեներ, կարճ վզով կժեր, տափաշներ և այլն:

Գունագարդման մեջ տարբեր համադրությամբ օգտագործված են սև, շագանակագույն, կարմիր, դեղին, սպիտակ գույները: Նախշազարդումը կատարված է կարմիր ֆոնի վրա սև, դեղինի վրա՝ սև և կարմիր, բաց շագանակագույնի վրա՝ մուգ կարմիր, սրճագույն և սպիտակ ներկերով: Ջարդամոտիվները երկրաչափական տարբեր պատկերներ են, բուսամախշեր, ծաղկաշղթաներ և այլն: Ջարդամախշերն իրենց հորինվածքային լուծումներով համապատասխանում են ամանների ձևերին և դրանց ընտրությունը կատարված է որոշակի օրինաչափությամբ: Ջարդամախշումը հաճախ կատարված է անփույթ: Ստորին շերտից հայտնաբերվել են նաև սև փայլեցված խեցեղենի նմուշներ, որոնցից մի քանիսն ունեն փայլեցման եղանակով արված զարդամախշեր կամ ակոս-առվակներ: Շերտը թվագրվում է մ.թ.ա. I դարի առաջին կեսով:

2. Երկրորդ շերտը առաջինից անջրպետված չէ: Այստեղից հայտնաբերված խեցեղենը հիմնականում կրկնում է մախորդ շերտի խեցեղենի ձևերն ու զարդամոտիվները, սակայն բազմերանգ գունազարդումը պակասում է: Հանդես են գալիս խեցեղենի մի քանի նոր տեսակներ, որոնք մախորդ շերտում բացակայում են: Դրանցից են օղակավոր ոտքով ամանները, ձկնամանները, ալաբաստրոնի և կրետերիսկի բեկորները: Ի հայտ են գալիս ընդգծված ռելիեֆային անցումով ուղղահայաց կողերով ափսեներ, արտաքին կրկնակի ելուստավոր շուրթով թասիկներ, հարթ հորիզոնական ակոսավոր շուրթով փոքր կնուճներ: Տափաշշերի մեջ գերակշռող է դառնում կիսագնդաձև կամ գնդաձև իրանը: Շերտը թվագրվում է մ.թ.ա. I դարի երկրորդ կես - մ.թ. I դարի սկիզբ:

3. Երրորդ շերտի խեցեղենի մեջ գերակշռողը ամանների ուղղակի պաստառի վրա արված մախշազարդումն է: Թասերի, քրեղանների մեջ գերակշռող են դառնում ներսի կողմից մեկ կամ զուգահեռ երկու գծերով արված խաչերը: Կիսագնդաձև թասերի, քրեղանների գունազարդումը սահմանափակվում է լոկ շուրթի արտաքին կողմում աստառի վրա արված կարմիր գոտիով: Սկ փայլեցված խեցեղենի թիվը ավելի մեծ է և բազմազան: Թաս-փիալաների կողերը ավելի բարձր են, որոնց վրա ի հայտ են գալիս ակոսաձև հորիզոնական երկու-երեք զարդագոտիներ:

Վերին շերտի խեցեղենի մեջ առկա են մի քանի առանձնահատուկ ձևեր, որոնք, անկասկած, ունեն տեղական ծագում: Դրանցից են քթիկավոր և հորիզոնական ունկ ունեցող փիալաները, ուղղահայաց պատերով, հարթ նստուկով գլանաձև ամոթները, եռանկյունաձև ձիթաճրագները և այլն: Դրանք թվագրվում են մ.թ. I դարի երկրորդ կես - II դարի սկիզբ:

Բոլոր շերտերից հայտնաբերվել են բազմաթիվ կոկիչներ, ներկափոշիներ, չթրծված խոտան ամանեղենի բեկորներ: Վերին շերտից հայտնաբերվել է նաև սև տուֆից պատրաստված դուրգի անիվ: Այս ամենը փաստում են տեղում խեցեգործության զարգացման բարձր աստիճանը:

Բենիամինի խեցեղենի մեջ կան նաև բարձրարվեստ կատարումով հասկանշվող մի քանի նմուշներ: Դրանցից են քարայծների, եղջերուների, թռչունների պատկերներով թասերը, բազմագույն պատկերազարդմամբ եղջերուների և թռչունների հորինվածքով տափաշիշը, արևի պատկերներով ղեկորատիվ վահանակը, Բաքոսի վերադիր պատկերաքանդակով կուժը և այլն:

СТАТИСТИЧЕСКИЕ МЕТОДЫ ИССЛЕДОВАНИЯ БЕНИАМИНСКОГО МОГИЛЬНИКА

Современный уровень разработки краниологических материалов позволяет выбирать методы, наилучшим образом способствующие задачам исследования. Рассмотрим разделение некоторой предположительно неоднородной совокупности (могильник Бениамин) на несколько частей, каждую из которых можно было бы считать относительно однородной. Общеметодическая основа решения этой задачи заложена работами представителей русской антропологической школы: Е.М. Чепурковского (1934), А.И. Ярхо (1934), Г.Ф. Дебеца (1948), С.А. Айвазяна и др. (1974), В.Е. Дерябина (1984, 1996).

Ориентировочное заключение о факте неоднородности можно сделать, опираясь на увеличение изменчивости некоторых признаков или на изменения коэффициентов корреляции по сравнению с определенными стандартными уровнями, найденными для выборок из однородных групп населения (Рогинский, 1954; Howells, 1973; Ефимова, 1991).

Череп бениаминского могильника, в основном, европеоидного облика, долихокранные, с умеренным развитием рельефа надпереносья, лицом средней ширины и высоты, средней профилированностью в горизонтальной плоскости. Не исключена небольшая примесь, которая выражается в ослаблении горизонтальной профилировки на некоторых черепах.

Большой размах изменчивости в бениаминской серии показали такие признаки, как основные диаметры черепа и их соотношения, высота лица, лицевой угол, угол носа, размеры переносья. Графики эмпирических распределений ряда признаков для серии имеют тенденцию к двувершинности.

Анализ корреляционной матрицы бениаминской серии мужских черепов показывает нарушение связи продольного диаметра с такими размерами, как поперечный диаметр, высота и скуловая ширина лица, угол его выступания. Самый высокий коэффициент получен для симотической высоты с продольным диаметром. Существенная положительная связь отмечается по длине неба, симотической ширине и указателю, дакриальной ширине и

ширине неба. В женской группе высокий коэффициент получен для назомалярного угла с высотным диаметром. Коэффициенты корреляции зигомаксиллярного угла с шириной носа и высотой орбиты также значительно отклоняются от таковых в однородных группах (Ефимова, 1991). Таким образом, есть веские основания предполагать неоднородность серии и выделить в качестве ведущих признаков углы горизонтальной профилировок лица, выступания носовых костей и симотическая высота.

Археологические материалы почти не дают никаких данных, позволяющих разграничить погребения.

Использование канонического анализа (Дерябин, 1983) позволяет выявить историческую тенденцию в распределении морфологических комплексов, так как он (метод) основан на сравнении внутри- и межгрупповой корреляционных матриц признаков. Анализ проводился по 21 основным краниологическим признакам.

Канонический анализ индивидуальных данных 17 мужских черепов (в анализ были включены только черепа хорошей сохранности) позволяет выделить пять канонических переменных. Несомненный интерес представляет рассмотрение выделенных переменных, особенно первых двух, позволяющих сравнить степень горизонтальной профилированности переносья и лица. Первая каноническая переменная (отражает 78.5% объясняемой изменчивости) в области своих больших величин выделяет - высотный диаметр, высоту и ширину носа, симотическую и дакриальную высоту, симотическую ширину, углы-лицевой, назомалярный, зигомаксиллярный, наклон носовых костей. Вторая каноническая переменная (12.4%) своими большими значениями выделяет длину основания черепа, высоту носа и орбиты, ширину орбиты и симотическую, высоту симотическую и угол лба (p-me). Женская группа в общем повторяет ту же картину, что и мужская.

Таким образом, проведенный анализ показывает сложность антропологического состава населения Бениамин, что проявляется разнообразии морфологических типов. Выявляемый результатами канонического анализа, а также рассмотрением направления корреляционной связи признаков долихокранный, низкоголовый, среднешироколицый морфологический тип с некоторым ослаблением горизонтальной профилировки, представлен в I переменной. Можно отметить, что II переменная, также долихокранная, соотношение высотного диаметра с двумя другими

диаметрами не выходит из границ категорий средних величин. Лицо менее широкое и более высокое с небольшими орбитами и сильно профилированными в горизонтальной плоскости лицом.

Проведенный параллельно метод многомерного шкалирования дал сходные результаты. Многомерное шкалирование (Терехина, 1986) направлено на достижение наглядного представления изучаемых единиц между собой, пространстве 2-3 измерений.

Вполне логично предположить, что наличие в бениаминской серии двух морфологических типов, имеет объяснение соотношением местного и пришлого населения. Об истоках этих типов можно будет сделать вывод в ходе анализа сравнительных материалов с территории Кавказа и сопредельных территорий, который будет представлен в следующих сообщениях.

*Ինեսա Կարապետյան, Ժորես Խաչատրյան,
Ամինա Կանեցյան, Գրիգոր Ղաֆադարյան
ՀԱԻ*

*Զուստո Թրայմա
Իտալիա*

**ԱՐՄԱՎԻՐՈՒՄ 1996-1997 թթ. ԿԱՏԱՐՎԱԾ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

1. Արմավիրում հնագիտական աշխատանքներն իրականացրել է հայ-իտալական համատեղ արշավախումբը: Պեղումները կենտրոնացվեցին բլրի հարավային ստորոտի տարածքում՝ հունարեն արձանագիրքերի հայտնաբերման վայրում:

Արշավախմբի նպատակն էր անդրադառնալ վերջին տասնամյակներին ուսումնասիրողների ուշադրությունից դուրս մնացած հունարեն արձանագիր և մյուս քարերի ճակատագրին:

2. Մանրակրկիտ հետախուզվեցին բլրի հարավակող լանջերը և ստորոտը, մաքրվեց հունարեն արձանագիրքերի շրջապատը, հայտնաբերվեց երկու մեծ ժայռաբեկոր, ծածկված տարաչափ փոսորակներով, որոնք նախկին նյութերի և հարուստ պատկերներով ծածկված քարի հետ (թիվ 4, Տրեվեր, 1951) հնարավորություն ստեղծեցին սկսել միասնական ուսումնասիրությունը:

3. Հայտնաբերված քարերից երկարուկ աղեղնաձևը (թիվ 5) նոր գտածո պետք է համարել: Մյուսը՝ անկանոն գնդաձև է, ծածկված փոսորակներով, քառակող ելուստներով, ակոսներով, աստիճանաձև փոր-

վածքներով: Պարզորոշ երևում է, որ այն կոտրված է և կորցրել է իր նախնական ձևը: Ուշադիր դիտարկմամբ և համեմատությամբ՝ հնարավոր եղավ այն նույնացնել 1927թ. Ս.Տեր-Ավետիսյանի հայտնաբերած քարի (թիվ 3) հետ, որն իր վրա կրել է նաև հիերոգլիֆային նշաններ, որոնք այժմ չեն պահպանվել:

4. Տրեվերի հայտնաբերած քարի եզրերը կոտրված են, իսկ վերին մակերեսի պատկերների մի մասը՝ եղծված: Այնուամենայնիվ, մանրամասն դիտարկումները հրապարակումների և լուսանկարների համեմատությամբ պարզեցին, որ այն 1908թ. հայտնաբերված հունարեն արձանագիր առաջին քարի կոտրած մասն է, որը մինչ այժմ համարվում էր ընդմիշտ կորած:

Այս քարերի կարևորությունը պայմանավորված է դրանց վրա փորագրված խորհրդանիշերի և պատկերների, հատկապես առաջին քարի վրայի «աստվածության» պատկերի առկայությամբ: Սրանց ճիշտ մեկնաբանությունը լույս կսփռի Արմավիրի և Հայաստանի հնագույն բնակիչների տիեզերաընկալման և պաշտամունքային պատկերացումների մանրագիտության հարցերի վրա:

5. Բլրի հարավային ստորոտի մշակութային շերտագրական պատկերը հստակեցնելու նպատակով՝ հետախուզական խրամատ դրվեց արձանագիր (թիվ 2) քարից արևմուտք: Այստեղ 1,3մ խորության վրա բացվեց 0,7մ թանձրությամբ ուրարտական շերտ, ինչ որ սենյակի սալարկված հատակի հատվածով: Հատակի տակ 2,3մ խորության վրա բացվեց կավե տոփանված հատակ՝ վաղ երկաթի դարաշրջանով թվագրվող խեցեղենի մնացորդներով:

Հայկ Հակոբյան
ՀԱԻ

ՊԱՏԿԵՐԱԳՐՎԱԾ ԿԱԿԵ ՍԱԼԵՐ ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

1997թ. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան հ. Գուրգենը մեր ուշադրությունը հրավիրեց տարիներ առաջ պատմական Հայաստանի հյուսիսում՝ հին Ախլցխա քաղաքից քիչ հարավ, շինարարական աշխատանքների ընթացքում ավերված ինչ-որ շինության մնացորդների, սրանց հարևանությամբ վեր հանված մարդկային աճյունների ու խեցեղեն իրերի բեկորների վրա: Այստեղից ծագող ու ժամանակավորապես մեզ տրամադրած կավե թրծած սալերի չորս բեկորները, մեր կարծիքով, պատկանում են երեք կամ չորս գրեթե միանման նմուշների, որ հնարավորություն է տալիս լիովին վերականգնել խորաքանդակի հորինվածքը (սալերի չափերն են՝ 28x21x3,5(4) սմ):

Աղյուսի վրա հայելային կերպով պատկերված են միանման երկու կենդանիներ: Երևակայական հորիզոնից վեր ու վար երևում են կենդանիների վերջույթները, իսկ մեջքերն ու ոլորված պոչերը հարում են արտաքին եզրից քիչ մերս վերադրած՝ ցածր ռելյեֆով արված հյուսածո զարդագոտիներին: Կենդանիների մարմինները մշակված են ուղիղ անկյան տակ հատվող ռելյեֆ գուգահեռների խոր ցանցազարդով: Լայն բացած ու իրար հակադրած կտուցների /բերանների/ միջև՝ նույն հյուսածո, բայց ավելի մանր զարդանախշերով, վերարտադրված է ջրի կամ կրակի շիթ: Կենդանիների պոչերի միջև գետնված են մեծ ու փոքր քառակուսիներ, որոնցից վերջինի ներսը հատած է անկյունագծերով, իսկ մյուսի կենտրոնում՝ ռելյեֆ շրջանակներից 1,5սմ ավելի բարձր՝ պատկերված է մի քառակուսի թմբիկ: Կենդանին սինթետիկ, ֆանտաստիկ էակ է. այն ունի ծիու գլուխ, ոճավորված եռանկյուն եղջյուրներ, թռչնային կտուց, կատվազգի կենդանու մարմին ու պոչ: Վերջույթները սմբակաձև են, իսկ մի բեկորի վրա ավարտվում են ճանկավոր թաթով: Կենդանիների մարմինները պատրաստված են առանձին կաղապարների մեջ և ապա վերադրած այլ կաղապարով ստացված քառանկյան ֆոնին: Աղյուսները, անկասկած, պատճենահանված են ինչ-որ քարե խորաքանդակից: Իմաստաբանորեն աղյուսների վրա ներկայացված կենդանիների պատկերներն, ըստ երևույթին, խորհրդանշում են վերն ու վարը, ստորերկրյայքն ու երկինքը և առնչվում են մահվան ու հարության գաղափարին: Սալերի պատկերագրությունը, սրանց հետ ավերված շինության ու աճյունների առկայության փաստերը թույլ են տալիս ենթադրել, որ հնավայրը եղել է գետնափոր դամբարանային կառույց, իսկ հիշյալ պատկերազարդ աղյուսները (Աղցի նշանավոր դամբարանի նմանությամբ), զարդարել են կառույցի ներսը կամ ծածկել թաղման խորշերը: Սերտորեն կապված լինելով հինարևելյան ավանդույթներին ու պատկերագրությանը, ներկայացված խորաքանդակները, չի բացառվում, որ ժամանակագրորեն ու գաղափարով կարող են հարել նաև վաղքրիստոնեական Չայաստանի արվեստի մի քանի նմուշների /Ն.Մառ, Բ.Առաքելյան, Ա.Քալանթարյան/: Չնարավոր է թերևս ենթադրել, որ աղյուսների վրա ներկայացված է հայ բանահյուսությունից հայտնի «արալեզների» պատկերագրական մի տարբերակ:

ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՁԵՆՔԵՐՆ ՈՒ ՁՈՐԱՅԵՍԱԿՆԵՐԸ

1. Հայաստանի միջնադարյան հուշարձանների պեղումներից հայտնաբերված նյութերի հավաքածուներում առանձին խումբ են կազմում զենքերը, որոնք լայն պատկերացում են տալիս կիրարկված զինատեսակների հարուստ տեսականու և այն կրող զինուժերի վերաբերյալ:

2. Ձենքերի համապարփակ ուսումնասիրությունը խնդիր ունի վերականգնել ժամանակի մարտական տեխնիկան, զինագործության արդիականության մակարդակը, մարտավարության եղանակները: Վերջինս, միաժամանակ, հնարավորություն է ընձեռում նյութական մշակույթի՝ կոնկրետ գտածո զենքերի առկայությամբ, հավաստել ժամանակագիրների թողած վկայությունները:

3. Լինելով մետաղամշակության հարուստ ավանդույթների երկիր և գրավելով աշխարհաքաղաքական և ռազմավարական շատ կարևոր դիրք, բնական է, որ Հայաստանը պետք է ունենար ժամանակի պահանջներին համապատասխանող զենք և զորատեսակներ:

Հայոց բանակը կամ Հայոց գունդը վաղ միջնադարում Արշակունիների և մարզպանության շրջանում տարաբաժանվել է հետևյալ խմբերի.

1. տանուտերականի, 2. մարդպետականի,

3. սեպուհականի և 4. վասպուրականի:

4. Ձենքերի ընդգրկումն և մանրագին քննությունը թույլ է տալիս գտածո հարուստ տեսականին տարբերակել երկու հիմնական խմբի.

ա. հարձակողականի և բ. պաշտպանական զրահավորման:

Հարձակողական զինատեսակներն են. 1. պարսատիկ, 2. նետ և աղեղ, 3. նիզակ, տեգ, գեղարդ, 4. դաշույն, 5. թուր, սուր, սուսեր, սվին, 6. սակր կամ վաղր, 7. մուրճ և ճկիռ, 8. պարիսպներ և այլ կարգի ամրություններ քանդող մեքենաներ՝ էշ, փիլիկուան, բաբան, 9. հրծիգ նյութեր:

Պաշտպանական հանդերձավորման մեջ էին մտնում վահանը, սաղավարտը, զրահը, բազպանը, զանգապանը և այլն:

5. Ըստ զինատեսակների՝ միջնադարյան Հայաստանում գործող հիմնական զորատեսակները եղել են հետևյալը և հեծելազորը, ներքին տարատեսակ բաժանումներով /նետածիգներ կամ «մերկեր», վաղրավորներ, աղեղնավորներ, նիզակավորներ, սակրավորներ և այլն/:

Առանձին զորամիավորում էր Հայոց այրուծին, որն ամենամարտունակն էր՝ զրահավորված պաշտպանական և հարձակողական բոլոր զինատեսակներով:

*Միմոն Հմայակյան, Հայկ Հակոբյան
ՀԱԻ
Ռաֆայել Բիշիոնե, Նեյդա Պարմեջիանի
ՍԷԱԻ (Հռոմ)*

*ՍԵՎԱՆԻ ԱՎԱԶՆՆՈՒՄ ՀԱՅ-ԻՏԱԼԱԿԱՆ ԱՐՇԱՎԱԽՄԲԻ 1996-1997ԹԹ.
ԿԱՏԱՐԱԾ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ*

1. Հայ-իտալական արշավախումբը 1996-1997 թթ. շարունակեց Սևանա լճի հարավային ավազանի ուրարտական և համաժամանակյա հուշարձանների ուսումնասիրությունը: Այս ընթացքում հետազոտվել են 17 մինչքրիստոնեական հուշարձանախմբեր (չափագրություն և տեղահանության կազմում, տեղանքի երկրաբանական կառուցվածքի նկարագրություն, լուսանկարահանում, քարտեզագրում, վերգետնյա նյութի ընտրություն և թվագրում), որոնցից մեկը՝ Սողք-2, նորահայտ բազմաշերտ բնակավայր է: Քարտեզագրված են նաև շուրջ 20 ուրիշ դամբարանադաշտ ու բնակավայր (հիմնականում միջնադարյան):

2. Շարունակվել են պեղումները Ալ-բերդ և Մթնածոր ամրոցներում: Ալ-բերդում բացվել է պարսպապատի մի նոր հատված, իսկ Մթնածորում՝ նախորդ տարի պեղված պաշտամունքային շինության կցակառույցը:

3. Վարդենիսի ենթաշրջանի հյուսիս-արևելքում գտնվող Այրք (նախկին Դաշքենդ) գյուղի Սբ. Գևորգ եկեղեցու հարևանությամբ՝ 1997թ. սկսվեցին արևելքից արևմուտք ձգվող պարսպի մի հատվածի պեղումները: Թեև աշխատանքներն այստեղ դեռևս չեն ավարտված, կարելի է եզրակացնել, որ ամրոցը պետք է կառուցված լիներ ուրարտական դարաշրջանում կամ առնվազն մեկ-երկու դար ավելի ուշ: Անտիկ դարաշրջանում ուսումնասիրվող հատվածը գրեթե անփոփոխ էր մնացել: 12x5 մետր մակերեսով բացված հատվածում պարզվեց, որ վերգետնյա կառույցն իրականում աշտարակի մի մաս էր՝ մեծ սալաքարերով վերևից ծածկված պահեստային բաժանմունք: Մինչդեռ, մոտ 1մ խորությունից՝ սրան կից բացվեց աշտարակի շարունակությունը, որտեղից, ամենայն հավանականությամբ, աստիճանով բարձրացել են պարսպի վերնամաս: Միջնադարում պաշտպանական այս հանգույցին հավելվել էր մի նոր հատված՝ արևմուտք և հարավ ձգվող պատերի օգնությամբ: Սրա հետևանքով՝ ստանալով ևս մի ծունկ, պարիսպն ընդարձակվել էր դեպի հարավ-արևմուտք: Այստեղից գտնված միջնադարյան խեցեղենը, սրան համաժամանակյա կանոնավոր կցակառույցը և IX-Xդդ. գրեթե ամբողջական խաչքարը լրացնում են

ժամանակին Ս.Բարխուդարյանի հայտնած կարծիքը, թե Այրք վերանվանված բնակավայրը Դոփյանների Ծար իշխանանիստ գյուղն է՝ հիշատակված Ստ. Օրբելյանի կողմից:

4. Պեղվող մյուս հուշարձանը՝ Քոա ամրոցը, գտնվում է ներկայիս Վարդաձոր և Երանոս գյուղերի հողատարածքում: Բ.Բ. Պիտրովսկու և Լ.Տ. Գյուզալյանի կարծիքով՝ հենց այստեղից էր ժամանակին տարվել «Աղամխանի» սեպագիր արձանագրությունը, և սա էր Սարգուրե 2-րդի արձանագրության մեջ հիշատակված Տուլիխու «արքայական» քաղաքը: Գյուղացիների վկայությամբ՝ բլրի վրա ժամանակին բացվել են կարասներ, իսկ ստորոտին՝ թերևս միջին-բրոնզեդարյան թաղումներ: Այս բազմաշերտ հնավայրի վերգետնյա նյութի մեջ, բացի տարբեր դարաշրջանների խեցեղեն անոթների բեկորներից, գտնվեցին վանակատի բազմաթիվ գլաքարեր: Պեղումներն ամրոցում 1997թ. սկսվեցին միջնաբերդի ներսում: Այստեղ, մոտ 1մ խորության վրա, բացվեց մի շինության հատված՝ սալարկված հատակով, որը հարավ-արևելքում սահմանափակված էր կիսամշակ քարերից շարված հաստ պատով ու սրա առաջ՝ երկայնքով ձգվող մաստաբայով: Հորիզոնի նյութը պետք է թվագրել մ.թ.ա. VI-IV դարերով: Սրանից ներքև բացված ավելի հին և խնամքով շարված սալահատակի վրայից վերցված սակավաթիվ խեցեղեն բեկորները տիպաբանորեն բավական բնորոշ են վաղ երկաթի մշակույթին: Ընդ որում՝ Սարգուրյան ժամանակաշրջանի վանտոսայան խեցեղեն փոսորակում առայժմ չի հայտնաբերված: Քռայում և Այրքում հնագիտական աշխատանքները դեռ չեն ավարտված:

Պատահական գյուտեր

5. 1997թ. Լեռնակերտ գյուղի եզրին, շինարարական աշխատանքների ժամանակ, մոտ 2.9 մ խորությունից պատահաբար բացվել էր թաղում. կողերին դրված սալաքարերով արկղի ներսում կողք-կողքի պահպանվել էին երկու հանգուցյալների մնացորդներ՝ ուղղված հյուսիս-հարավ: Սալարկող հատակից 1.2մ վեր ծածկված էր խճաքարից ու կավահողից բաղկացած ամուր շերտով, որը միաժամանակ հատակ էր ծառայում թանձր մոխրաշերտի մեջ բացված հոգեհանգստի պոքիբուտների՝ շարժական կրակարանի, քարի սալերի ու վարսանդի համար: Թաղումը վերաբերում է հելենիստական դարաշրջանի վերջին:

6. 1996թ. Գեղհովիտ գյուղի գերեզմանոցի հարևանությամբ, շինարարության ընթացքում բացվեց և անմիջապես արշավախմբի կողմից ուսումնասիրվեց անտիկ դարաշրջանում կառուցված արտադրական-պաշտամունքային նշանակության կառույցի մի հատված (ցավոք՝ դրա մի մասն արդեն ավերված ու ներառված էր նորակառույցի մեջ): Այստեղ հայտնաբերվեցին երկու տարապաններ, քառակող մի Ֆալոս 3,5 մ

բարձրությամբ, ոճավորված մենհիր հիշեցնող մի կուռք և, թերևս, XI-XIII դարերում տեղադրված մի խաչքար:

7. Ժամանակին՝ Երանոս գյուղի հելենիստական բնակավայրի տարածքում, հայտնաբերվել էին շուրջ 10 կավե արձանիկներ, որոնցից երկուսը 1996թ. հանձնվեց արշավախմբին: Արձանիկներից մեկը ներկայացնում է Ափրոդիտե-Աստղիկին՝ մի ձեռքով հենված սյան խոյակին (սրա տարատեսակները հայտնի են հին Արտաշատից), իսկ մյուսը՝ բազմած կիսամերկ աստվածություն է՝ հար և նման 1988թ. Անուշավանից (Շիրակի մարզ) գտնված «Տիրի» արձանիկին: Նմուշները թվագրվում են մ.թ.ա. I դարով և Սևանի ավազանում հայտնի առաջին արձանիկներն են:

Սիմոն Հմայակյան
ՀԱԻ
Հովհաննես Սանսյան
ՀՀԳԽ

ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՎԱՋԱՆԻ ՊԱՇՏՊԱՆԱԿՈՒ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

1. Սևանա լճի ավազանի ամրոցների ուսումնասիրությունները՝ նպատակ ունենալով կապել այդ ամրոցները եղած հնագիտական դամբարանային նյութի և սեպագիր տվյալների հետ, սկսվել են 1930-ական թվականներից:

2. Հայ-իտալական արշավախումբը Սևանա լճի հարավային ավազանում 1994-1997 թթ. ուսումնասիրել է տարբեր ժամանակաշրջանների ավելի քան 70 հուշարձաններ, որոնցից 31-ը ամրոցներ են: Այդ հուշարձանները թվագրվել են հավաքված վերերկրյա նյութի հիման վրա, մի թվագրություն, որը չի կարող դիտվել որպես բացարձակ ստույգ: Միայն այդ նյութի քննությամբ հնարավոր չէ նաև որոշել ամրոցների հիմնադրման ժամանակը: Սակայն ամրոցների շինարվեստի և տարածաշրջանի պաշտպանական համակարգի վերլուծությունը հնարավորություն է ընձեռում ճշգրտել վերերկրյա նյութի քննությամբ ստացված տվյալները:

3. Ուղուրի Էթիունի և Տուլիխու «երկրների» ամրոցների համակարգը ձևավորվել է վաղ երկաթի դարում: Այդ համակարգի հիմնական ատաղձն էր կազմում քարվաճառ տանող լեռնանցքից սկսվող և դեպի արևմուտք՝ Գեղամա լեռներ ձգվող ճանապարհի երկարությամբ կառուցված ամրոցների գրեթե ուղիղ գծի կազմող շղթան: «Շղթան»

կազմող 12 ամրոցները տեղադրված են հարթավայրի հարավակողմում բարձրացող լեռնազանգվածների մոտ, հիմնականում՝ 1950-2200 մ բարձրության վրա գտնվող բլուրների և կամ հրվանդանների վրա: Սրանցից բացի, արևմուտքում, Սելիմի լեռնանցք տանող հիմնական և ճյուղային, ինչպես նաև Վեդու գետահովիտը տանող ճանապարհները վերահսկող 2 խումբ կազմող 8 այլ ամրոցներ կան:

4. Վաղ երկաթեղարյան ամրոցների այս համակարգը կազմված է հինգ ամրոցախմբերից, որոնցից յուրաքանչյուրը համընկնում է ուրարտական սեպագիր աղբյուրներում հիշատակված տեղի հինգ իշխանությունների տարածքի հետ: Ամրոցախմբերից յուրաքանչյուրը կազմված է մայրուղու մոտ գտնվող փոքր կամ միջին մեծության ամրոցներից և մեկ կամ երկու խոշոր, երբեմն մայրուղուց համեմատաբար հեռու տեղադրված բերդաքաղաքից:

Ուշագրավ է, որ Մարտունի գետի հովտում գտնվող Լուերունի իշխանության պաշտպանական համակարգը կազմող յոթ ամրոցներից հինգը շրջակա հողատարածություններով հանդերձ ոռոգվել են ջրամատակարարման ճյուղավորված համակարգով («Գերու» ջրանցք):

5. Ուրարտական ժամանակաշրջանում պաշտպանական այս համակարգը վերահիմաստավորվել է, եղած տվյալների համաձայն՝ օգտագործվել են միայն լճի հարավակողմի հիմնական մայրուղին պաշտպանող ամրոցներից ութը և Սելիմի լեռնանցք տանող ճանապարհի վրա գտնվող մեկ ամրոց (Ալ-բերդ): Բացի այդ, հիմնական մայրուղու վրա կառուցվել են երեք նոր ամրոցներ, իսկ մեկն էլ կառուցվել է Սողքի լեռնանացք տանող ճանապարհին:

6. Վաղ երկաթի դարում կազմավորված պաշտպանական այս համակարգը մասնակի փոփոխություններով գործել է նաև հետուրարտական շրջանում և միջնադարում:

7. Սևանա լճի հարավային ավազանի ամրոցներն ըստ տեղադրության բաժանվում են չորս խմբի. ա) բլրի գագաթին, բ) սարալանջին, գ) սարահարթի վրա, դ) հրվանդանի վրա կառուցված ամրոցներ: Տեղանքի ընտրության այս առանձնահատկություններից է բխել տվյալ ամրոցի պաշտպանական համակարգի առանձնահատկությունը:

8. Ամրոցների պարսպապատերն ունեն տարբեր հորինվածքներ. ա) առանց որմնահեցերի, կորագիծ կամ ուղղագիծ հատակագծերով պարսպապատեր, բ) հատակագծում բեկյալներ կազմող պարսպապատեր, գ) որմնահեցերով ամրացված պարսպապատեր, դ) խոշոր ուղղանկյունաձև աշտարակներով ամրացված պարսպներ: Բոլորն էլ երկճակատ են, եռաշերտ միջնալիցքով: Ըստ որում, միևնույն ամրոցը կարող էր պատրաստված լինել վերոհիշյալ պարսպների տեսակների տարբեր համակցությամբ:

ԿԱՅԱՆ ԲԵՐԴԻ ԱՌԵՂԾՎԱԾԸ

X - XIII դդ. Հայաստանի նշանավոր բերդերից մեկն էր Կայանը, Բագրատունիների և Ջաքարյանների ռազմական հենակետը հյուսիսային Հայաստանում: Նրա տեղադրությունը երկար ժամանակ ճշտված չէր, քանի որ գրավոր աղբյուրները բավարար չէին այդ խնդիրը լուծելու համար: Ամիրաթեշտ էր նաև տեղագրական ուսումնասիրություն և պեղումներ:

Վերջին տասնամյակներում /1970-1990թթ./ այդ ուղղությամբ կատարվել է որոշակի աշխատանք, նոր տվյալները օգնում են նշված խնդրի պարզաբանմանը:

1. 1969-70 թթ. Աղստևի հովտում մեր կողմից կատարված տեղագրական ուսումնասիրությունը բերեց այն եզրակացության, որ հովտի միջին հոսանքում կանգուն միջնադարյան ամրոցը, ներկայումս «Աղջկա բերդ» կոչված (զետի ձախ ափին), համապատասխանում է պատմական Կայանին: Նրա միջնաբերդը բարձր ժայռի կատարին է, որը եզերված է պարիսպներով /4-7մ բարձրությամբ/, ունի կանգուն սենյակներ, ջրավազան, եկեղեցի, (այժմ կիսավեր) և այլ շինությունների մնացորդներ: Ժայռը անառիկ է, նրա ստորոտներին (հատկապես արևելյան) պահպանվել են սենյակների, պաշտպանական պարսպի մնացորդներ: Ժայռի լանջերը պատերազմի, ժամանակ ծառայել են որպես ապաստանավայր գավառի բնակչության համար (ինչպես 1236թ. մոնղոլների ներխուժման ժամանակ):

Այսպիսով, կատարի ամրությունը ամրոցի միջնաբերդն է, արտաքին պարիսպների դերը կատարում է բարձրադիր անմատչելի ժայռը, իսկ արևելյան և հարավային ստորոտների կառույցները՝ նրա պաշտպանական առաջին գիծն է. «Աղջկա բերդը» (Կայանը) ունեցել է դիտակետեր, դրանից զլխավորը կառուցված է զետի աջ ափին, մայր-ամրոցի դիմաց, այժմ կոչվում է Մանթաշ (նաև՝ Կարա-կալա, Աշոտ Երկաթի բերդ): Սա մեր կարծիքով պատմական Կայանն է:

2. Կայանի վերաբերյալ մեր եզրակացությունները շարադրված են մեր երկու հրապարակումներում՝ «Տաշիր-Չորագետ (մենագրություն)», Եր., 1982, էջ 21-42, «Կայան ամրոցը և նրա տեղորոշման խնդիրը», «Հուշարձան», տարեգիրք, Բ, Եր., 1993, էջ 73-80:

3. Պատմիչ Կիրակոս Գանձակեցու վկայությամբ՝ մոնղոլները Կայանի պաշարման ժամանակ ամրոցի դիմաց կառուցել էին պարիսպ, նրա մնացորդները առկա են Աղջկա բերդի ստորոտում և չկան Մանթաշի մատույցներում:

4. Կայանի տեղորոշման հարցով զբաղվել է նաև հնագետ Յ. Եսայանը: Նա պեղումներ է կատարել Աղջկա բերդի միջնաբերդում և Մանթաշում: Առարկելով մեզ՝ նա կարծիք է հայտնել, թե Կայանին համապատասխանում է ներկայիս Մանթաշը (տես «Материальная культура бассейна р.Агстев в развитии средрвековье», Ер., 1992, էջ 26-29, 36-43): Սակայն Յ. Եսայանը Աղջկա բերդի ստորոտում ու լանջերում պեղումներ չի կատարել, ծանոթ չէ ամրոցի առաջին գծի պաշտպանական համակարգին, հաշվի չի առել նաև Կիրակոս Գանձակեցու վկայությունը, ուստի նրա ծանոթությունը Աղջկա բերդի հետ թերի է, իսկ եզրակացությունը՝ սխալ:

5. Մանթաշի ժայռի վրա ժամանակին /Xդ./ կառուցվել է միայն փոքր դիտակետ, հակառակ Յ. Եսայանի կարծիքի՝ ժայռում չկա միջնաբերդ, իսկ ժայռի ստորոտում՝ ամրոց:

6. Աղջկա բերդը պաշտպանական բարդ կառուցվածք ունեցող շինություն է, այն ունեցել է մայր կառույց, վերջինիս ստորոտում առանձին պաշտպանական գոտի և առնվազն երկու դիտակետ /գետի ձախ և աջ ափերին/: Բոլորը միասին կազմել են մեկ ամբողջություն՝ ամրոց:

Աղջկա բերդը, բոլոր հատկանիշներով՝ բացարձակ չափերով, պաշտպանական և տնտեսական շինություններով, անմատչելիությամբ և այլն, զգալիորեն գերազանցում է Մանթաշին: Անկասկած, Աղջկա բերդն է համապատասխանում պատմական Կայանին:

*Աշոտ Մանուչարյան
ՀԱԻ*

ՈՒՄ ԿՎՐՈՂ Է ՊԱՏԿԱՆԵԼ ՍՎՆԱԴՆԻ ՆՈՐԱԴԱՅՏ ՏԱՊԱՆԱՔԱՐԸ

1996 թ. աշնանը ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի վիճագրագիտական արշավախումբը Սանահնի վանական համալիրում աշխատանքներ կատարելիս՝ Ս. Աստվածածին եկեղեցու զավթում գրանցեց նախորդ ուսումնասիրողների ուշադրությունից վրիպած հարթ մակերեսով մի տապանաքար՝ ուշագրավ արձանագրությամբ:

ԴԵՄԵՏՐԵ ԹԱ ՀՈԳՑՈՂՆ: Ըստ բառարանային բացատրությունների՝ հոգցող /հոգացող/ նշանակում է որևէ կարգի լիազորություններով օժտված անձ՝ պաշտոնյա, խնամակալ, հոգաբարձու, որը միջնադարում պետք է լիներ ոչ միայն մեծատոհմիկ, այլև բարձրաստիճան պաշտոնյա՝ օժտված ամիրսպասալար, աթաբեկ բարձրակոչ տիտղոսներով: Քանի որ Դեմետրե Ա-ի գահակալության տարիներին (1125-1156 թթ.)

հայ ազնվական տարրը վրաց արքունիքում դեռևս ազդեցիկ չէր, պետք է ենթադրել, որ տապանաքարի տակ Դեմետրե Բ Անձնագոհի ժամանակներում (1275-1289 թթ.) Հայաստանի նշանավոր տոհմերից մեկի բավական հայտնի ներկայացուցիչ է ամփոփված: Նախ՝ անհրաժեշտ է նկատել, որ հիշյալ ժամանակաշրջանում որպես թագավորի խնամակալ-հոգաբարձու կարող էին հանդես գալ Սադուն Արծրունին (1272-1285 թթ.), Մխարգրծել Ջաքարյանը (1285.), Տարսայիճ Օրբելյանը (1235-1290 թթ.) և Խուբլու-Բուղա Արծրունին (1287/90-1293 թթ.):

Խնդրո շրջանակից Սադուն, Մխարգրծել ու Տարսայիճ իշխանները դուրս են գալիս այն պարզ պատճառով, որ քաջ հայտնի են նրանց գերեզմանների գտնվելու վայրերը՝ առաջինը Հաղբատում, երկրորդը՝ Քոբայրում, իսկ վերջինը՝ Ամաղուի Նորավանքում: Մնում է Խուբլու-Բուղա Արծրունու հարցը, մի գործիչ, որը գերիշխող դիրք է ունեցել վրաց արքունիքում, թագավորից հետո համարվել երկրորդը, մեծապես ազդել երկրի ներքաղաքական կյանքի վրա, անգամ միջամտել թագադրության խնդիրներին՝ գահընկեց անելով ու գահին բազմեցնելով ցանկալի թեկնածուին: Նրա գերեզմանի տեղը առայժմ մնում է անհայտ: Եթե նրա հայրը՝ Սադուն Արծրունին, թաղվել է Հաղբատավանքում, ապա տրամաբանորեն որդին էլ պետք է այնտեղ ամփոփված լիներ: /Տեղին է հիշել Հաղբատի Ս. Նշան եկեղեցու գեղեցկադեմ երիտասարդի պատկերով որմնանկարը՝ «պարոն Խուբլու-Բուղային մահվան դատապարտելիս՝ զրկեին նրան նաև սեփական տիրույթներից: Այդ դեպքում մնում էր հուղարկավորության համար ընտրել մոտակա ոչ պակաս հռչակավոր Սանահնի վանքը: Այստեղ իրավական տեսանկյունից կարող էր դեր ունենալ նաև այն կարևոր հանգամանքը, որ Սանահնի Ամենափրկիչ եկեղեցին և հատկապես կից գավիթը, որտեղից հեռու չէ Հոգոցի շիրիմը, ըստ Հովհաննես վանական առաջնորդի 1181թ. արձանագրության՝ «ի հիմնաց» կառուցվել է Մահկանաբերդի Արծրունյաց տոհմի նահապետ Ամիր Քուրդ Աբուլ-Հասան իշխանի օգնությամբ:

Հուսիկ Մելքոնյան
ՀԱԻ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ԵՐԿՈՒ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ

1. Վայոց ձորի Եղեգիս գյուղաքաղաքից մի քանի կիլոմետր հեռավորությամբ, Եղեգիս գետի աջ ափին, մի բարձրադիր տափարակի վրա գտնվում են նշանավոր Հերմոնի վանքի ավերակները: Վանքից

հինգ հարյուր մետր հեռավորությամբ, բարձր ժայռի վրա տարածվում են վանական մեկ այլ հուշարձանախքի ավերակներ, ուր առկա են եկեղեցին (5,0x4,5), գավիթը և հարավային մասում մի շինություն: Սրանց շուրջը շրջապատված են բնակելի ու տնտեսական շինությունների մինչև երկու մետր բարձրությամբ պահպանված փլատակներ: Եկեղեցին կառուցված է բազալտի սրբատաշ քարով: Ներսում ընկած մի մեծ սալաքարի վրա պահպանվել է ընդարձակ կիսեղձ արձանագրություն, որի առանձին բառերից հնարավոր է ենթադրել նրա նվիրատվական բնույթը: Թվագրված է 1322թ.: Հուշարձանախանքի հյուսիս-արևմտյան մասում գերեզմանատունն է, ուր խաչքարերից մեկի վրա փորագրված է ՏՐ ԱԾ ՅԱ ՔԱ ՈՂՈՐՄԵԱՅ ՕԱԳԻՆ, ԹՎ ԻՆ: ՊԾԳ (1504թ.): Ստեփանոս Օրբելյանը, ներկայացնելով Հերմոնի վանքի հիմնադրման պատմությունը՝ նկարագրում է այն տեղանքը, ուր «խոտակերաց և աստուածագեաց ճգնաւորաց» խումբը ապաստան էր գտել իրենց գլխավոր՝ Ահերմոնի առաջնորդությամբ: Պատմիչը գրում է. «...ի ծերպս արձանականգ վիմացն որ ի վերոյ եղեգեաց ի ձորն, բարձրահայեցիկ ի վերայ գետոյն, որոց տեղիքն Քարեվանս կոչիւր»: Շարունակության մեջ պատմիչը նշում է, որ վանքը հիմնադրվեց Քարեվանից ներքև. «տեղի մի տափարակ ի ներքոյ քարոյն»: Այսպիսով պարզ է դառնում, որ պատմիչի հիշատակած Քարեվանը և Հերմոնի վանքից վերև, ժայռերի գագաթին գտնվող հուշարձանը նույնն են:

2. Եղեգիս գյուղաքաղաքից մոտ 3 կմ հեռավորությամբ, երեք կողմերից բարձր սարերով շրջապատված ձորակի մեջ, բլրի գագաթին գտնվում են հուշարձանախանքի ավերակներ. որոնք թուրքերեն հորջորջմամբ հայտնի են Գյուլում Բուլաղ անունով: Գլխավոր կառույցը բազալտի սրբատաշ քարով կառուցված Սբ. Աստվածածին եկեղեցին է (6,0x4,5մ), իսկ արևմտյան կողմում գավիթն է: Սրանց շուրջը տարածվում են բազմաթիվ շինությունների փլատակներ: Թափված քարերի վրա այսօր առկա են վեց արձանագրություններ, որոնք վերաբերում են 13-18-րդ դարերին: Մասնագիտական գրականության մեջ հուշարձանը նույնացվել է Վայոց ձորի նշանավոր Վերին Նորավանքի, այլ դեպքում Գլաձորի համալսարանի հետ: Հարցի լուսաբանման համար շատ կարևոր է 1428 թ. Եղիա Հաղորոթեցու ընդօրինակած ավետարանի հիշատակարանը, համաձայն որի «...գրեցաւ նորիք մատենաս ի յանապատիս որ կոչի ճգնաւորի Քար, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս, որ է մոտ ի քաղաքս Եղեգիս...ի թվիս Հայոց ՊՅԷ (1428թ.)»: Համաձայն այս վկայության՝ «ճգնավոր Քար» անապատի եկեղեցին կրում է Սբ. Աստվածածին անունը: Այսպես է կոչվել նաև քննարկվող հուշարձանախանքի եկեղեցին: Հուշարձանը գտնվում է Եղեգիսի մերձակայքում: Հիշյալ հանգամանքները հիմք են տալիս ենթադրելու, որ Եղեգիսի մերձակա միաբանության ավերակները վերաբերում են ճգնավորի Քար անապատին:

*Лилит Мирзоян, Иван Габриелян
П И И Б
Рубен Бадалян
И А Э
Лаура Тедеско
Нью-Йоркский университет, США*

ПАЛЕОЭТНОБОТАНИЧЕСКИЕ МАТЕРИАЛЫ ОРОМА
(эпоха поздней бронзы-железа)

Наметившийся в настоящее время в археологическом изучении памятников Ширака эпохи поздней бронзы-железа перенос акцента с могильников на поселения, создает условия для объективного исследования ряда аспектов хозяйственной деятельности древнего населения и характеристики природной среды.

В процессе раскопок многослойного поселения Ором (на северо-западном склоне г.Арагац, на высоте 1600м н.у.м., в горно-степном ландшафтном поясе) в результате систематической флотации получены палеоботанические данные практически для всех периодов заселения памятника (эпохи ранней, поздней бронзы, раннего железа, урартского периода, средневековья). Значение этих данных, первых для археологических памятников Ширака, очевидно как для археологических, так и ботанических исследований.

В настоящем сообщении приводятся предварительные результаты изучения основной части палеоэтноботанических материалов, представляющих последовательные культурно-хронологические этапы второй половины II - первой половины I тыс. до н.э.:

1. Южный холм. 1992г. Раскоп М-3, локус 3. Слой эпохи поздней бронзы II (вторая половина XV- первая половина XIII вв. до н.э.). Поверхность пола постройки. Определения Л.Тедеско.

2. Северный холм. 1997г. Раскоп С-3с, локус 9. Слой эпохи раннего железа (X-VIII вв. до н.э.). Необмоложенные колосья и карбонизированное зерно в сосуде. Определения Л.Мирзоян и И.Габриеляна при консультации (хлебные злаки) П.Гандиляна. В таблице количественные показатели приводятся для одной трети материала, насчитывающей 540 единиц (495 из которых, или 91.7% материала, принадлежит зерновым культурам).

3. Северный холм. 1993 г. Раскоп В-2, локус 106. Слой урартского периода (вторая половина 8-первая половина 6 вв. до н.э.). Поверхность пола помещения N2. Определения Л.Тедеско.

Культурные растения

		Поздняя бронза	Раннее железо	Урартский период
Пшеница двузернянка	<i>Triticum dicoccum</i>		127	12
Пшеница мягкая ¹	<i>Triticum aestivum</i>	3		16
	<i>Tr. sp. cf. aestivum</i>		56	
Пшеница (без видового определения)	<i>Triticum sp.</i>	6		25
	<i>Triticum sp. 1</i>		32	
	<i>Triticum sp. 2</i>		81	
Ячмень бутылковидный?	<i>Hordeum sp. cf.</i> <i>lagunculiforme</i>		32	
Ячмень обычный?	<i>Hordeum sp. cf.</i> <i>vulgare</i>		48	
Ячмень круглозерный?	<i>Hordeum sp. cf.</i> <i>sphaerococum</i>		12	
Ячмень дикий?	<i>Hordeum sp. cf.</i> <i>spontaneum</i>		13	
Ячмень (без видового определения)	<i>Hordeum sp.</i>	3		11
	<i>Hordeum sp. 1</i>		24	
	<i>Hordeum sp. 2</i>		25	
Просо обыкновенное	<i>Panicum miliaceum</i>			1
Культурные злаки	<i>Poaceae sp.</i>			
Фрагменты зерновок		20	46	50
Фрагменты стеблей, колосков, чешуй		20	40	20

Дикорастущие растения

Адонис	<i>Adonis dentata</i>			1
Нут	<i>Cicer arietinum</i>	2		
Подморенник	<i>Galium aparime</i>		4	
	<i>Galium spurium</i>		6	
Воробейник	<i>lithospermum sp.</i>	2		50
Гладиум?	<i>Glaucium sp.</i>			1
Горец	<i>Polygonum sp.</i>			3
Костер?	<i>Bromus sp.</i>	1 ?		1
Люцерна	<i>Medicago sp.</i>	15		1
Марь	<i>Chenopodium sp.</i>	17		7
Осока	<i>Carex sp.</i>	4	1	
Подморенник	<i>Galium sp.</i>	11		9
Портулак	<i>Portulaca sp.</i>	15		
Смолевка	<i>Silene sp.</i>	2		1

Тригонелла	Trigonella sp.			6
Шиповник	Rosa sp.	17		
Шавель	Rumex sp.	9	1	9
Бобовые	Fabaceae sp. (leguminjsae sp.)	9		6
Гвоздичные	Caryophyllaseae sp.			1
Злаковые	Poaseae sp. (Gramineae sp.)		5	
Моленовые	Rubiaceae sp.	1		

Приводимые данные свидетельствуют, что основу земледельческого хозяйства Оромского поселения эпохи поздней бронзы-железа составляло возделывание зерных культур - пшеницы и ячменя.

Совместная находка в раннежелезном слое колосьев пшеницы и ячменя отражает, очевидно, факт совместного посева-специального агротехнического мероприятия, неоднократно засвидетельствованного в материалах Закавказья эпохи энеолита-железа, целью которого являлось получение гарантированного минимума урожая - в неблагоприятный для пшеницы год потери компенсировались ячменем, и наоборот.

Доминирующей зерновой культурой в материалах Оромского поселения, является пшеница; ее преобладание отчетливо прослеживается как в эпоху раннего железа (65.8% пшеницы и 34.2% ячменя), так и в урартский период (соответственно 82.8% и 17.2%).

Основное место среди пшениц принадлежит двузернянке-полбе. Часть материала сохранилась в колосках и /или чешуях. Согласно археологическим и этнографическим данным, при обмолоте полбы зерно не отделяется от колосковых чешуй. Для получения зерна колоски сначала поджаривались, а затем измельчались в ступах. Урожай полбы хранился в виде колосьев или колосков, посев производился невымолоченными колосками.

Двузернянка малотребовательна к почвенно-климатическим условиям произрастания, отличается высокой засухоустойчивостью. Образцы из раннежелезного слоя Орома, по сравнению с современным зерном, короче и толще, что может указывать на менее ксерофитные условия среды.

Часть дикорастущих растений также могла иметь определенное хозяйственное значение.

ДРЕВНЯЯ ТОРГОВЛЯ МЕТАЛЛОМ В ЭГЕЙСКОМ МИРЕ

Реконструируя древнюю торговлю Эгейского мира, в основном, использовали сравнительно-типологический метод археологического материала, с привлечением в отдельных случаях скудных сведений из древних письменных источников. Применение новейших естественно-научных методов послужило хорошей предпосылкой для получения более объективных и надежных критериев при исторических реконструкциях. В частности, аналитический метод изотопа свинца дает возможность идентифицировать медно-бронзовый артефакт с его первоначальным рудным источником. Такая "привязка" позволяет с высокой степенью надежности проследить пути миграции металла и воссоздать торговые пути между регионом-поставщиком и регионом-потребителем. Совместные научные разработки греческих и британских специалистов в этом направлении уже дали весьма существенные результаты. Проанализировав многие сотни образцов минералов меди, свинца, серебра, золота из месторождений Греции и одновременно имея аналогичные изотопные показатели готовой продукции, удалось установить следующее (Stos-Gale Z. & Macdonald C.: 1991):

1. При наличии большого количества рудных месторождений, всего лишь несколько из них использовались в бронзовом веке.

2. В начале поздней бронзы Лаврион становится наиболее используемым источником свинца/серебра и меди.

3. Кизнос (Киклады) мог быть основным источником меди в эпоху ранней бронзы.

4. Сифнос (Киклады) был основным источником свинца и серебра в течение раннебронзового периода.

5. Существует предположение о возможной эксплуатации месторождений свинца/серебра, локализованных в Халкидики (восточная Греция), однако фактическая почва для этого слишком зыбка.

Предполагается, что данные металлы могли ввозиться и из соседних регионов. Настоящее предположение оправдано тем, что медные рудники, датированные V тысячелетием до н.э. Рудна Клава (Югославия), Аи-Бунар (Болгария), могли быть потенциаль-

ными источниками для поставки меди в Эгеиду. Не исключается также вероятность ввоза меди из Анатолийских месторождений в бронзовом веке, однако аналитическая база данных пока недостаточна для окончательных выводов. Кипрская медь вступает на арену торговых сделок с Эгеидой уже в поздней бронзе. Таким образом, Эгеида, сама будучи богата запасами различных металлов, одновременно и ввозила некоторые их виды, при этом создавался высокоорганизованный обменно-торговый институт, полный механизм которого еще до конца не раскрыт.

Հրաչ Սարյան
ՇԵԹ, ԵՊՀ

**ՇԻՐԱԿԻ ԵՐԿՐԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՈՒՇ ԲՐՈՆԶԵՂԱՐՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ**

Շիրակի ուշ բրոնզեդարյան հնագիտական նյութերում զգալի տեղ են գրավում երկրագործության, կաշեգործության, փայտամշակման մեջ կիրառվող բրոնզե աշխատանքային գործիքները (մանգաղներ, երկժանիներ, դանակներ, տափակ կացրոններ, սղոցներ):

Շիրակից (Արթիկ, Լենինական, Քեթի, Անի) հայտնաբերված մանգաղները պատրաստված են բրոնզե հաստ թիթեղից: Կոթառի լայնացող մասում՝ եզրերին արված են անցքեր՝ բռնակը ամրացնելու համար: Բոլորն էլ թվագրվում են մ.թ.ա. XII-XI դդ.:

Երկժանիներ հայտնաբերվել են Լենինականից և Վարդաքարից: Ունեն կիսակլոր և ուղիղ մեջք, որից անջատվում են ժանիքները:

Դանակները տիպաբանորեն բաժանվում են երկու տարբերակի (Լենինականից և Քեթիից հայտնաբերվածներ), իրենց ինքնատիպ հատկանիշներով:

Հետաքրքիր են Արթիկից և Լենինականից հայտնաբերված սղոցները (երկու հատ), մանրատամ, ուղղանկյուն և տերևաձև տեսքով:

Ժողովածուում կան նաև տափակ կացիկների՝ հայտնաբերված Լենինականից, Վարդաքարից, Արթիկից և Արևիկից:

Արթիկից, Վարդաքարից, Ոսկեհասկից և Մարմաշենից (հրատարակված չեն) հայտնաբերվել են դուրեր, որոնք ձևաբանորեն երկու տիպի են և պատկանում են ժամանակագրական երկու խմբի:

Այս համեստ ժողովածուի քննությունը թույլ է տալիս եզրակացնել, որ մ.թ.ա. II հազարամյակի վերջում զարգացած էին երկրագործությունը և արհեստները, որոնց համար Շիրակն ուներ նպաստավոր պայման-

ներ: Իսկ արհեստների զարգացման հետ տեղի էր ունենում գործիքների պատրաստման խիստ մասնագիտացում: Ներկայացված նյութերը քիչ լինելով հանդերձ, առանձին խմբերով ունեն որոշակի ընդհանրություններ և ձևաբանական, տիպաբանական առանձնահատկություններ:

Լևոն Պետրոսյան
ՀԱԻ

ԼՃԱՇԵՆԻ ԹԻՎ 55 ՂԱՄԲԱՐԱՆԸ

1988 թ. Լճաշենի դամբարանադաշտի երկրորդ տեղամասում պեղված թիվ 55 դամբարանը գետնի մակերեսին ներկայանում էր միջին չափսերի անմշակ որձաքարերով շարված (7,5x6,5մ) կրոմլեխի տեսքով: Նրա կենտրոնական մասում առկա էր քարերից և հողից բաղկացած ոչ մեծ կույտ: Այն հեռացնելուց հետո պարզվեց, որ դամբարանախուցը զուրկ է ծածկասալերից: 1,5մ խորանալուց հետո ուրվագծվեցին դամբարանի պատերը (4x3,7): Նշված խորությունում դամբարանի հյուսիս-արևելյան պատի դիմաց բացվեց ցուլերի երեք զանգ: Եվս 2մ խորանալուց հետո բացվեցին արև խորհրդանշող ճառագայթաձև դասավորված հինգ սալաքարեր: Վերջիններս հեռացնելուց հետո բացվեց 3,5x3,3x1մ չափերով, անմշակ որձաքարերի երկու շարքից կազմված հիմնական դամբարանախուցը: Հանգուցյալի կմախքը հայտնաբերվեց դամբարանի կենտրոնական մասում, գլխով դեպի արևմուտք, ձախ կողքի վրա պառկած, ձեռքերը և ոտքերը կծկված վիճակում: Գլխին դրված է եղել ոսկե սկավառաձև և բարակ թիթեղից պատրաստված ժապավենաձև հերակալ-զարդ: Դամբարանից հարավային պատի տակ գտնվեցին տարբեր չափերի փայտի մնացորդներ: Սրանց միջավայրում դրված էին մեկ սև, փայլեցված շքեղ կարաս և աղորիքների բեկորներ, իսկ հյուսիսային պատի դիմաց դրված էր սրվակաձև փոքրիկ խեցանոթ: Կարասը հիշեցնում է Շենգավիթ IV հայտնաբերված օրինակը, իսկ փոքրիկ անոթի վրայի զարդերը՝ արագածյան խմբի խեցեղենի զարդերը: Ոսկե իրերից հերակալն իր ձևով մոտ է Կվաքխելեբի մ.թ.ա. III հազարամյակի առաջին կեսով թվագրվող բրոնզե դիադեմներին, իսկ արևի սկավառակ հիշեցնող զարդի մնացակներ կարող են հանդիսանալ Թռեղքի վաղ խմբին պատկանող թիվ 40 դամբարանաբլուրից հայտնաբերված մ.թ.ա. 2300-2000թթ. թվագրվող բրոնզե օրինակները: Ինչպես դամբարանից ծածկասալերի ճառագայթաձև դասավորությունը, այնպես էլ ճակատի արևակերպ գլխի հերակալ-զարդերը ևս մեկ անգամ հաստատում են այն կարծիքը, որ տվյալ դեպքում գործ ունենք թագի նախատիպի հետ:

Այսպիսով, թե դամբարանի ձևը, թե այնտեղ հայտնաբերված սակավաթիվ, սակայն շատ հետաքրքիր նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դամբարանը պատկանում է մ.թ.ա. III հազ. վերջում հասարակության մեջ ոչ շարքային դասին պատկանող անձնավորության:

Համլետ Պետրոսյան

ՀԱԻ

*Լևոն Եպիսկոպոսյան, Յուրի Ասրյան,
Վարդգես Սաֆարյան, Վահրամ Բալայան,
Վլադիմիր Հովսեփյան
ԱՊՀ*

ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ՊԵՂՈՒՄՆԵՐ ԱՐՑԱԽԻ ՔԱՐԱՔԼՈՒՐ ՀՆԱՎԱՅՐՈՒՄ

1. Քարաբլուր բնակատեղին գտնվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերանի շրջանի Լուսաձոր (նախկին Մեխիշեն) գյուղի մոտակայքում: Այն մոտ 1,5 հա տարածությամբ եռաստիճան մի հարթակ է, ունի միջին բրոնզից մինչև ուշ միջնադարը ներառող մշակութային շերտեր, շրջապատված է հզոր դամբարանադաշտերով և գտնվում է վաղ բրոնզի դարից սկսած մշակութայնացված մի միջավայրում Կարկառի և Բաղարայի միջագետքում: Այն տեղանքի ամենախշտող բարձունքն է, Խոջալուի հանրահայտ դամբարանադաշտից հեռու է ընդամենը մեկ կիլոմետր և այս առումով վաղուց արդեն բավարար հրատարակված և թվագրված նյութերի հետ լայն զուգահեռների հնարավորություն ունի:

Հետախուզական պեղումներն իրականացվել են 1996թ. հուլիս-օգոստոս ամիսներին՝ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի և Արցախի պետական համալսարանին կից Հնագիտական կենտրոնի համատեղ արշավախմբի կողմից (համաղեկավարներ՝ Հ.Պետրոսյան, Լ.Եպիսկոպոսյան):

2. Հուշարձանն աչքի է ընկնում վերգետնյա նյութի խիստ առատությամբ: Խեցեղենի մեջ առանձնանում են դրսից սև փայլեցունով, մոխրագույն կամ շագանակագույն աստառով կավանոթները՝ որոնք հիմնականում նախշազարդված են «եղևնածև» կամ «սանրածև» գծային կամ կետային դրվագումներով: Այս խեցեղենն ունի թվագրման հստակ սահմաններ՝ մ.թ.ա. XVIII-XVI դդ. և վկայում է միջին բրոնզի սկզբում այստեղ գոյատևած բնակավայրի ակտիվ կյանքի մասին: Վերգետնյա նյութերի մեջ մեծ թիվ են կազմում քարե աշխատանքային գործիքները՝ տեղական ծակոտկեն տուֆից պատրաստված աղորիքները, գլաքարե

տորոհիչներն ու սանդկոթերը: Քարաբլուրի արևմտյան ստորոտում հայտնաբերվել են հսկա ժայռաբեկորների մեջ փորված խոշոր տրամաչափի երեք սանդեր, որոնք Անդրկովկասի այլ հուշարձաններից հայտնի չեն: Հուշարձանի տարածքից և շրջակայքից հավաքվել են նաև օբսիդիանի բազմաթիվ ցլեպներ՝ երբեմն ռետուշի հետքերով, այդ թվում և երկու նետասլաքներ:

3. Հարթակի արևմտյան ստորոտում՝ խոշոր սանդերի հարևանությամբ պեղված հետախուզահորը երևան բերեց մ.թ.ա. II հազարամյակի սկզբի մշակութային շերտ, իսկ երկրորդ և երրորդ հարթակների զառիթափ անցման երկարությամբ պեղված խրամատը՝ մ.թ.ա. I հազարամյակի շերտ՝ պարիսպների մնացորդներով:

Քարաբլուրից արևելք և արևմուտք գտնվում են երկու դամբարանադաշտեր: Դրանցից առաջինը բաղկացած է բազմաթիվ խոշոր և մանր հողաթմբերից, կրոմլեխներից և քարարկղներից և նեղ ժապավենի տեսքով (լայն. 30-40մ) մոտ 300մ ձգվում է արևմուտքից արևելք: Այստեղ պեղված քարարկղի նյութերի քննությունը (երկաթե դաշույն, խեցեղեն, զարդեր) ցուցում է, որ այն պատկանում է մ.թ.ա. XI - IX դարերին: Արևմտյան դամբարանադաշտը բաղկացած է մեկ տասնյակ հողափոր դամբարաններից: Դրանցից մեկի պեղումները պարզեցին, որ այն վերաբերում է մ.թ.ա. IX-VIII դարերին:

4. Հուշարձանի երրորդ՝ ամենաստորին հարթակում պեղվել է միջնադարյան մի սրբարան. այն արևմուտք-արևելք ուղղվածությամբ մի շինություն է՝ արևելյան ուղղանկյուն աբսիդ-բեմով և վերջինիս կենտրոնում կանգնեցրած սեղան-կոթողով: Աղոթասրահում հայտնաբերվեցին օջախ և XII-XIV դարերի խեցեղենի մի քանի հարյուրի հասնող բեկորներ: Այս խիստ ուշագրավ գյուտի քննությունը՝ ազգագրական տեղեկությունների համադրությամբ, թույլ է տալիս ենթադրել, որ քրիստոնեական սրբարանը XII դարում վեր էր ածվել «սուրբ օջախի», որտեղ ընթացող ծեսն առանձնանում էր խեցեղեն անոթների օգտագործումով և դրանց ջարդումով:

Գագիկ Սարգսյան
ՀԱԻ

ՎԱՎԵՐԱՎԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՎԻՍԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Վիմական արձանագրությունների գիտական ստույգ վերծանությունը մեծապես նպաստում է վիմագիր վկայագրերի աղբյուրագիտական արժեքի բարձրացմանը և կարևորմանը: Ի տարբերություն մատենագրական սկզբնաղբյուրների, որոնք առավել հաճախ մեզ են հասել

հետագա դարերի ընդօրինակություններով, արձանագրությունները հիմնականում բնագրեր են, ըստ այդմ էլ, որպես սկզբնաղբյուրներ՝ առավել հավաստի: Սակայն դարերի հեռավորությունն իր կնիքն է թողել նաև վիմագրերի վրա: Բնակլիմայական փոփոխությունները խաթարել են վիմագրերի տեսքը, հողմնահարել քարերի արձանագրված մակերեսը կամ պատել քարացած մամռաշերտով: Բնական և արհեստական ավերածությունների հետևանքով շատ արձանագրված կոթողներ և շինաքարեր կտրատվել են և ի հետևանք դրա, վիմագիր տեքստերը դարձել են պակասավոր: Այս ամենը լուրջ դժվարություններ է ստեղծում վերծանողի համար և հաճախ տեղիք տալիս տարըմբերցումների, ոչ ճշգրիտ մեկնաբանությունների: Նշված հանգամանքներում վերծանության հավաստիությունը կախված է արձանագրության պահպանվածության աստիճանից և վերծանողի մասնագիտական հմտությունից:

Վիմագրագետների և վիմագրերը որպես սկզբնաղբյուր օգտագործող մասնագետների համար երբեմն լուրջ խնդիր է դառնում նաև լավ պահպանված և առաջին հայացքից լիարժեք վերծանելի արձանագրությունների ամբողջական, առանձին բառերի կամ հատվածների ընթերցումն ու մեկնաբանումը, ինչը կարող է պայմանավորվել հետևյալ հանգամանքներով.

- արձանագրության լեզուն և ոճը չեն համապատասխանում տառածների համադրմամբ կամ առկա թվականով որոշված ժամանակաշրջանի լեզվական նորմերին.

- ոչ արհեստավարժ գրիչը արձանագրությունը փորագրել է տվյալ ժամանակաշրջանին անհարիր տառածներով կամ ուղղակի ունեցել է անփույթ ձեռագիր կամ գրելաոճ.

- վիմագրի թվականը չի համապատասխանում հիշատակված անձանց, իրադարձությունների և փաստերի՝ պատմագրության մեջ հայտնի ու ճշտված ժամանակագրությանը և այլն:

Վերը նշված իրողությունները կարող են հետևանք լինել փորագրող գրչի կամ արձանագրության պատվիրատուի գրագիտության, արհեստավարժության պակասի, շարադրվելիք անցքերին, անձերին ու փաստերին ոչ բավարար տեղակության: Այս պարագաներում կարևորվում են վերծանողի մասնագիտական հմտությունը, պատմագիտական և աղբյուրագիտական նյութի իմացությունը:

Արձանագրությունները վերծանելիս տարակարծություններ և վավերականության կասկածներ են առաջանում, երբ վկայագիրն իր բնօրինակով չի պահպանվել: Դա կարող է արդյունք լինել վիմագրակիր քարի, քարաշարի կամ պատի վերականգնման, երբ վերաշարված պատի վրա հիշողությամբ վերափորագրվել է վկայագիրը:

Արձանագրության վավերականության խնդիրը առնչվում է նշված փաստերի ճշտման հետ: Գրիգոր Մամիկոնյանի կողմից Արուճի Ա.Կաթողիկե եկեղեցու կառուցման մասին արձանագրությունը թվագրված է Կոնստանդին կայսեր «ի եւ թ ամի»: Դ. Օրբելին գտնում է, որ վիճադիրը վավերական չէ և ուշ շրջանի ընդօրինակություն է, քանի որ Կոնստանդինը գահակալել է 27 տարի (641-668): Ա. Մանուչարյանը այս խնդրի լուծման բանալին տեսնում է կայսեր գահակալության թվականների ճշտման մեջ: Ուսումնասիրելով պատմական փաստերը՝ նա գտնում է, որ Կոնստանդինը պաշտոնապես գահ բարձրանալով 641 թ.՝ նախորդ, առնվազն 3 տարիներին, գահակցել է հորը՝ Դերակլին և երբեմն հանդես եկել կայսեր իրավասություններով: Ըստ այդմ էլ Ա. Մանուչարյանը հավաստի է համարում արձանագրության թվագրումը, Կոնստանդինի փաստացի գահակալության սկիզբը հաշվելով 638 թվականից:

Վիճադրագիտության մեջ վավերականության հարցը կապվում է նաև տառերի, բառակապակցությունների ճիշտ բառանջատման խնդրի հետ: 1904թ. Ն. Մառը Անիի միջնաբերդի բազիլիկ եկեղեցու պատի վրա վերծանում է 4 տողանի մի արձանագրություն. ԵՍ ԱԲԻՍՈՂՈՍ (ՎԱՐԴԱՊԵՏ ՇԻՆԷ) ՑԻ ՋԵԿԵՂԵՑԻՍ Ի ԹՈ (ԻԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱ): Ն.Մառը, հետազայում նաև Գ.Հովսեփյանը վերջին ՀԱ տառերը համարում են թվական (622): Ըստ այդմ էլ, ինչպես արձանագրությունը, այնպես էլ կառույցը թվագրում են 7-րդ դարով: Դ. Օրբելին, մեր օրերում նաև Ա.Մանուչարյանը ՀԱ տառերը վերծանելով ՀԱՅՈՑ, թվագրման այս եղանակը համարելով անհարիր 7-րդ դարին և վերոհիշյալ արձանագրությունը համալրելով 1914 թ. հայտնաբերված նույն Աբիսողոմ վարդապետի համանման մեկ այլ վիճագրի հետ, հանգեցին այն եզրակացության, որ վկայագրերը նվիրված են ոչ թե եկեղեցու կառուցմանը՝ այլ վերակառուցմանը, ինչը տեղի է ունեցել 10-րդ դարից ոչ շուտ:

Հակոբ Սիմոնյան
Հ Հ Հ Հ Հ

ԱՄԹԱՄԻՐԸ ՆԵՈՒԻԹ-ԽԱԼԿՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

1. Հայկական լեռնաշխարհի հյուսիսային շրջաններում նեոլիթյան հուշարձանները խիստ սահմանափակ են: Մեզ հայտնի են լոկ մի քանի բլուր-բնակավայրեր Արցախի հովտային շրջաններում, Արարատյան դաշտավայրում և Ջանգեզուրի լեռներում, ինչպես նաև ժայռապատկերներ Գեղարքունիքի, Սյունիքի, Արագածոտնի, Տաշիրի բարձրադիր

լեռնային շրջաններում: Խալկոլիթյան ժամանակաշրջանում Հայկական լեռնաշխարհում բնակավայրերի թիվը կտրուկ աճում է (հայտնի են ավելի քան 150 բնակավայրեր):

2. Արտադրող տնտեսության կազմավորման արշալույսին բնակեցվում է Հայկական լեռնաշխարհի ինչպես հովտային՝ երկրագործության համար առավել նպաստավոր շրջանները. Արարատյան դաշտը (Մասիսի բլուր, Տերտերի ձոր, Մաշտոցի բլուր, Կղզյակ բլուր, Աղվեսի բներ և այլն), Արագածի նախալեռնային տարածքները (Ախթամիր, Պալեոքասախի բնակավայրերը), դաշտային Արցախը (Գեոյ թեփե, Տոյե թեփե և այլն), Վանա լճի ավազանը (Թիլկի թեփե), Եփրատի գետահովիտը (Նորշուն թեփե), այնպես էլ բարձր լեռնային, անասնապահական գոտիները:

3. Սյունիքի մարզի Քարքարեր կայան-արհեստանոցը (3000 մ բարձր) պարունակում է ինչպես միջկերամիկական, այնպես էլ կերամիկական նեոլիթի մշակութային շերտեր (հետախուզական պեղումներ կատարվել են հեղինակի կողմից): Այս խիստ բարձրադիր սեզոնային բնակավայրերը, որի հարևանությամբ գտնվում են վանակատի հանքավայրեր, բազմաթիվ հնագույն ժայռապատկերներ և դամբանաբլուրներ, օբսիդիանե ինդուստրիայի տիպաբանական համեմատության և հրաբխային պրոցեսների երկրաբանական անալիզի հիման վրա՝ նախնականորեն թվագրվում է Ք.ա.VIII-VI հազարամյակներով:

4. Ամենայն հավանականությամբ այս ժամանակաշրջանին են պատկանում նաև Ախթամիրից հայտնաբերված նեոլիթյան խեցեղենի օրինակները, որոնք իրենց բազմազանությամբ և քանակով ներկայումս ամենահարուստ համալիրն են ոչ միայն Հայաստանում, այլև ողջ Հարավային Կովկասում:

5. Ախթամիրի նեոլիթյան կավանոթներին յուրահատուկ է խիստ պարզ, ուղիղ անցումներով ձևերը: Դրանք սաղր, բաց՝ դեպի վեր լայնացող, կամ փակ՝ դեպի վեր նեղացող ուղիղ պատերով թասեր կամ գավաթներ են, որոնք կտրվածքում ունեն դեպի վեր լայնացող կամ դեպի վեր նեղացող կողերով հատած կոնի տեսք: Կավանոթներն ունեն լայն, հարթ հատակներ, որոնք երբեմն հիմքի մոտ լայնանում են, հարթության վրա դրված անոթին հաղորդելով կայունություն: Այս երևույթը բնորոշ է նաև Արևմտյան Վրաստանի նեոլիթյան հուշարձաններից հայտնաբերված կավանոթներին: Կավանոթների շուրթերը մեծի մասամբ պահպանում են ուղիղ պատերի ձևերը՝ ավարտվելով հարթ կտրվածքով կամ ուռուցիկ եզրերով: Այս միապաղաղությունը խախտելու նպատակով անոթների շուրթերին երբեմն հաղորդում են սրանոց և կամ էլ գնդաձև հաստացումներ:

Առանձին խումբ են կազմում լայն, հարթ հատակով, ուղիղ դրված

ցածր պատերով սաջերը և տաշտերը: Դրանց շուրթերը ավարտվում են սրացումով կամ կտրված են ուղիղ:

Լայնաբերան անոթները ծածկվում էին շրջանաձև, վեր ծավալած եզրեր ունեցող կափարիչներով, որոնց կենտրոնում գտնվում էին ելուստաձև բռնակներ: Անոթները կափարիչներով ծածկելու ավանդույթունը սկիզբ առնելով նեոլիթում՝ առանձնապես լայն տարածում է ստանում վաղ բրոնզի դարում:

6. Պաշտամունքային կավե առարկաների խումբը բաղկացած է կիսաշրջանաձև շարժական սրբարաններից, որոնց գլանաձև, հատակի մասում հարթ թևերի մակերեսը ծածկել են համատարած փոսիկների շարքով՝ նրանց վիշապօծի կերպար հաղորդելու նպատակով: Դրանք, մեր կարծիքով, վաղ բրոնզի դարում Հայկական լեռնաշխարհի հուշարձաններում լայն տարածում գտած՝ հենակ-պատվանդաններ անվանվող շարժական սրբարանների նախատիպերն են հանդիսանում:

7. Հայաստանի նոր ձևավորվող նեոլիթյան խեցեգործությանը բնորոշ է կավանոթների պատերի հաստությունը, ներքին և արտաքին մակերեսների անհարթությունը, ասիմետրիկ և տձև արտաքինը: Գերակշռում են կարմրավուն և դարչնագույն անոթները: Խեցեղենը պատրաստված է հարդախառն կավազանգվածից, որի հետ խառնում էին նաև մանր քարեր, ավազ: Անոթները հիմնականում պատրաստվել են առանձին կավե ժապավենների հաջորդական միացման տեխնիկայով: Ստացված հիմնակմախքի անհարթ հատվածները, մասնավորապես ժապավենների միացման մասերը և դրսից, և ներսից «լցվել» են այլ երանգի կավե պլաստիկ կտորներով, որոնք մազներով ծեփել-սվաղել են: Նման տեխնիկայով պատրաստված լինելու հետևանքով ստացվել են խիստ հաստ պատեր, որոնք կտրվածքում ունեն եռաշերտ կառուցվածք: Միմյանց միացվող կավե առանձին ժապավենների միջև շփումը մեծացնելու նպատակով ժապավենների վերին եզրերին կամ արտաքին մակերեսներին մատներով արվել են փոսիկաձև խորացումներ, որոնց մեջ «հագել» են հաջորդ ժապավենի ելուստները: Չորանալուց հետո անոթների մի մասի մակերեսները ծածկել են դեղնավուն կամ կարմրավուն կավալուծույթով, կոկել ապա թոծել:

8. Լայն հատակ և ցածր կողեր ունեցող անոթները՝ սաջերը, տաշտերը, կափարիչները, ինչպես նաև զանգվածող պաշտամունքային իրերը պատրաստվել են թաց կավազանգվածին որոշակի ձև տալու միջոցով: Նմանատիպ եղանակով իրերը պատրաստելիս՝ կավազանգվածի տակ փռել են հարդ, ինչը հնարավորություն է ընձեռել հեշտությամբ պտտել կամ տեղաշարժել ձևավորված, սակայն դեռևս չչորացած անոթը:

9. Թաց վիճակում գտնվող անոթների մակերեսը զարդարում էին

փոսիկածն ներճկումներով, կիսալուսնածն կամ բոլորածն դաջվածքներով, վերադիր ելուստներով, փորագիծ լայն և շեղ, ինչպես նաև ուղղահայաց գծիկներով, ներճկված հորիզոնական գոտիներով: Թասածն անոթների շուրթերը զարդարում էին փոսիկների հաջորդական շարքերով:

10. Տիպիկ նեոլիթյան մտածելակերպի արգասիք են անոթների պատերին ագուցված խիստ ինքնատիպ կանթերը, որոնք, անկասկած, կիրառականից զատ ունեցել են նաև պտղաբերություն խորհրդանշող ծիսա-հմայական նշանակություն:

11. Խալկոլիթյան ժամանակաշրջանում կոպիտ խեցեղենին գուգահեռ օգտագործվում էին նաև տոնական կավանոթներ, որոնք պատրաստված են մանրահատիկ, լավ հունցած կավից: Դրանց մակերեսը ծածկված էր հիանալի կոկած-փայլեցրած վառ կարմրավուն անգորբի շերտով: Նախքան թոծելը, անոթների մակերեսին սրճագույն կամ սև ներկով պատկերում էին պարզ երկրաչափական զարդանկարներ, ալիքածն գծեր, շեղանկյունիներ՝ լցված ցանցածն գծերով, շրջաններ և այլն, կատարված սիմետրիայի և ռիթմիկայի սկզբունքների կիրառումով:

12. Նեոլիթ-խալկոլիթյան անոթների խեցին ունի բավարար կարծրություն, կտրվածքում համասեռ կարմրավուն է կամ սևագույն, եզրված կարմրավուն բարակ եզրաշերտով: Կտրվածքում պարզորոշ դիտվում են այրված հարդի դաճվածքները: Երբեմն դրանց քանակը այնքան մեծ է, որ անոթները չնայած իրենց զանգվածեղ պատերին, ունեն խիստ թեթև կշիռ: Թրծման ժամանակ կրակի անհավասար ներգործության հետևանքով կավանոթների մակերեսները ձեռք են բերել տարբեր երանգներ:

13. Խեցեղենի պատրաստման տեխնոլոգիան պարզելու նպատակով, Զնարիկ Նավասարդյանի կողմից, բինօկուլյար մանրադիտակային, քիմիական և տեխնիկական փորձարկումների եղանակով հետազոտվել է Ախթամիրից հայտնաբերված նեոլիթ-խալկոլիթյան ժամանակաշրջանի շուրջ 300 բեկոր: Հետազոտության արդյունքների համաձայն՝ այս ժամանակաշրջանին վերագրվող ողջ խեցեղենը պատրաստված է նույն բաղադրության կավազանգվածներից՝ ալաստիկ կավից և նրան ավելացրած օրգանական խառնուրդներից: Հատուկ ավելացրած օրգանական խառնուրդների քանակը տատանվում է 10-30%-ի սահմաններում: Հետազոտված խեցաբեկորների 10-12%-ը օրգանական խառնուրդներից զատ, պարունակում է նաև հատուկ ավելացրած անօրգանական խառնուրդներ (գետավազ), որի քանակը կավազանգվածներում կազմում է 10-15%: Այս տվյալները խոսում են այն մասին, որ խեցեգործության բնագավառում օրգանական խառնուրդների

օգտագործումը համատարած էր, մինչդեռ անօրգանական ծագում ունեցող նյութերի բարերար ազդեցությամբ վաղնջական կավագործները նոր էին սկսել ծանոթանալ: Խեցեգործության համար օգտագործված կավազանգվածները տարաբաժանվում են երեք խմբի.

1. խոշորահատիկ, կոպիտ կավազանգված, որին հատուկ ավելացվել է օրգանական խառնուրդ (հարդ).

2. մանրահատիկ, լավ լվացած կավազանգված, որին հատուկ ավելացվել է հարդ.

3. խոշորահատիկ կամ մանրահատիկ կավազանգված, որին օրգանական նյութերին զուգահեռ հատուկ ավելացրել են նաև անօրգանական խառնուրդներ:

14. Կավանոթները թրծվել են 600° - 650° ջերմաստիճանի սահմաններում, օքսիդացնող միջավայրում, որոշ դեպքերում բարձր ջերմաստիճանի համեմատաբար երկարատև պահպանմամբ, որը ինչ որ չափով բարձրացրել է խեցատի ամրությունը: Առանց բացառության բոլոր անոթները թրծվել են խարույկներում: Կատարված հետազոտությունները վկայում են, որ Ախթամիրի նեոլիթ-խալկոլիթյան խեցեղենը պատրաստվել է խեցեղենի արտադրության այն փուլում, երբ դեռ բացակաում էին արտադրության տեխնիկական միջոցները: Այս հանգամանքն իր հերթին վկայում է խեցեղենի ներկայացված համալիրի խիստ վաղնջական լինելը:

Հակոբ Սիմոնյան

Հ Հ Հ Հ

ՊԵՂՈՒՄՆԵՐ ԾԻԾԵՆԱՎԱՆՔՈՒՄ

Հայաստանի հնագույն և նշանավոր ուխտավայր-եկեղեցիներից է Ծիծեռնավանքը, կառուցված համանուն գյուղի հս.-ամ. եզրին, Աղավնո գետի աջ ափին, երկու ձորակներով շրջափակված բնական հրվանդանի վրա, պատմական Սյունիքի Աղահեճ (Քաշաթաղ) գավառում:

Ավանդության համաձայն՝ այստեղ է թաղված Պետրոս առաքյալի ճկույթը, որից էլ վանքը ստացել է իր անվանումը (ճկույթ-ծիծեռն): Այլ կարծիքով՝ վանքի անվանումը կապվում է հնուց ի վեր ժողովրդի կողմից սիրված և պաշտամունքի առարկա հանդիսացող թռչունի՝ ծիծեռնակի հետ:

Ծիծեռնավանքի մասին գրավոր աղբյուրներում առաջին անգամ հիշատակվում է Սյունյաց նախարար Փիլիպպեի 844թ. նվիրատվական փաստաթուղթը վավերացնելու կապակցությամբ: Այնուհետ Ստեփանոս

Օրբեյանը Ծիծեռնավանքը հիշատակում է Սյունիքի 30 նշանավոր վանքերի շարքում: XVII դարի սկզբներին, Հայկազ իշխանի ջանքերով, բարեկարգվում է եկեղեցու շրջակայքը, կառուցվում է զանգակատունը, գուցե նաև սեղանատունը, իսկ համալիրը շրջափակվում է պարսպով: 1655թ. Թովմա վարդապետ Վանանդեցին Հայաստանի մեծ սրբավայրերին նվիրված ներբողում անդրադառնում է նաև Ծիծեռնավանքին, որպես փառահեղ անցյալ ունեցող վանքի: Միջև XIX դարի կեսերը վանքի գործունեության և Ծիծեռնավանք կոչված հայաբնակ գյուղի գոյության մասին է վկայում եկեղեցու մերձակա գերեզմանոցում մեր հայտնաբերած 1848 թվակիր արձանագրությամբ տապանաքարը:

Նոր և նորագույն ժամանակներում Ծիծեռնավանքը ուսումնասիրել և նրա մասին հոդվածներ են հրապարակել Ղևոնդ Ալիշանը, Երվանդ Լալայանը, Մորուս Հասրաթյանը, Ալեքսանդր Սահինյանը, Պաուլ Կունեն, Մուրադ Հասրաթյանը և ուրիշներ:

Տաճարը բազմաստիճան գետնախարսխի վրա՝ եռանավ բազիլիկ հորինվածք է, ունի 12,5x25,5մ չափերով կանոնավոր ուղղանկյան տեսքի հատակագիծ: Գլխավոր նավը արտաքուստ չեշտված է շենքի ծավալում, իսկ ներսից զարդարված է եղել երկհարկանի պատշգամբով: Հայաստանում մեզ հայտնի միակ «արևմտյան» տիպի բազիլիկ կառույցն է:

Տաճարի ստորին մասը՝ 7 շարք բարձրությամբ, խորանը, բեմը և ավանդատները կառուցված են սև-կապտավուն սրբատաշ բազալտ քարերով, իսկ վերին շարքերը և տանիքը՝ սրբատաշ սպիտակավուն կրաքարով: Ունի չորս մուտք:

Պատերի վրա դրսից և ներսից քանդակված են շրջանի մեջ լեռ-գծած հավասարաթև խաչեր, վարդյակներ, հավերժության նշաններ, ութանիստ աստղեր և այլն, բնորոշ վաղ միջնադարին: Հյուսիսային պատին, խորանի մոտ պահպանվել է որմնանկար՝ հասակով մեկ կանգնած սրբերի պատկերներով: Պատերի վրա դրսից և ներսից գտնվում են շուրջ 20 հայատառ արձանագրություններ, բոլորն էլ ուշ շրջանի:

Իր բազմադարյան գործունեության ընթացքում վանքը էական փոփոխությունների չի ենթարկվել, եթե նկատի չառնենք որմնասյուների հաստացումները, մասնակի վերանորոգումները և XVII դարում կառուցված վեցսյունանի փոքրիկ զանգակատունը: Սրբատաշ բազալտով կառուցված դարպասի շքամուտքի շուրջ, պարսպի շարվածքի մեջ պահպանվել է համանման սրբատաշ կրաքարերով կառուցված նախնական կամարից մի հատված, ինչը վկայում է, որ հնագույն շրջանից իսկ եկեղեցին շրջափակված է եղել բլրակի պարագծով ձգվող պարսպով: Պարսպապատ տարածքի ներսում և եկեղեցուց արևմուտք տարածվում է գերեզմանոցը:

1997 թ. ձմռանը, եկեղեցուց հարավ ընկած տարածքում, տեղադրվեց 10x20 մ ընդհանուր մակերեսով պեղավայր, որտեղ պեղվեց 30-40 սմ հզորությամբ վերին շերտը: Նախնական պեղումների ժամանակ բացվեցին եկեղեցուն հաված ուղղանկյուն հորինվածքով ուշ շրջանի կառույցների վերին շարքերը, միջնադարյան մի քանի գերեզմաններ, ձևավորված ցից դրված փոքր գլխաքարերից և նրանց միջև շարված 2-4 մետր գետաքարերից: Պեղումների ժամանակ հայտնաբերվեցին եկեղեցական սպասքի, հավանաբար Սուրբ հոգին խորհրդանշող թռչնի արձանիկի, կղմինդրների ավելի քան տասնյակ տիպերի թրձակավե բեկորներ և ամենահետաքրքրականը՝ I-III դարերին բնորոշ խեցանոթների տասնյակ բեկորներ: Վերջիններս թերևս վկայում են այս տարածքում, նախքան Հայաստանում քրիստոնեության պետական կրոնի հռչակումը, պաշտամունքային կենտրոնի գոյության փաստը: Ամենայն հավանականությամբ, հնուց ի վեր, պաշտամունքային կենտրոն լինելու ավանդությունն է պայմանավորել Ծիծեռնավանքի՝ հետագա դարերում հռչակված ուխտատեղ դառնալու իրողությունը:

Феликс Тер-Мартirosов

И А Э

АНАЛИЗ КЕРАМИЧЕСКОГО МАТЕРИАЛА АРМЕНИИ VI-III ВВ. ДО Н.Э.

1. Раскопки археологических памятников Армении VI-III вв. до н.э. дают картину разнообразия их керамического материала. Для памятников Северо-Восточных регионов Армении характерно преобладание керамики, продолжающей традиции эпохи железа. Для памятников Араратской долины характерна керамика постурартского облика. На немногих исследованных памятниках Западной Армении обнаружена керамика с расписным орнаментом. Важны данные раскопок Драсханакерта с преобладанием постурартской керамики в дворцовом комплексе и керамики облика эпохи железа в хозяйственных комплексах.

2. Данная ситуация объясняется формой качественной преемственности культуры Армении с предшествующими ей культурами. Поэтому нахождение отдельных образцов керамики на памятниках не является основой для их датировки.

3. Несомненно, что наилучшей основой хронологии является совокупность стратиграфии памятника и его артефактов. Однако

пока хронологическими маркерами являются:

а) для VI-IV вв. до н. э.:

- находки тонкостенной светлокоричневой, хорошо лощенной керамики;

- одновременное нахождение на памятниках керамики постурартского типа и керамики облика эпохи железа;

- наличие новых деталей на керамике традиционного типа для регионов Северо-Восточной Армении;

- нахождение в памятниках отдельных образцов ахеменидской дворцовой культуры, в том числе и импортной керамики;

б) для конца IV - начала II вв. до н. э.: тонкостенная, хорошо обожженная, лощенная керамика светлорасового черепка, имеющая в разломе черно-ржавые вкрапления.

4. Рассмотрение керамического материала показывает, что в VI-III вв. до н. э. в Армении сосуществовали дворцово-храмовая культура и культура сельских поселений. Это соответствует характеру социального строя страны.

Ռուզան Փալանջյան
ՀԱԻ

ԱՄՈՍԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՄԲ ՀՈՉԱԿԿԱԾ ՎԱՅՐԻ ՏԵՂԱՅՆԱՑՄԱՆ ՓՈՐՁ

Ամոմը հին Հռոմ ներմուծվող ամենաբանկարժեք անուշահոտությամբներից էր: Ամոմի յուղը պարթև արքաների համար հատուկ պատրաստվող օծանելիքի հիմական բաղադրիչներից էր:

Գրավոր աղբյուրների համաձայն՝ ամոմը աճում էր հին Հայաստանում, Մարաստանում և Պոնտոսում: Լավագույն տեսակը հայկականն էր: Հիշատակվում են Ուտիքը, Կորդուքը և Տնորիքը՝ որպես ամոմի աճման վայրեր: Հովսեփոս Փլավիոսը մատնանշում է Կարրոնի մարզը, որի արգավանդ հողերը չափազանց բարենպաստ էին մեծ քանակությամբ ամոմի արտադրության համար (Ant., XX, 25): Ամենայն հավանականությամբ հիշյալ վայրը Մեծ Հայքի Տուրուբերան նահանգի Կորի գավառն է, Վանա լճի հյուսիս-արևմուտքում, Արածանիի բարեբեր հովտում:

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՈՆԱՇԽԱՐՀԻ Մ.Թ.Ա. III-III ՀԱԶ.
ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻՑ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԾՈՎԱԽԵՑԻՆԵՐԸ ՈՐՊԵՍ
ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՍԿԶԲՆԱԴԲՅՈՒՐ

1. Հնագույն ժամանակներից ծովախեցիների ու խխունջների պարունակությունը մարդու սննդի անհրաժեշտ բաղադրամասերից մեկն է եղել, իսկ խեցին օգտագործվել է աշխատանքային գործիքներ, սպասք, ազդանշանային հարմարանքներ, պերճանքի առարկաներ և այլ իրեր պատրաստելու համար: Խեցու հատուկ տեսաներ օգտագործվել են շինանյութ ու ներկանյութ ստանալու համար, իսկ առանձին օրինակներ՝ միջոցառային առևտրի փոխանակային միավորների դեր են կատարել: Ծովախեցուց պատրաստված առարկաները (կախիկներ, ուլունքներ, բաժանարարներ, ներդիրներ, կնիքներ և այլն) մեծ խումբ են կազմում նաև Հայկական լեռնաշխարհի հարակից շրջանների մ.թ.ա. III-I հազ. հնագիտական հուշարձաններում: Ծովային ծագումը փաստում է, որ նշված առարկաներն այստեղ կարող էին մուտք գործել բացառապես առևտրի կամ փոխանակության միջոցով: Մասնագետների կարծիքով (Յ.Հունմել, Ջ.Գրիգորյան, Դ.Ռիզ) տեղից հայտնաբերված ծովախեցիները տարբերակվում են միջերկրածովյան (*Conus Ebraeus Linnaeus, Donax trunculus*) և պարսիցծովյան (*Cypraea, Engina, Arcularia gibbosula, dentalium, Unio* և այլն) ծագում ունեցող տեսակների: Միջերկրածովյան օրինակները հայտնաբերվել են Քարաշամբի, Ներքին Գետաշենի, Լճաշենի, Նորատուսի և Օշականի մ.թ.ա. 21/20-14/-13-րդ դդ. հնագիտական համադիրներից: Պարսիցծոցյան օրինակներն ունեն ավելի լայն ընդգրկում և հանդիպում են Արարատյան դաշտի, Շիրակի, Լոռվա, Սյունիքի և հատկապես Գեղարքունիքի ու Արցախի մ.թ.ա. 14/13-7/-6-րդ դդ. հուշարձաններից: Հանգամանք, որ առևտրա-փոխանակային հին կապերի վերականգնման համար կարևոր տեղեկություն է պարունակում:

2. Ծովախեցիներից պատրաստված առարկաների լայն կիրառությունը նպաստել է վերջիններիս դերի բարձրացմանը և, ինչպես նշում են մասնագետները (Բ.Բրենտյիս, Վ.Մասսոն), աստիճանաբար նրանց սոցիալական կարգավիճակի խորդիմանիշ դարձրել: Եվրոպայի (Վյուրտեմբերգ-Օֆենտ, Կուկուտենի, Տրիպոլյե) և Մերձավոր Արևելքի (Յաբ-րուդ, Նահալ-Օրեն, Այն-Ջաբրի, Էյման, Երիքով և այլն) մ.թ.ա. X-III հազ. հուշարձանների պեղումները վկայում են, որ այդ կարգավիճակը գերազանցապես առնչվել է կանանց հետ: Նույն երևույթը նկատվում է նաև Հայկական լեռնաշխարհի մ.թ.ա. II-I հազ. դամբարանային համալիրներում (Լճաշեն, Թալին, Այգեշատ, Նորատուս, Խաչակապ, Գետա-

բակ և այլն): Վերջիններիս ուսումնասիրությունը թույլ է տալիս ենթադրել, որ դրանցում թաղված կանայք տարբերվել են համայնքի մյուս անդամներից, իրավունք են ունեցել ծովախեցիներից զարդեր կրել և, հավանաբար, տվյալ հասարակության մեջ քրմուհիների կարգավիճակ են ունեցել:

3. Հյուսիսային Սիրիայի (Նուզի, Թել-Քուերա), Իրանական սարահարթի արևմտյան հատվածի (Սուրխ-Դում, Հասանլու) և Միջագետքի (Նինվե) մ.թ.ա. II-I հազ. տաճարական համալիրների պեղումները ցույց են տալիս, որ ծովախեցիներն ու դրանցից պատրաստված զարդերը խուրիների մեջ առնչվել են Շավուշկա, լուրիստանցիների մեջ՝ Նինլի, իսկ ասուրացիների մեջ՝ Իշտար դիցուհիների պաշտամունքի հետ: Ըստ ամենայնի, վերջիններիս համարժեք տեղական աստվածությանն են նվիրաբերված նաև Հայկական լեռնաշխարհի (Ղվին, Սառիթեփե) մ.թ.ա. I հազ. սկզբի ծիսական համալիրներից հայտնաբերված մեծաքանակ ծովախեցիները ևս:

4. Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ծովախեցե զարդերի ծիսական բնույթը վկայող տվյալներ պահպանվել են նաև միջագետքյան «Էնկին և Շումեր», հնդկական «Մահաբհարատա» և չինական «Ին և Յան» ավանդավեպերում, ինչպես նաև հունական Աֆրոդիտե, Պոսեյդոն և Տրիտոն աստվածությունների հետ կապված առասպելներում: Ըստ իս, նման պաշտամունքի հետքեր հնարավոր է նկատել նաև հայկական գրավոր սկզբնաղբյուրներում ու Արտամետի բանավոր ավանդության մեջ պահպանված՝ Շամիրամի հուռուքներին վերաբերող գրույցներում:

5. Հավատը ծովախեցիներին վերագրվող ծիսական, պահպանական և չարխափան հատկությունների նկատմամբ շատ ժողովուրդների մեջ պահպանվել է քրիստոնեության և մուսուլմանության մուտքից հետո ևս: Դրանով թերևս կարելի է բացատրել հայկական ազգագրական նմուշներում (թամբի ծածկոցներ, օրորոցներ, գլխազարդեր, կախիկներ, ուլունքներ և այլն) ծովախեցիների առկայությունը, որոնք հայերեն բարբառներում նաև «որոճ, որոճիք, ուրուճիք» անունն են կրում և հիշատակվում են որպես օտար երկրներից բերված առարկաներ («Ձայն որոճ՝ որ ի Մսրայ կուգայ»):

Ի մի բերելով թվարկված տվյալները՝ կարելի է արձանագրել, որ Հայկական լեռնաշխարհի և հարակից շրջանների մ.թ.ա. III-I հազ. հնագիտական հուշարձաններից հայտնաբերված ծովախեցիներն ու դրանցից պատրաստված առարկաները տարածաշրջանի հնագիտական, առասպելաբանական և ազգագրական ուսումնասիրության կարևոր սկզբնաղբյուր են:

ՆԱԴԱՊԵՏԻ ՖԵՆՈՄԵՆՆ ԸՍՏ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՄԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ
ՏՎՅԱԼՆԵՐԻ

1. Շուրջ մեկ հարյուրամյակ հայաստանում կատարվող հնագիտական հետազոտություններն ի հայտ են բերել մ.թ.ա. III-I հազարամյակներին վերաբերող և խմբային թաղումներ պարունակող դամբարանային համալիրների մի ստվար խումբ: Այդպիսի հուշարձաններ պեղվել են Արարատյան դաշտում (Երևան, Էլար, Մեծամոր), Շիրակում (Քեթի, Ոսկեհասկ, Հոռոմ), Գուգարքում (Բորչալու, Լոռի Բերդ), Սևանի ավազանում (Լճաշեն, Նորատուս, Սարուխան, Կարմիրգյուղ, Արծվաքար, Ակունք և այլն), Սյունիքում (Եղեգնաձոր), ինչպես նաև Արցախում (Ստեփանակերտ, Կարաբուլաղ, Բալլուկայա, Ախմախի, Առաջաձոր և այլն): Ափոսանքով պետք է արձանագրել, որ վերոհիշյալ դամբարանների զգալի մասը դամբարանացների ներքին դասավորության մանրամասների չգրանցման, ինչպես նաև հնամարդաբանական նյութի պահպանման, արժեքավորման և տեղեկատվական բացառիկ տվյալների անտեսման հետևանքով, փաստորեն զրկվել են էթնո-սոցիալական հետազոտությունների իրականացման հնարավորությունից: Այսօր, այդ առումով, կիրառելի են միայն Ն.Գետաշենի, Նորատուսի և Մոթբի ձորի դամբարանային համալիրները: Սրանք արևելք-արևմուտք կողմնորշում ունեն, շրջափակված են բազալտե քարաբեկորներից կազմված կրոնլեխներով և հիմնահողային կամ քարարկղային դամբարանացների կենտրոնով, կծկված վիճակում աջ կողքին պառկած կամ նստած տարեց (40 տարեկանից բարձր) տղամարդու կմախք են պարունակում, վերջինիս շուրջըլորը որոշակի հաջորդականությամբ նստած կամ պառկած մեջեջյալների ուղեկցությամբ: Ըստ որում, որպես օրենք, դամբարանախուց իջեցված գույքակազմի (խեցանոթներ, զենքեր, աշխատանքային գործիքներ, պեղճանքի առարկաներ և այլն) հիմնական մասն ու զոհաբերված կենդանիների մնացորդները զետեղված են տարեց տղամարդու կմախքի մոտ: Թաղման համախմբի նույն հարթության վրա տեղավորված լինելը, արտեֆակտների անխաթար վիճակը, խցի տարբեր հատվածներում դրված կավանոթների որակի, չափի, ձևի, պատրաստման և նախշազարդման մանրամասների նույնությունը, ինչպես նաև ողջ տեսարանի տրամաբանական փոխկապակցությունը վկայում են դամբարանացի հատակին միաժամանակյա ակտով կատարված թաղման մասին, իսկ հանգուցյալների կմախքների միմյանց

նկատմամբ ունեցած հիերարխիկ դասավորությունը թույլ է տալիս ենթադրել, որ նման դամբարաններում գործ ունենք տվյալ հասարակության մեջ որոշակի դիրք ու կարգավիճակ ունեցող տղամարդու «տիրոջ» և նրա ստորադասների (տղամարդիկ, կանայք, երեխաներ) թաղման արարողության հետ:

2. Քննարկվող դամբարաններում հայտնաբերված մարդաբանական նյութերի ներխմային ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ յուրաքանչյուր դամբանախցի գանգաբանական հավաքածուն խիստ համասեռ է և մատնանշում է ազգակցական մերձավոր կապ:

3. Հնագիտական և մարդաբանական վերոհիշյալ տվյալների համադրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ քննարկվող դամբարաններում գործ ունենք ազգակցական-արյունակցական կապերի առումով իրար մոտիկ անձանց մի խմբի հետ, որոնց ներկայացուցիչները, որպես թաղման նման արարողակարգի վաղօրոք ընտրված մասնակիցներ և անդրաշխարհի արդեն կանխորոշված ուղեկից-գոհեր, բռնությամբ (զուցե և ինքնակամ) սպանվել ու դամբանախուց են իջեցվել տոհմի կամ գերդաստանի «տիրոջ» մահվան առիթով: Հայաստանի Բրոնզի-երկաթի դարաշրջանների միաժամանակյա ակտով կատարված թաղումների պատմա-մարդաբանական այս վերակազմությունը, մեկնաբանությունների մակարդակով, կարող է համադրվել Մովսես Խորենացու կողմից նկարագրվող՝ հայոց Արտաշես թագավորի թաղման արարողության և վերջինիս ուղեկցող մարդկային ինքնակամ բազմաթիվ զոհաբերությունների փաստի հետ:

4. Նկատի ունենալով այն հանգամանքը, որ «տեր» բառը լիիմաստ չի արտահայտում խմբային թաղման տարեց տղամարդու բուն էությունը, սույն հաղորդման հեղինակները նպատակահարմար գտան նման անձանց դիրքն ու կարգավիճակը որակելու համար գիտական շրջանառության մեջ դնել «նահապետ» տերմինը: Վերջինս կազմված է «նահա»- (հնդիրանական «nafa», «nafo-», «պորտ, ցեղ») և «-պետ» (հնդեվրոպական «photi», «pet», «pat», «պետ, առաջնորդ, ավագ, մեծ, հայր, սկիզբ») արմատներից և, ըստ այդմ էլ, առավել ամբողջական է ներկայացնում խմբային թաղումների տիրոջ բարձր դիրքն ու գերդաստանի մեծի կարգավիճակը:

ՀԱՍԳԻՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՐԶ

1. ՆՅԲ-ի և ՀԱԲ-ի հավաստի մեկնություններն ունենալով ձեռքի տակ, այդուհանդերձ մասնագիտական գրականության հետ թռուցիկ ծանոթությունը երևան է բերում որոշակի աղճատումներ, դժվարություններ, հեղինակների կողմից անհատական մոտեցումներ հնագիտական տերմինաբանության նկատմամբ: Դրանք վերաբերում են տարբեր խնդիրների՝ թաղման ձևերին, հարդարանքին, ծեսերին, անոթների, առարկաների, զենքերի անվանումներին և այլն:

2. Հարցն ընդգրկում է և տևական ու բազմակողմանի ուսումնասիրության կարոտ: Հաղորդման մեջ աղբյուրագիտական նյութի վրա կաշխատենք ներկայացնել մեր դիտարկումները միայն զենքի երեք հիմնական տեսակների անվանումների վերաբերյալ: Դրանք են.

ա) Նիզակ-տեգ: Նիզակ անվանումը (մեծ նիզակը՝ գեղարդ) վերաբերում է ամբողջական զենքին (Խոր.36, Եղիշե 102, Փարպ.124,125 ևն, Սեբ.38): «Բռնալիր նիզակաբ», «նիզակ ամարի», «Գեղարդն ի բարձրամայր փայտից»: Մասնագիտական գրականության մեջ նիզակը նույնացվում է երբեմն ծայրապանակի հետ, որն աղբյուրներում հանդես է գալիս «տեգ» անվանումով. «Տեգ նիզակի» (Խոր.74, 43, 65,72 ևն, Բուզ.204, Կաղ. 31, Դրասխ. 152 գ.95, 322 ևն, Մխ.Ան, 16), «նիզակա-տեգ» (Փարպ. 152): Հանդիպում է նաև «բոլորատեգը» (Խոր.119, Մխ.Ան, 22): Տեգը զենքի տեսակ չէ, ինչպես ընդունված է ասել, այլ նիզակի մետաղական ծայրն է՝ «երկաթ նորա (նիզակի) սայրասուր որպես սլաք» (ՆՅԲ, II, 871), «նիզակի ծայրի սուր երկաթը» (ՀԱԲ, IV, 400):

Ընդունված է, որ տեգը նետից մեծ և նիզակից փոքր զենքն է: Քանի որ տեգը զինատեսակ չէ (միայն երկու դեպքում է հանդիպում «տեգը» առանձին /Խոր. 290, Դրասխ.220/ և մեկ դեպքում՝ «Տիգավորք», հնարավոր է, որ դրանք լինեն «աշտե» կոչվածը /Խոր.107, Արծ.133/):

բ) Նետ-սլաք: Աղբյուրներում նետը հանդես է գալիս արծակելու, ձգելու, հարկանելու գործողության հետ միասին (Փարպ. 44, 117, Սեբ.5, Դրասխ. 154, Հեթում 36, 37, 61 ևն): Նետի երկաթի ծայրն անվանվում է՝ «սլաք» («սլաք նետի» Խոր. 36, Բուզ.245, Սեբ.60, Դրասխ. 296, Արծ. 95): Թվում է, որ ճիշտ ձևը՝ նետի սլաքն է կամ նետասլաքը:

գ) Սուներ-սուր: Ձենքի այս տեսակը շատ հազվադեպ հանդիպող թրի հետ միասին ընկալվում է որպես նույն գործիքը կտրելու համար (ՀԱԲ, IV, 254): Սակայն աղբյուրների մանրագնին քննությունը երևան է

բերում որոշակի տարբերություններ: Նախ՝ սուսերը զենքի ամբողջական անվանումն է՝ «գործիս պատերազմական» (Մխ.Այր.28), որը բացի սովորական լինելուց նաև «պատուական» է (Ազ.22, Դրասխ.193), «իշխանական» (Արծ.223), «պողովատիկ» (Ազ.22) և «ընդ մեջ ածեալ» (Բուզ.194, Եղիշեն 177, Դրասխ. 293): Որպես կանոն, սուսերով չեն կտրում, հատում, հարկանում: Դա հանդիպում է միայն Փարպեցու մոտ (189, 218, 220):

Հետևելով պատմիչների վկայություններին՝ կարելի է եզրակացնել, որ սուրը սուսերի կտրող մասն է, շեղքը: «Սուր սուսերի» ձևը հանդես է գալիս տարբեր բառակապակցություններում (Ազ.29, Բուզ.116, 120 ևն, Խոր. 289, Ղևոնդ 25, 26, 40 ևն, Դրասխ.141, 224, 243 ևն, Մխ. Այր. 66, Մխ.Ան.45): Սուրը երկսայրի է (Ազ.326, Խոր. 36, Ղևոնդ 53, Դրասխ. 223, 248, Արծ.180) և աղբյուրներում հիշատակվում է միայն գործողություն ցույց տվող կապակցություններում. «սրով կոտորեցի» (Ղևոնդ 106), «սուրքս բթացան» (Ազ. 87, Եղիշեն 61) «սրով հատանել» (Եղիշեն.169, Դրասխ.240), «Ընդ սուր անցուցանեին» (Ղևոնդ, 7) և այլն:

us post quem non պետք է համարել ք.ա. I հազարամյակի սկիզբը, ելնելով այս բազմաշերտ հուշարձանի վաղ երկաթի դարաշրջանի ամրոց-սրբավայրի թվագրումից. սակայն, եթե հետագա պեղումները կհաստատեն այստեղ հնդեվրոպացիների ավելի վաղ ներկայություն, ապա անվանակոչության վաղեմությունը կորոշվի հնավայրի ստորին շերտի թվագրմամբ:

Գայանե Քոչարյան
ՀԱԻ

ԱՐՏԱՇԱՏԻ ՄԵՐՁՔԱՂԱՔԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆԵՐՈՒԺԸ

Հնագիտական նյութերը Ոստան Հայոց գավառում՝ Արտաշատի հյուսիսային թիկունքում, ուրվագծում են անտիկ դարաշրջանի բնակավայրերի խիտ ցանց: Եղիշենի բնութագրումները վկայում են Արտաշատն իր մերձքաղաքային տարածքով /խորա/ վարչատնտեսական մեկ ամբողջություն լինելու փաստը: Քաղաքի տնտեսական ներուժը պայմանավորված էր խորայի գրաված տարածքի չափերով և նրա արտադրական հզորությամբ: Արտաշատի դեպքում Ոստան Հայոց գավառը նման նպատակի հատկացածը՝ օրվա հրամայական պահանջ էր: Եթե մայրաքաղաքը օղակող երկրագործական գոտին կարող էր ամսիջականորեն կառավարել Արտաշատի համայնքը, ապա շուրջ 20կմ հեռավորության վրա գտնվող գյուղական բնակավայրերի կառավարումը իրականացնում էր Դվինը: Այս բնակավայրերի նկատմամբ անտիկ Դվինի ունեցած հավաքական, առաջնային դերը պայմանավորված էր

«Բուն պողոտայի» Վաղարշապատ-Արտաշատ հատվածի վրա գտնվելու, մայրաքաղաքի հյուսիսային մատույցները հսկող ամրոց-բնակավայր և տաճար սրբավայր զույգի, ինչպես նաև տնտեսական մեծ ներուժի համադրության անհամեմատելի գերադասելիության պարագայով:

Թեև այստեղ օրգանական մնացորդներ դրեթե չեն պահպանվել, սակայն արհեստագործական տարբեր ճյուղերի արտադրանքի ներկայությունը հնարավորություն է ընձեռում հաստատել այդ արհեստների գոյության փաստն ինքնին, ինչպես նաև ելնելով դրանց օգտագործման ոլորտից, բացահայտել տնտեսության այն բնագավառները, որոնց առկայությունը ուղղակիորեն վկայող հնագիտական նյութ չի պահպանվել: Սակայն այսօր արդեն կարելի է, գոնե հիմնական գծերով, ճշտել մայրաքաղաքի ու նրա խորայի փոխհարաբերությունների բնույթը, վերականգնել տնտեսավորման ընդհանուր պատկերը: Հնագիտական առկա իրերի, դրանց արտադրության վայրի, պատրաստման համար անհրաժեշտ միջոցների, կիրառման հնարավոր շրջանակների, քանակական ու որակական չափանիշների պատճառահետևանքային կապերի համեմատական վերլուծությամբ բացահայտվում են Արտաշատի խորայի տնտեսական գործունեության բնագավառները: Ռոռզելի բարեբեր այս հովտի բնակչությունը զբաղվում էր երկրագործությամբ /հացաբույսերի և ձիթատու բույսերի մշակում, խաղողագործություն/, անասնապահությամբ, թռչնաբուծությամբ և իր տնտեսությունը վարելուն անհրաժեշտ արհեստներով /խեցեգործություն, քարագործություն, մետաղագործություն, կաշեգործություն, ինչպես նաև զինեգործություն, ձիթագործություն/: Այստեղ կացութաձևը ինքնաբավ բնատնտեսային եղանակն էր, և սեփական արտադրանքի տեսականու պակասը լրացվում էր ապրանքափոխանակությամբ, գյուղատնտեսական մթերքի հավելյալ մասը մայրաքաղաքի շուկա վաճառքի հանելով:

Արտաշատի տարածքում բնակավայրերի հոծ ցանցի առկայությունը հիմք է տալիս կարծելու, որ նորաստեղծ մայրաքաղաքի համաբնակեցմանը /սինոյկիսմոս/ զուգընթաց, ք.ա. II դարում, կատարվել է և խորայի բնակավայրերի համաբնակեցում, թերևս նաև՝ նորերի հիմնում: Այս բնակավայրերի կառավարումը իրականացնում էր անտիկ Դվինը, որ քաղաքատիպ ավան էր՝ իր աշխարհագրական շահեկան դիրքով, ամրոց-սրբավայր ֆունկցիայի տևական համադրությամբ ու տնտեսական մշանակալի ներուժով: Արդեն IV դարում արքայանիստ դարձած Դվինի մերձակա գյուղերը աստիճանաբար միավորվեցին և կազմեցին քաղաքայնացող բնակավայրերի պարսպապատ թաղամասերը, իսկ մյուսները՝ նրա արվարձանները: Մայրաքաղաքի ֆունկցիան Դվինին անցնելուն զուգընթաց՝ Ոստան Հայոց գավառը դարձավ Դվինի մերձ-քաղաքային տարածքը և «Աշխարհացոյց»-ում վավերացվեց որպես Ոստան Դըւնոյ:

ՆՈՐ ԱՆԴՐԱԴՐՁ ԴԿԻՆ ՏԵՂԱՆՎԱՆԸ

1. Խորենացու վկայությամբ՝ քննվող հնավայրը «ըստ պարսկական լեզուին Դուին կոչի, որ թարգմանի բլուր»։ Սակայն հին ու նոր պարսկերենում ծնով ու նշանակությամբ համապատասխան որևէ բառ չի պահպանվել /Սեն-Մարտեն 1818, Ս.Տ.Մալխասյան 1940/։ Վ. Մինորսկին, ելնելով նույն աղբյուրից, այս տեղանունը համադրում է վրկանաց աշխարհի Gira-duvin, Lala-duvin, Sultan-duvin... տեղանունների հետ և Դվին բառը համարում ներմուծված Արշակունիների կողմից /Վ. Մինորսկի 1930/։

2. Զունարենում /div սեռ. divos «ավազաթումբ, հողաթումբ, թումբ»/ և կելտ-գերմանական բարբառներում /կիմբ., գալ. dun, «բլրակ, հողաբլուր», հին իռլ. dun «ամրոց», ստ. բրետոն. tun «բլուր», հին անգլ. dun «բարձունք, լեռ», tun «քաղաք».../ Դևիս d[h] eun-հիմքից ծագած բառերի իմաստները /Լ.Բյուզանդացի 1889, Գ.Ջահուկյան 1963/ ի մի բերելով և լրացնելով Թ.Գամկրելիձեի ու Վ. Իվանովի /1984/ բանաձևը՝ կունենանք «[ամրոց-] բնակավայր բարձունքի վրա»։

3. Բրոնզի ու երկաթի դարաշրջանների «ամրոց-բնակավայր բարձունքի վրա» բանաձևին համապատասխանող հուշարձաններ սփռված են արևելյան Իրանում /Յագդեպե, Եկենդեպե, Ուչթեփե.../, Դայաստանում /Մեծամոր, Էլառ, Աղթամիր, Արմավիր, Թիլքի-թեփե, Քորուջու-թեփե.../, Փոքր Ասիայում /Խաթ-թուսաս, Ալիշար, Տրոյա.../, Զոնաստանում /Երն, Դորիոն, Միքեն, Տիրինթոս.../, Եվրոպայի տարբեր շրջաններում /Սինգի-դունում, Մանխինգ, Բոհենբերգ, Վիտենբերգ, Բիբրակտե, Լուգդունում, Նովիոդունում.../։ Անշուշտ և՛ այս, և՛ գետախառնուրդի զառիթափ ափերով կազմված հրվանդանների վրա /հմտ. Գառնի/, գետափերի դարավանդներին /հմտ. Շենգավիթ/ բնակավայր տեղադրելու եղանակները հնդեվրոպական լեզուներով խոսող ժողովուրդների զբաղեցրած տարածքներից շատ ավելի լայն ընդգրկում ունեն, սակայն այժմ մեզ հետաքրքրող ոչ թե քաղաքաշինական գաղափարն է ինքնին, այլ Դվին տեղանվան ծագումն ու ժամանակի ընթացքում բառի կրած իմաստային փոփոխությունը։

4. Դվին հնավայրի բրոնզի ու երկաթի դարաշրջաններով թվագրվող ստորին շերտերը բնութագրելու համար հատկանշական է բանաձևի «ամրոց-սրբավայր բարձունքի վրա» տարբերակը /ելնելով բարձունքի վրա սրբավայրի առկայության հանրահայտ փաստից, հմտ. Մեծամոր, Սարի-Թեփե, Լուգդունում.../։

5. Վերը բերված հնավայրերից առանձնահատուկ ուշադրության է արժանի կելտական Lugdunum, Singidunum, Noviodunum, Dunum և այլ տեղանունների ըստ «բարձունք, քաղաք, ամրոց» բաղադրիչը, որն իր ծագմամբ ու իմաստով համահունչ է և՛ Դվին տեղանվանը, և՛ իրանական Gira-duvin, Lala-duvin... տեղանունների duvin բաղադրիչին: Այս հանգամանքը առավել համոզիչ է դարձնում Դուին /Դվին/ տեղանվան ՅՆԽ d[h] eun- հիմքից ծագած լինելու վարկածը:

6. Համադրելով համեմատական լեզվաբանության տեսական տվյալները և հնագիտության փաստացի նյութը՝ կարող ենք եզրակացնել.

ա. եվրոպական լեզուներում պահպանվել են ՅՆԽ վերականգնված d[h] eun-հիմքից բխող իմաստներ/ հոլլ. duin, ֆր. dune, իտալ., իսպ. duna, գերմ. Dune, ռուս. Դվն «ավազաթունք», անգլ. down «բլուր, անտառազուրկ բարձունք», town «քաղաք».../, ինչպես նաև գրավոր աղբյուրներում՝ որպես կելտական հնավայրերի տեղանվան բաղադրիչ /Lug \ dun \ um, Novio \ dun \ um.../:

բ. հայերենում Դուին բառի «բլուր» իմաստը մոռացված է եղել խորենացու ժամանակներից անհամեմատ առաջ, իսկ պարսկերենում duvin նույնիմաստ բառը՝ ավելի ուշ:

գ. պարսկերենում duvin բառը պահպանվել է որպես տեղանվան մեջ բնակավայրերի բլրի վրա գտնվելու հատկանիշը շեշտող բաղադրամաս /հմմտ. Sultān-duvin.../, բացառություն է կազմում Davin գյուղանունը /Ուստուվայում/:

դ. հայերենում պահպանվել է Դուին /Ոստան Հայոց գավառում/ և Դընիկ /Կարինի, Տարոնի և Երզնկայի գավառներում/ ձևերով՝ որպես բնակավայրի հատուկ անուն /հմմտ. Բլուր, Բլրակ, Բլրիկ անունով բազմաթիվ գյուղեր Մեծ

Հայքի տարբեր աշխարհներում, Աշտարակը՝ Արագածոտնում և ուրիշներ/, այս է հաստատում նաև Փավստոս Բուզանդի աներկբա հստակ վկայությունը «...բլուրն՝ որ անուանեալ կոչի Դուին»:

ե. քննվող հնավայրի Դուին /Դվին/ տեղանունը բխում է ՅՆԽ *d[h] eun-հիմքից, առանց իրանական միջնորդության և շուրջ մեկ հազարամյակ նախորդում է Արշակունիների պատմական ասպարեզ իջնելուն:

7. Սույն բլրի Դուին կոչվելու ամենահավանական terminus post quem ոտ պետք է համարել ք.ա. I հազարամյակի սկիզբը, ելնելով այս բազմաշերտ հուշարձանի վաղ երկաթի դարաշրջանի ամրոց-սրբավայրի թվագրումից. սակայն, եթե հետագա պեղումները կհաստատեն այստեղ հնդեվրոպացիների ավելի վաղ ներկայություն, ապա անվանակոչության վաղեմությունը կորոշվի հնավայրի ստորին շերտի թվագրմամբ:

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ


ԱՊՀ	Արցախի պետական համալսարան
ԵՊՀ	Երևանի պետական համալսարան
ՀԱԻ	Հնագիտության և ազգագրության ինստիտուտ
ՀՀՀԳԽ	Հայկական հուշարձանների համահավաքի գլխավոր խմբագրություն
ՄԷԱԻ	Միքենի և Էգեա-Անատոլիական ուսումնասիրությունների ինստիտուտ (Հռոմ)
ՇԵԹ	Շիրակի երկրագիտական թանգարան
ՇՀՀԿ	Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
ՊԻ	Պատմության ինստիտուտ


СОКРАЩЕНИЯ

АГУ	Арцахский государственный университет
ГРСАП	Главная редакция свода армянских памятников
ЕГУ	Ереванский государственный университет
ИАЭ	Институт археологии и этнографии
ИБ	Институт ботаники
ИИ	Институт истории
ИМЭАИ	Институт Микене и Эгеа-Анатолийских исследованиях
ПИ	Педагогический институт
ШКМ	Ширакский краеведческий музей
ШЦАИ	Ширакский центр арменоведческих исследований

УЧЕНИК

Համակարգչային շարվածքը կատարված է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության
ինստիտուտի մեքենայական մշակումների լաբորատորիայում















[30077]

A π
85039